ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА

МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ, ПОЛИТОЛОГИЯ

BULLETIN OF YEREVAN UNIVERSITY

INTERNATIONAL RELATIONS, POLITICAL SCIENCE

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ
SOCIAL SCIENCES

№ 2 (20)

ԵՐԵՎԱՆ - 2016

«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»

«БАНБЕР ЕРЕВАНИ АМАЛСАРАНИ. МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ, ПОЛИТОЛОГИЯ»

«BANBER YEREVANI HAMALSARANI. INTERNATIONAL RELATIONS, POLITICAL SCIENCE»

Գլխավոր խմբագիր՝ **Միրզոյան Հ. Ղ.**

Խմբագրական խորհուրդ.

Ագլյան Վ. Ռ., Ալեքսանյան Ա. Ս. *(պատասխ. խմբագիր),* **Ավետիսյան Լ. Վ.** *(գլխ. խմբագրի տեղակալ),* **Բայբուրդյան Վ. Ա., Գոնչար Ն. Ա.** *(գլխ. խմբագրի տեղակալ),* **Ենգոյան Ա. Փ., Հովակիմյան Ա. Է.** *(պատասխ. քարտուղար),* **Պետրոսյան Գ. Հ., Սաֆարյան Ա. Վ., Սիմոնյան Ա. Հ., Վարդազարյան Մ. Ե., Վարդանյան Լ. Գ., Քեռյան Գ. Մ.**

Главный редактор: **Мирзоян Г. К.**

Редакционная коллегия:

Аветисян Л. В. *(зам. главного редактора),* **Аглян В. Р., Алексанян А. С.** *(ответ. редактор),* **Байбурдян В. А., Варданян Л. Г., Вардазарян М. Е., Гончар Н. А.** *(зам. главного редактора),* **Енгоян А. П., Керян Г. М., Овакимян А. Э**. *(ответ. секретарь),* **Петросян Г. А., Сафарян А. В., Симонян А. Г.**

Editor-in-chief: **Mirzoyan H. Gh.**

Editorial Board:

Aglyan V. R., Aleksanyan A. S. *(Managing Editor),* **Avetisyan L. V.** *(Deputy editor-in-chief)***, Bayburdyan V. A., Gonchar N. A.** *(Deputy editor-in-chief),* **Hovakimyan A. E.** *(Executive Secretary),* **Keryan G. M., Petrosyan G. H., Safaryan A. V., Simonyan A. H., Vardanyan L. G., Vardazaryan M. E., Yengoyan A. P.**

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ (1917 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐ - 1918 Թ. ՓԵՏՐՎԱՐ)

ԳԵՂԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ

1917 թ. բոլշևիկյան հեղաշրջումը նոր ցնցումներ առաջացրեց Ռուսաստանում. երկրի պառակտման լուրջ սպառնալիք էր ստեղծվել: Ճիշտ է, փետրվարյան հեղափոխությունը մերժում էր միապետությունը, սակայն այդ շրջանում Ռուսաստանի միասնությանը դեռևս լուրջ վտանգ չէր սպառնում: Իշխանությունը գրաված բոլշևիկների ծայրահեղականությունն ու անհանդուրժողականությունը երկիրը մղեցին քաղաքացիական պատերազմի՝ Ռուսաստանը բաժանելով ազդեցության առանձին գոտիների: Այդ առնչությամբ Ռուբեն Տեր-Մինասյանը գրում է. «… այն ժամանակ կային երեք Ռուսաստան՝ Դենիկինի, Կոլչակի, Լենինի: Երեքն ալ համահավասար ուժեղ, երեքն ալ նոյնքան հավակնություններ ունէին, որ տերը պիտի դառնան ամբողջական Ռուսաստանի, բայց երեքն ալ միմյանց թշնամի»[1]: Հոկտեմբերյան հեղաշրջմամբ բոլշևիկները հրաժարվեցին Փետրվարյան հեղափոխության և Ժամանակավոր կառավարության հռչակած ժողովրդավարական արժեքներից ու զարգացման հեռանկարներից:

Երկրամասի ազգային-քաղաքական հիմնական ազդեցիկ ուժերն ու կուսակցությունները հեղաշրջումն ընդունեցին որպես դավաճանություն և հրաժարվեցին ճանաչել բոլշևիկների իշխանությունը: Թեև Կովկասը դե յուրե դեռևս Ռուսաստանի մաս էր համարվում, սակայն գոյատևում էր ինքնուրույն և գրեթե անկախ: Կովկասի հետ միասին Ռուսաստանից կտրված սկսեց ապրել նաև հայ ժողովուրդը:

Հեղաշրջումը, բնականաբար, քաղաքական իրավիճակի էական փոփոխություններ բերեց նաև Անդրկովկասում: Ստեղծված նոր պայմաններում Անդրկովկասի կայունության պահպանման միակ ուղին և երաշխիքը քաղաքական կողմնորոշումն էր դեպի Ժամանակավոր կառավարությունը և տեղական ինքնակառավարման խելամիտ կազմակերպումը մինչև Սահմանադիր ժողովի հրավիրումը: Քանի որ Անդրկովկասյան հատուկ կոմիտեն Փետրվարյան հեղափոխությանը հաջորդած ութ ամիսների ընթացքում չէր կարողացել հաստատել կառավարման կայուն

[1] **Ռուբէն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Ե հատոր, Թեհրան, 1982, էջ 262:

վարչակարգ, անհրաժեշտություն առաջացավ ստեղծելու Անդրկովկասի նոր իշխանություն: Անդրկովկասի ազգային-քաղաքական ուժերի և կուսակցությունների միջև ձեռք բերված համաձայնությամբ, առանց լուրջ տարաձայնությունների, Հատուկ կոմիտեն 1917 թ. նոյեմբերի 15 (28)-ին Թիֆլիսում իշխանությունը փոխանցեց նոր կառավարությանը՝ Անդրկովկասյան կոմիսարիատին, որին էր հանձնվում ամբողջ Անդրկովկասի գերագույն իշխանությունը[2]:

Կառավարությունը կազմվելու էր ազգային ներկայացուցչականության սկզբունքով, սակայն վրաց մենշևիկները, լավագույնս դասեր քաղելով Փետրվարյան հեղափոխությունից, քաղաքական պայքարից մեկուսացրին «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցությանը, շատ արագ ստանձնեցին կոմիսարիատի առանցքային պաշտոնները և իրենց գերիշխող դերն ապահովեցին վրացի մենշևիկ Ե. Գեգեչկորու գլխավորությամբ[3]: Վերջինս՝ որպես կոմիսարիատի նախագահ, միաժամանակ ստանձնեց արտաքին հարաբերությունների ու աշխատանքի նախարարությունների կոմիսարների պաշտոնները: Կառավարությունում հայերին տրվեցին արտաքին հարաբերությունների նախարարության գծով կոմիսարի քարտուղարի (Միք. Թումանյան) և երեք նախարարության՝ ֆինանսների (Խ. Կարճիկյան), պարենավորման (Գ. Տեր-Ղազարյան), խնամատարության (Հ. Օհանջանյան) կոմիսարների պաշտոնները: Երեք օր անց Անդրկովկասյան կոմիսարիատը երկրամասի ժողովուրդներին ուղղված իր առաջին ուղերձում կոչ արեց համատեղ ուժերով լուծել ներքին և արտաքին երեք կարևոր խնդիրներ՝ 1.Սահմանադիր ժողովի հրավիրում, 2.ազգային հարց, 3.Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի կնքում:

Սակայն նոր կառավարությունը ի վիճակի չեղավ որևէ դրական փոփոխություն բերելու երկրամասի թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականության բնագավառներում: Այդ ժամանակաշրջանում ազգամիջյան բախումները էլ ավելի սուր բնույթ ստացան: Բացահայտ էին հայ ժողովրդի շահերը ոտնահարող վրաց-թաթարական անզիջում գործողությունները: Հայերի, վրացիների և կովկասյան թաթարների հակամարտության և տարակարծության պատճառները գլխավորապես այդ ժողովուրդների քաղաքական տարբեր կողմնորոշումների ու ազգային-տարածքային սահմանների հարցերն էին:

Անդրկովկասյան կոմիսարիատը երկրամասի ժողովուրդներին ուղղված իր առաջին կոչում թեև հայտարարում էր, որ որդեգրած լինելով ռուսական հեղափոխության հայտարարած ազգությունների կատարյալ ինքնորոշման տեսակետը՝ կոմիսարիատը միջոցներ ձեռք կառնի շուտափույթ և արդարացիորեն վճռելու Անդրկովկասի ազգա-

---

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 498, թ. 39:

[3] Տե՛ս **Վ. Մելիքյան**, Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում. Անդրկովկասյան կոմիսարիատի գործունեությունը և հայ իրականությունը, Եր., 2010, էջ 247:

յին խնդիրը[4], սակայն նրա առաջին իսկ քայլերը նոր դժվարություններ ստեղծեցին: Նոյեմբերի 24-ին հրապարակված դեկրետով, որի հեղինակը ներքին գործերի կոմիսար Ա. Չխենկելին էր, Անդրկովկասում մտցվում էին զեմստվոներ՝ ինքնակառավարման տեղական մարմիններ, բայց միայն այն նահանգներում ու գավառներում, որտեղ ազգային հատկանիշներով սահմանների վերանայման խնդիր չկար: Դեկրետի ծանոթագրությունում նշվում է, որ վարչական սահմանների տեսակետից անվիճելի են ճանաչվում Բաքվի, Քութայիսի և Սև ծովի նահանգները, Բաթումի և Դաղստանի շրջանները, Սուխումի և Զաքաթալայի գավառները, Թիֆլիսի նահանգի Թիֆլիսի, Աղնաղի, Թելավի, Թիոնեթի Դուշեթի, Գորու և Ախալցխայի գավառները, Կարսի շրջանի Արդահանի և Օլթիի գավառները:

Դեկրետում միաժամանակ ամրագրված էր, որ դրա հրապարակման օրից մեկ ամսվա ընթացքում Անդրկովկասյան կոմիսարիատը վիճելի նահանգներում և գավառներում կատարելու է վարչական սահմանների բաժանում՝ նոր հաստատված տարածքներում ստեղծելով զեմստվային հաստատություններ[5]: Ըստ դեկրետի, փաստորեն, սահմանների տեսակետից վիճելի էին ճանաչվում Երևանի նահանգը, Գանձակի նահանգի Գանձակի, Ղազախի, Ջիվանշիրի, Շուշիի, Զանգեզուրի և Կարեագինոյի գավառները, Թիֆլիսի նահանգի Ախալքալաքի և Բորչալուի գավառները[6]: Վիճելի էին հայտարարված նաև մյուս նահանգների բոլոր այն գավառները, որոնցում հայերը բացահայտ մեծամասնություն էին:

Դեկրետով ամրագրված վրաց-թաթարական համագործակցությունը և հարձակողական մարտավարությունը խոչընդոտում էին հայերի տարածքային հնարավորությունները: Ըստ այդմ՝ դեկրետը նոր վեճերի և առճակատումների առիթ տվեց. էլ ավելի սրվեցին հայ-վրացական ու հայ-թաթարական հարաբերությունները: Այդ առիթով Ռ. Տեր-Մինասյանը գրում է. «… մի ամանի մեջ ամփոփուած երեք ժողովուրդները մնում էին իրարու հակառակ եւ նույնիսկ թշնամի»[7]:

Այդ ներքին հակասություններին ու հակամարտություններին շուտով միացավ նաև արտաքին ճնշումը Օսմանյան կայսրության կողմից: Անդրկովկասյան կոմիսարիատի ստեղծումից երկու օր անց Կովկասյան ռամաճակատի թուրքական բանակի հրամանատար Ֆերիք-Մահմեդ փաշան նամակ-առաջարկով դիմեց ռուսական զորքերի գլխավոր հրամանատար, գեներալ Մ. Պրժևալսկուն՝ առաջարկելով՝ «հանուն մարդասիրության եղբայրասպան պատերազմին վերջ տալու նպատակով» կնքել զինադադար: Քողարկելով զինադադարի առաջարկի իրա-

---

[4] Տե՛ս «Հորիզոն» լրագիր, 19 նոյեմբերի 1917 թ., Թիֆլիս:
[5] Տե՛ս «Աշխատավոր» լրագիր, 2 դեկտեմբերի 1917 թ., Թիֆլիս:
[6] Տե՛ս նույն տեղը, նաև՝ **Վ. Մելիքյան**, նշվ. աշխ., էջ 137:
[7] **Ռուբէն**, նշվ. աշխ., էջ 134:

կան դրդապատճառներն ու նպատակները՝ թուրքական հրամանատարությունը դրանով ցանկանում էր շարունակել վաղօրոք մշակված իր ռազմատենչ ու զավթողական պլանները: Դեպի Կովկաս ռազմական արշավանք ծավալելու համար օսմանյան բանակին անհրաժեշտ էր ժամանակ շահել և կենտրոնացնել ուժերը: 1917 թ. նոյեմբերի 21-ին (դեկտեմբերի 4) զինադադարի կնքման առաջարկը դրվեց Անդրկովկասյան կոմիսարիատի քննության[8] և որոշվեց «ընդառաջ երթալ այս առաջարկին», ուստի ռազմաճակատի զորավար Վիշինսկուն հանձնարարվում է, համաձայն իրեն տրված լիազորությունների, սկսել զինադադարի բանակցություններ[9]: Դեկտեմբերի 5-ին (18) ստորագրվեց Երզնկայի (Երզինջանի) պայմանագիրը[10], որով պատերազմող կողմերի միջև հաստատվում էր սահմանող գիծ Սև ծովից մինչև Վանա լիճը[11]: Մինչև զինադադարի կնքումը՝ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, Կովկասյան ճակատի առանձին զորամասերում սկսվել էին ռազմաճակատի քայքայումը և դասալքությունը:

Այդ առիթով ականատես Ա. Խաչատրյանը գրում է. «Ռուս յոգնած և բարոյալքուած բանակը փոխանակ պահելու իր դիրքերը, սպասելով վերջնական հաշտութեան, կը լքէ իր դիրքը և «դէպի տուն» նշանաբանով կը դիմէ դէպի Ռուսաստան: Այս քայքայումն ինքնին արդէն մեծ վտանգ մըն էր Հայաստանին ու հայ ժողովուրդին: Վերադարձող զօրքը ոչ միայն կոչնչացնէր շատ բան, այլ, որ աւելի վատթարն է, իրենց մթերքը կուտային թուրքերուն և զենքը՝ քիւրտերուն:

Այսպէս, ճակատը կը պարպուէր ռուս զինուորներէն և երկրի պաշտպանութիւնը կը յանձնուէր հայերուն»[12]: Վտանգի տակ էին հայտնվում ոչ միայն պատերազմի ընթացքում ռուսական զորքերի գրաված Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթները, այլև ողջ Արևելյան Հայաստանը: Հայությունը կրկին հայտնվում է ֆիզիկական ոչնչացման սպառնալիքի առաջ:

Երզնկայի զինադադարից հետո Կովկասյան ճակատի (այն ձգվում էր Տրապիզոնից մինչև Ուրմիա լիճ՝ 750 կիլոմետր երկարությամբ) ռուսական զորքերի լքումը զանգվածային բնույթ ստացավ: Ճակատը դատարկվում էր արագորեն, և թուրքական ներխուժման վտանգն ավելի ու ավելի իրական էր դառնում: Ճակատը լքածներին փոխարինում էին նոր կազմավորվող հայկական ազգային զորամասերը, որոնք որևէ տեղից օգնություն ստանալու հույս չունեին: Հայոց ազգային (կենտրոնական) խորհրդի որոշմամբ ձևավորվեց 50-հազարանոց գունդ՝ գեներալ

---

[8] Տե՛ս **Վ. Մելիքյան**, նշվ. աշխ., էջ 145-181:

[9] Տե՛ս **Ա. Խաչատրյան**, Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, Հայաստանի ազգային արխիվ, Եր., 2010, էջ 67:

[10] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4004, ց. 3, գ. 29, թ. 121:

[11] Տե՛ս «ՎԷՄ» ամսագիր, Փարիզ, 1934, մարտ-ապրիլ, էջ 82:

[12] **Ա. Խաչատրյան**, նշվ. աշխ., էջ 68:

Թ. Նազարբեկյանի հրամանատարությամբ[13], որի առաջնահերթ առաքելությունն էր պաշտպանել Արևմտյան Հայաստանը: Այդ օրերին զնալով աճում էր Հայոց ազգային (կենտրոնական) խորհրդի հեղինակությունը: Նա համարձակ ու եռանդուն կերպով համախմբեց հայոց բոլոր ուժերը՝ դիմակայելու ներքին ու արտաքին թշնամուն ու նաև փորձելու արագ զարգացող դեպքերի ընթացքը շրջել հնարավորինս ի նպաստ հայերի: Վրացական ուժերի դիմադրությունը անհուսալի էր, քանզի ձևական բնույթ ուներ, թեև վտանգը նրանց էլ էր սպառնում: Այդ առիթով Լ. Շանթը գրում է. «Վրաստանը չէ կրած, մասնաւորապէս, օսմանեան թուրքերու լուծը, եւ չէ ենթարկուած այն անձանց մոլեգնոտ գազանութիւններուն ու ոչնչացման, ինչպէս հայերս ենք եղած:

Եւ այս իրողութեան հետեւանքն այն է, որ ոչ միայն անոնք չունեին թուրքի ատելութիւնը, այլ եւ մեծ վախ մը չունին Թուրքիայի կովկասեան ձգտումներու սպառնալիքէն, նոյնիսկ կը հաւատան, որ հիմա իսկ Թուրքիայի հետ կապուելով կրնան ազատուիլ ռուսներու ճանկէն: Եւ ատոր համար ալ մշտական յարաբերութեան, բաց ու ծածուկ համաձայնութիւններու եւ առուտուրի մէջ էին Թուրքիայի հին ու նոր վարիչներուն հետ, թէ պատերազմի նախօրեակին, թէ պատերազմի ելեւէջներու միջոցին, թէ զինադադարի շրջանին»[14]: Կովկասյան թաթարները ոչ միայն չէին պատրաստվում կռվի մասնակցել, այլև անհամբերությամբ սպասում էին ցեղակից թուրքական բանակի օր առաջ ժամանելուն: Ռուբեն Տեր-Մինասյանը դեռ 1917 թ. նոյեմբերի 27-ին (դեկտեմբերի 9) Հայոց ազգային (կենտրոնական) խորհրդում ասել էր. «Զինադադարը միջոց է, որով աշխատում են (թուրքերը - Գ. Պ.) Կովկասի թաթարներին ոտքի հանել»: Նրանք թուրքերի ներխուժման ու հաղթանակի մեջ էին տեսնում իրենց ազգային-քաղաքական տենչերի իրականացումը: Ա. Խաչատրյանը գրում է. «Կովկասի թաթարների վերաբերմունքը Կովկասի գործերում սկզբէն սկսած շատ որոշ է, մարդիկ վրացիներու պէս չեն թաքցներ իրենց մտադրութիւններն ու ձգտումները, որ է. նախ՝ միանգամ ընդմիշտ անջատուել Ռուսաստանէն և երկրորդ՝ յառաջապահն դառնալ օսմաններուն՝ Կովկասին տիրելու համար: Այս երկրորդ կէտի իրագործման համար անհարժեշտ էր մէջ տեղէն վերցնել հայերու յարուցած արգելքը, որ կրնայ կատարուել հայերու ջախջախումով և բնաջնջումով, որ և օսմաններուն ալ բուն նպատակակէտն էր և անոնց կողմէն թելադրուած թաթարներուն: Հոս ուրեմն Կովկասի թաթարներն ու օսմանեան թուրքերը կը միանան իրարու ընդհանուր համաթուրք իդեալին շուրջ»[15]:

Օսմանյան կառավարությունը Երզնկայի զինադադարը և Կովկասյան ճակատի ռուսական զորքերի հեռանալը ճարպկորեն օգտա-

---

[13] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, մաս II, թ. 465:

[14] **Լ. Շանթ**, Մեր անկախութիւնը, Եր., 2011, էջ 136:

[15] **Ա. Խաչատրյան**, նշվ. աշխ., էջ 64:

գործեց իր ռազմատենչ ու զավթողական պլանները իրականացնելու համար: Ստեղծված նպաստավոր պայմանները նա փորձեց օգտագործել երկու հիմնական՝ **դիվանագիտական և ռազմական** ճանապարհով: Մեծ խորաթափանցություն պետք չէր հասկանալու համար թուրքերի ակնհայտ մտադրությունը. դիվանագիտական բանակցային գործընթացների մարտավարությունը մղելով առաջին պլան՝ նախ փորձում էին ժամանակ շահել թուրքական թուլացած բանակի ուժերը համախմբելու և համալրելու համար, իսկ մյուս կողմից՝ ուշադրությունը շեղել, մոլորության մեջ գցել, թուլացնել երկրամասի ժողովուրդների, մասնավորապես հայության զգոնությունը և դիմադրողական ոգին: Թուրքերը, ինչպես հետագա դեպքերը ցույց տվեցին, որդեգրել էին դիվանագիտական բանակցությունները ռազմական հաջողություններով ամրապնդելու քաղաքականությունը, որը նրանք կիրառեցին նաև Հայաստանի նկատմամբ: Առաջ անցնելով նշենք, որ այս ռազմավարությունը արդարացրեց իրեն. Թուրքիան, բռնազավթելով հայկական տարածքները, ճնշում գործադրելով հայ-թուրքական դիվանագիտական բանակցային գործընթացների վրա (1918 թ.՝ Տրապիզոն, Բաթում, 1920 թ.՝ Ալեքսանդրապոլ և այլն), յուրացրեց Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթները և Արևելյան Հայաստանի զգալի մասը:

Երզնկայի զինադադարի կնքումից մի քանի օր հետո թուրքական կառավարությունը դիմեց Անդրկովկասյան կոմիսարիատին՝ հաշտության բանակցություններ սկսել: Ուշագրավ է թուրքական կողմի խորամանկ հարցադրումը, թե՝ «Ի՞նչ կը մտածէ Անկախ Անդրկովկասի կառավարութիւնը հաշտության պայմաններու մասին Թուրքիոյ հետ», և թե՝ «Էնվեր փաշան մտադիր է անկախ Անդրկովկասի մայրաքաղաքը ղրկել պատուիրակներ հաշտության դաշնագիր կնքելու համար»: Ալ. Խատիսյանը, անդրադառնալով երկու անգամ կրկնված «անկախ» արտահայտությանը, գրում է. «… տաճիկները կուզէին ներշնչել կովկասեան իշխանութեան, թէ իրենք կը կամենան գործ ունենալ միմիայն անկախ կառավարութեան մը հետ: Տաճիկներու համար անկախ Կովկասը բաղձալի պատնեշ մըն էր Թուրքիոյ եւ Ռուսիոյ միջեւ: Թիֆլիսի մէջ այդ բանը զգացին, բայց դեռ ոչ ոք չէր ուզեր բացայայտօրէն խօսիլ Ռուսիայէն անջատուելու մասին: Յամենայն դէպս ուշադրութեան արժանի է, որ անկախութեան գաղափարը եւ այդ գաղափարի հրահրումը եկան Թուրքիայէն»[16]:

Անդրկովկասյան կոմիսարիատի մի քանի նիստերում ծավալված բուռն քննարկումներից հետո որոշվեց թուրքական կողմին հայտնել, որ հաշտության կնքման առաջարկի վերջնական պատասխանը հայտնելու են երեք շաբաթից՝ Սահմանադիր ժողովի որոշումները ստանալուց, Ռուսաստանի բոլոր կառավարությունների հետ խորհրդակցելուց

[16] «Հայրենիք», ամսագիր, Բոստոն, 1924, փետրվար, էջ 110-111:

և նրանց կարծիքը իմանալուց հետո: Սակայն կոմիսարիատը դեռ տեղյակ չէր, որ բոլշևիկները հունվարի 5-ին (18) ցրել էին Սահմանադիր ժողովը: Մինչև կոմիսարիատի պատասխանն ստանալը թուրքական բանակը Մեհմեդ Վեհիբ փաշայի հրամանատարությամբ, խախտելով Երզնկայի զինադադարը, 1918 թ. հունվարի վերջին հարձակման անցավ ճակատի ամբողջ երկայնքով՝ շարժվելով դեպի Անդրկովկաս: Ռուս-թուրքական պատերազմը վերածվում է թուրք-անդրկովկասյան պատերազմի (հիմնական ծանրությունն ընկած էր հայկական ուժերի վրա: Վրացիների մասնակցությունը չնչին էր, իսկ մուսուլմանական դիվիզիան ընդհանրապես չէր մասնակցում): Թուրքերը հարձակման պատրվակ էին բռնում հայերի կողմից Արևմտյան Հայաստանում թուրք ազգաբնակչության նկատմամբ իբր կիրառվող հետապնդումներն ու բռնությունները[17]: Մեհմեդ Վեհիբ փաշան «… ընդարձակ գրութեամբ մը կդիմէ ռուս հրամանատար Օդիշելիձէին, - գրում է Ա. Խաչատրյանը, - թուելով այն բոլոր սպանութիւններն ու բռնութիւնները իսլամներու վրայ, որ իբր թէ հայերը կը կատարեն Երզնկայի մէջ և իր շրջանում: Հակառակ զօրավար Օդիշելիձէի հերքումին, թէ հայերու գործած բռնութիւններու մասին իր ստացած բոլոր տեղեկութիւնները խիստ չափազանցուած են եւ բնաւ չեն համապատասխանէր իրականութեանը (փետրուար 12), Վեհիբ փաշան կը հեռագրէ, թէ իր բանակը յառաջ կը քալէ օգնութեան հասնելու նահատակուող իսլամներուն և այլն»[18]:

Այդ հաղորդագրությունից ակնհայտ է դառնում նաև, թե ինչպիսի խորամանկությամբ էր Մեհմեդ Վեհիբ փաշան փորձում կովկասյան թաթարներին ոտքի հանել հայերի դեմ: Այս ամենն էլ ավելի լարեցին և խորացրին թշնամական հարաբերությունները հայերի և կովկասյան թաթարների միջև:

Չափազանց բարդ ու լարված ռազմաքաղաքական նոր իրադրության պայմաններում 1918 թ. փետրվարի 10-ին (23) Թիֆլիսում գումարվեց Անդրկովկասյան սեյմը (օրենսդիր մարմին, պառլամենտ), որը ընդունեց կոմիսարիատի հրաժարականը և նրա փոխարեն կազմեց նոր կառավարություն՝ բաղկացած զանազան նախարարություններից[19]: Այս իրողությամբ, փաստորեն, Անդրկովկասն անջատվեց Ռուսաստանից, սակայն համապատասխան հայտարարություն չարվեց. շարունակում էին Անդրկովկասը համարել Ռուսաստանի մի մասը: Անդրկովկասյան սեյմը ձևավորվեց ազգային ու քաղաքական շահերով խիստ հակադիր երեք առավել ազդեցիկ՝ վրաց-մենշևիկյան, Հայ հեղափոխական դաշնակցություն և թաթար մուսաֆաթ կուսակցությունների ներկայացուցիչների փոխհամաձայնությամբ:

---

[17] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 5-7:
[18] **Ա. Խաչատրյան**, նշվ. աշխ., էջ 69:
[19] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 498, թ. 39:

Փետրվարի 15-ին (28) Անդրկովկասյան սեյմը թուրքերի առաջարկների և երկրամասի ռազմական ու քաղաքական իրավիճակի հարցերի բազմակողմ և բուռն քննարկումներից հետո որոշեց ինքնուրույն դիվանագիտական բանակցություններ սկսել ոչ միայն Թուրքիայի, այլ նաև վերջինիս դաշնակից Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Բուլղարիայի հետ միաժամանակ[20]: Նույն օրը Սեյմը այդ որոշման մասին հեռագրով տեղեկացրեց Մեհմեդ Վեհիբ փաշային[21]: Ռուսական քաղաքական շրջաններում մեծ վրդովմունքով ու զայրույթով ընդունեցին թուրքերի հետ հաշտության դիվագիտական բանակցություններ սկսելու Անդրկովկասյան սեյմի հայ անդամների համաձայնությունը: Սեյմի հայ անդամ Ալ. Խատիսյանը այդ առիթով գրում է. «… անոնք (ռուսները - Գ. Պ.) կը մոռնային, որ ոչ թէ մենք էինք Ռուսիայէն հեռացեր, այլ ինքը Ռուսիան էր լքեր մեզ»[22]:

Թուրքիայի հետ դիվանագիտական բանակցություններ վարելու նպատակով սեյմի ձևավորած հանձնաժողովը մշակեց հաշտության գլխավոր հիմնադրույթները, որոնք հաստատվեցին փետրվարի 16-ի (մարտի 1) նիստում: Դրանք էին.

1. Ստեղծված իրադրության պայմաններում Անդրկովկասյան սեյմը իրեն իրավազոր էր համարում Թուրքիայի հետ կնքել հաշտություն (սա պարունակում էր բոլշևիկյան Ռուսաստանից անջատվելու սաղմեր):

2. Ձեռնամուխ լինելով հաշտության բանակցություններին՝ Անդրկովկասյան սեյմն իր առջև խնդիր էր դրել Թուրքիայի հետ կնքել վերջնական հաշտություն:

3. Կնքվելիք հաշտության պայմանագրի հիմքում պետք է դրվեր նաև ռուս-թուրքական պետական այն սահմանների վերահաստատումը, որոնք գոյություն ունեին մինչև Առաջին աշխարհամարտը:

4. Պատվիրակությունը ձգտում էր Արևելյան Անատոլիայի ինքնորոշմանը, մասնավորապես Արևմտյան Հայաստանի ինքնավարությանը՝ թուրքական պետականության շրջանակներում[23]:

Թիֆլիսի Հայոց ազգային (կենտրոնական) խորհրդի ընդունած՝ «հայերի առավելագույն պահանջները» հիմնականում բխում էին Անդրկովկասյան սեյմի առաջարկություններից՝ մասնակի տարբերություններով:

Դիվանագիտական բանակցությունների վայր ընտրվեց Տրապիզոնը (որպես չեզոք գոտի): Փետրվարի 16-ի նույն նիստում հաստատվեց նաև Անդրկովկասյան խաղարար պատվիրակության կազմը, որում որպես հայ ժողովրդի ներկայացուցիչներ ընդգրկվեցին Ալ. Խատիսյանը, Հ. Քաջազնունին և Մ. Թումանյանը (պատվիրակության քարտու-

---

[20] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 32-34:

[21] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4004, ց. 3, գ. 29, թ. 122-123:

[22] **Ալ. Խատիսեան**, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Աթենք, 1930, էջ 24:

[23] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 43, նաև՝ «Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии». Тифлис, 1919, էջ 83-84:

ղար): Նրանց խորհրդականներն էին Լեոն (Հայկական հարցի գծով), Ռուբեն Տեր-Մինասյանը (ռազմական գծով) և Մ. Բունիաթյանը (ֆինանսական գծով): Հաջորդ օրը՝ փետրվարի 17-ին, Անդրկովկասյան սեյմի հաշտության պատվիրակությունը, ըստ Թուրքիայի հետ ձեռք բերած նախնական համաձայնության, ներքին գործերի կոմիսար Ա. Չխենկելիի գլխավորությամբ մեկնեց Տրապիզոն և տեղ հասավ փետրվարի 23-ի (մարտի 8) երեկոյան[24]:

Թուրք-անդրկովկասյան դիվանագիտական բանակցային գործընթացների վրա ճնշում գործադրելու նպատակով Թուրքիան դեռևս շարունակում էր կիրառել իր որդեգրած քաղաքականությունը: Թուրքերը մի կողմից բանակցում էին, իսկ մյուս կողմից շարունակում ռազմական առաջխաղացումը: Այս առիթով Ա. Խաչատրյանը գրում է. «Վեհիբի բանակը կը շարունակէ իր յառաջ խաղացումը դէպի Կարին, և թուրք ու քիւրդ հրոսախումբերով արիւն ու աւեր սփռելով իր արշաւանքի երկու կողմերը: Զօրավար Լեբեդինսկին հարկ կը տեսնէ դիմում ընել Վեհիբ փաշային խնդրելով, որ դադարեցնէ իր յառաջ խաղացումը, որովհետև նոյն շրջանի թէ բանակի զինուորները և թէ քրիստոնեայ ազգաբնակութիւնը խուճապի մատնած է և ահաւոր աղէտներ յառաջ կուգան: Այս դիմումին իբր պատասխան փետրուար 22-ին զօրավար Օդիշելիձէն կը հաղորդէ Լեբեդինսկուն, թէ Վեհիբ վճռական կերպով յայտնէր է, որ պէտք է յառաջ խաղայ՝ մինչև որ հանդիպի ռուս զօրքի: Եւ Օդիշիլիձէն զօրք կը խնդրէ՝ զոնէ Կարին պաշտպանել կարողանալու համար: Վեհիբի այս վճռական արտայայտութեամբ այլևս ոչ մէկ տարակոյս տեղիք կը մնար կարծելու, թէ թուրքերին պէտք է արգելուեն իրենց ծրագիրը գործադրելէ, այսինքն ամբողջ Կովկասը գրաւելէ, քանի որ ինչպէս ամենուն, նոյնպես և Վեհիբին շատ լաւ յայտնի էր, որ Կովկասում ռուս զօրք չկայ, ուրեմն հիւսիսային Կովկասը պիտի լինէր իրենց ապագայ սահմանը: Բայց թուրք դիւանագէտներին ու ռազմավարներին ոգևորողն այս պարագային միայն երկրակալական անյագ ձգտումը չէր, այլ նոյնպէս ամէնուն յայտնի համիսլամական ու համաթրքական շողշողուն հեռապատկերի իրականացման հնարաւորութիւնը»[25]:

Փետրվարի 18-ի (մարտի 3) երեկոյան, երբ Անդրկովկասյան պատվիրակությունը պատրաստվում էր մեկնելու Տրապիզոն, Բրեստից անակնկալ ստացվում է ՌՍՖՍՀ արտժողկոմի տեղակալ Լ. Կարախանի (հայազգի) հեռագիր-հաղորդագրությունը այն մասին, որ Խորհրդային Ռուսաստանը Բրեստ-Լիտովսկում*, առանց հաշտության պայմանները քննարկելու, ստորագրել է դաշնագիր Թուրքիայի, Գերմանիայի,

---

[24] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4004, ց. 3, գ. 29, թ. 123:

[25] **Ա. Խաչատրյան**, նշվ. աշխ., էջ 69-70:

* Բրեստ-Լիտովսկի դաշնագրով Խորհրդային Ռուսաստանից անջատվեցին Լիտվան, Կուրլանդիան, Էստոնիան և Բելոռուսիայի մի մասը: Ուկրաինան և Բելոռուսիան ճանաչվեցին որպես ինքնուրույն պետություններ:

Ավստրո-Հունգարիայի և Բուլղարիայի հետ[26]: Դաշնագրի 4-րդ հոդվածում, որը վերաբերում էր Կովկասին, ասված էր. «Ռուսաստանը կանի այն ամենը, ինչ որ իրենից կախված է, որպեսզի ապահովի իր զորքերի դուրս բերումը Արևելյան Անատոլիայի նահանգներից և վերջիններիս կանոնավոր վերադարձը Թուրքիային:

Ռուսական զորքերը պետք է անհապաղ դուրս բերվեն նաև Արդահանի, Կարսի և Բաթումի մարզերից: Ռուսաստանը չի միջամտի այդ մարզերի պետական-իրավական և միջազգային իրավական նոր կազմակերպման գործին, այլ այդ մարզերի բնակչությանը հնարավորություն կտա դրացի պետությունների, մանավանդ Թուրքիայի համաձայնությամբ հաստատել նոր կարգ»[27]: Փաստորեն այդ դաշնագրով Խորհրդային Ռուսաստանը, առանց Անդրկովկասի մասնակցության ու համաձայնության, Թուրքիային էր զիջում Կարսի, Բաթումի և Արդահանի մարզերը, այսինքն՝ արմատապես փոփոխության էին ենթարկվում Կովկասի 1914 թ. սահմանները հօգուտ Օսմանյան կայսրության: Թուրքիային էր հանձնվում ոչ միայն ամբողջ Արևմտյան Հայաստանը, այլև Անդրկովկասի գրեթե կեսը: Փաստորեն հօդս էին ցնդում Անդրկովկասյան սեյմի մշակած՝ Թուրքիայի հետ դիվանագիտական բանակցությունների գլխավոր հիմնադրույթները և հետևաբար՝ բանակցային ողջ գործընթացը:

Նույն օրը Անդրկովկասյան սեյմի ներքին գործերի կոմիսար, պատվիրակության նախագահ Ա. Չխենկելին և կառավարության նախագահ Ե. Գեգեչկորին, ի լուր աշխարհի բոլոր երկրների կառավարությունների, Թիֆլիսից հաղորդեցին, որ Անդրկովկասը հայտարարում են Ռուսաստանից անջատված, հետևաբար չեն ճանաչում Բրեստ-Լիտովսկի հաշտության անարդար դաշնագիրը և մերժում են ընդունել այդ պայմանների ստորացուցիչ դրույթները[28]: Սակայն Մեհմեդ Վեհիբ փաշան, հենվելով այդ դաշնագրի վրա, փետրվարի 25-ին (մարտի 10) Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակությանն ուղղված հեռագրով պահանջում է անհապաղ թուրքերին հանձնել Կարսը, Բաթումը, Արդահանը իրենց գավառներով և անվերապահորեն ճանաչել Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը՝ իբրև հիմք բանակցությունների համար: Վերջինս նույն օրը մեկ այլ հեռագրով տեղեկացնում է նաև, որ շարունակում է իր ռազմական արշավանքը դեպի Էրզրում[29]: Նա դառնում է էլ ավելի անզիջում իր պահանջներում ու գործողություններում:

Հատկանշական է, որ Անդրկովկասի պատվիրակության թաթար ներկայացուցիչները անմիջապես պաշտպանեցին թուրքերի պահանջը: Այդ առնչությամբ Ա. Խաչատրյանը գրում է. «Բրեստի դաշնա-

---

[26] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, մաս III, թ. 398:

[27] «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)», Ջ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, Եր., 1972, էջ 426:

[28] Տե՛ս **Հ. Ավետիսյան**, Հայկական հարցը 1918 թվականին, Եր., 1997, էջ 111:

[29] Տե՛ս **Ա. Խաչատրյան**, նշվ. աշխ., էջ 71:

գրութեան Կովկասին վերաբերեալ կէտը զօրաւոր կերպով կազդէ նաև Կովկասի թաթարներու մտայնութիւնը փոխելուն համար: Անոնք մինչև այժմ Կովկասի միւս երկու ազգերու՝ հայերու և վրացիներու հետ հաշտ մնալու և համերաշխ գործելու պատրաստ կը ցուցնէին իրենց, բայց այժմ արդէն դիմակը մեկ դի նետած՝ համարձակ դուրս կուգան իբր կուսակից թուրք տիրապետութեան, միանգամայն պահանջելով Կովկասի թաթարներու անկախութիւն և իրենց կանոնավոր բանակի կազմակերպութիւնը»[30]:

Իբրև դիվանագիտական բանակցությունների հիմք թուրքերը ակնհայտորեն պահանջում էին նաև Անդրկովկասի անկախության հռչակում, որը նույնպես արժանացավ թաթար ներկայացուցիչների ջերմ պաշտպանությանը: Թուրքերը «կուզեն ստեղծել պատուար մը,- գրում է Ալ. Խատիսյանը,- Թուրքիոյ եւ Ռուսիոյ միջև յանձին Անդրկովկասեան հանրապետութեան, որ թէ՛ փաստօրէն եւ թէ՛ իրաւականօրէն անկախ ըլլայ եւ անջատուի Ռուսիայէն»[31]: Ակնհայտ է, որ հաշտության գաղափարը չէր, որ թուրք դիվանագետներին բերել էր Տրապիզոն, այլ Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու ձգտումը, այդ անջատմանը միջազգային-իրավական տեսք տալը և թույլ, անօգնական այս երկրամասը իրենց ազդեցության ոլորտ դարձնելը:

Ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակում թուրքերը ավելի ջանադիր էին շարունակում ռազմական ուժով ամրագրել իրենց անօրինական, անարդարացի պահանջները: Դա միջազգային իրավունքի նորմերի կոպիտ խախտում էր Թուրքիայի կողմից, մասնավորապես Բրեստ-Լիտովսկի դաշնագրի 4-րդ հոդվածի, որը վերաբերում էր Կովկասին: «Ամենագլխավոր կետն այն է, որ Թյուրքիան,- գրում է Լեոն,- իր ստորագրած դաշնագրով բոլորովին իրավունք չե ստացել իսկույն գրավելու իր զորքերով Կարսի, Արդահանի և Բաթումի շրջանները»[32]: Նման պայմաններում, այնուամենայնիվ, Տրապիզոնի հաշտության խորհրդաժողովը փետրվարին սկսեց իր աշխատանքները՝ հույս ունենալով պահպանել 1914 թ. սահմանները[33]: Հենց այս հարցի շուրջ էլ Տրապիզոնում ընթացան դիվանագիտական բանակցությունները կողմերի միջև, ինչն առանձին հոդվածի նյութ է:

Բանալի բառեր - *Անդրկովկաս, ներքաղաքական իրավիճակ, արտաքին քաղաքական իրավիճակ, բոլշևիկյան հեղաշրջում, քաղաքացիական պատերազմ, փետրվարյան հեղափոխություն, բոլշևիկների ծայրահեղականություն, բանակցային գործընթաց, ռազմաքաղաքական իրավիճակ*

---

[30] Նույն տեղում:

[31] **Ալ. Խատիսեան**, նշվ. աշխ., էջ 32:

[32] **Լեո**, Անցյալից, Հուշեր, Թղթեր, Դատումներ. Հայոց հարց.-Հայ հեղափոխական դաշնակցություն.- Համաշխարհային պատերազմ. Հեղափոխություն, Թիֆլիս, 1925, էջ 390:

[33] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 104:

ГЕГАМ ПЕТРОСЯН – ***Внутри- и внешнеполитическая ситуация на Южном Кавказе (октябрь 1917 – февраль 1918).*** – В статье рассмотрены вопросы внутренней и внешней политики в Закавказье во время и в первые месяцы после большевистской революции. Февральская революция, низложив монархию, не стала серьёзной угрозой для единства России. Но на закавказских территориях углублялись внутренние конфликты, вызванные давлением Османской империи. Русско-турецкая война превратилась в турецко-закавказскую.

Ключевые слова: *Закавказье, внутриполитическая ситуация, внешнеполитическая ситуация, большевистский переворот, гражданская война, Февральская революция, большевистский экстремизм, переговорный процесс, военно-политическая обстановка*

GEGHAM PETROSYAN – ***Internal and External Political Situation in the South Caucasus (October 1917 - February 1918).*** – This article examines the issues of domestic and foreign policy of the Transcaucasian region. The Bolshevik Revolution in 1917 brought new conflicts in Russia, which pose a serious threat to the country's division. The February Revolution had rejected the monarchy, but at that time still did not represent a serious threat to the unity of Russia. The three Transcaucasian countries deepened internal conflicts caused by the external pressure of the Ottoman Empire. The Russian-Turkish war turned into a Turkish-Transcaucasian war.

Key words: *Transcaucasia, internal political situation, foreign policy situation, the Bolshevik coup, civil war, February revolution, Bolshevik extremism, negotiation process, military-political situation*

ՌԴ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՄԱՐՈՒԹ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

Համաշխարհային քաղաքական բարդ գործընթացների համատեքստում անչափ կարևոր են Ռուսաստանի Դաշնության քաղաքակրթական նույնականացման (այսուհետ՝ ՔՆ) խնդրի քննությունն ու գնահատումը: Ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության համատեքստում քաղաքակրթական նույնականացումը կնպաստի իշխանության ու հասարակության համախմբմանը, կդյուրացնի երկրի առջև ծառացած դժվարությունների հաղթահարումը: Արտաքին քաղաքականության տեսանկյունից քաղաքակրթական նույնականացումը ենթադրում է երկրի զարգացման վեկտորի ընտրություն, ժամանակակից միջազգային թատերաբեմում նոր կերպարի ձևավորում, ինչպես նաև ինքնիշխանության և ազգային անվտանգության ապահովում: Սակայն քաղաքակրթական նույնականությունը, Ս. Հանթինգտոնի կարծիքով, կարող է հանգեցնել ինչպես դրական, այնպես էլ բացասական հետևանքների: Նա նշում է, որ «աշխարհում «սառը պատերազմից» հետո կարևորվեցին մշակութային նույնականացման զանազան տարբերանշանները՝ դրոշներ, խաչեր, կիսալուսիններ և նույնիսկ գլխարկներ, քանի որ մարդկանց մեծ մասի համար ամենակարևորը մշակութային նույնականացումն է: Մարդիկ բացահայտում են նույնականացման նոր, երբեմն հին խորհրդանիշները, որոնց ներքո պատերազմի են դուրս գալիս ինչպես նոր, այնպես էլ, ավելի հաճախ, հին թշնամիների դեմ»[1]: Հարկ ենք համարում ավելացնել, որ ներկայումս այդ պայքարը ոչ այնքան քաղաքական է, որքան միգուցե գաղափարական, մշակութային և քաղաքակրթական: Մենք անդրադարձել ենք նույնականացման քաղաքակրթական տիպին*՝ նկատի ունենալով երկու հանգամանք: Նախ և առաջ՝ գլոբալ մրցակցության պայմաններում «նույնականացում» հասկացությունը ավելի հաճախ զուգորդվում է քաղաքակրթության հետ, քանի որ կարևորվում են քաղաքակրթական չափանիշները, որոնք դրսևորվում են տարբեր երկրների զարգացման զանազան մոդելներ և արժեքային համակարգեր ընտրելիս: Գլոբալացման գործընթացների հակառակ միտումն է քա-

[1] **Хантингтон С.** Столкновение цивилизаций. М., 2003, с. 14.

* Գոյություն ունեն նաև նույնականացման էթնիկ, տարածաշրջանային, գենդերային, մշակութային և այլ տիպեր:

ղաքակրթական նույնականացման գործոնի դերի գերագնահատումը[2]:

Մյուս հանգամանքն այն է, որ քաղաքակրթական նույնականացումը գաղափարական առումով ավելի հասկանալի ու հոգեհարազատ է ինչպես ռուսաստանյան հասարակության, այնպես էլ քաղաքական էլիտայի համար: Այս գաղափարը այնքան էլ համատեղելի չէ գլոբալացման և ունիվերսալ ժողովրդավարական ազատական հայեցակարգերի հետ, որոնց մասին ինչպես 19-րդ, այնպես էլ 20-րդ դարում խոսել են ոչ միայն ռուս, այլև արևմտյան պահպանողականները[3]: Այսպիսով, ՌԴ քաղաքակրթական նույնականացումը փոխկապակցված է ոչ միայն ժամանակակից գործընթացների, այլև ռուսական պետության հազարամյա պատմության և մշակույթի հետ: Քանի որ մինչև ԽՍՀՄ-ի ձևավորումը ռուսական ազգային գաղափարը այդպես էլ ավարտուն տեսք չստացավ, ուստի արդի դարաշրջանում ռուսաստանյան հասարակությունը ՌԴ միջազգային հեղինակության մեծացումը ավելի շատ պայմանավորում է քաղաքակրթական առումով վերելք ապրող հզոր Ռուսաստանի վերածննդով: Ռուսաստանյան իշխանությունների համար քաղաքակրթական նույնականացումը նաև պրագմատիկ նշանակություն ունի: Այն հնարավորություն է տալիս Մոսկվային, նշելով ռուսական քաղաքակրթության «առանձնահատկությունները», խուսանավել Ռուսաստանում ժողովրդավարության զարգացման ոչ բավարար մակարդակի վերաբերյալ Արևմուտքից հնչող տարբեր քննադատությունների միջակայքում, ինչպես նաև այն փոխկապակցել ռուսական աշխարհի հետ:

Քաղաքակրթական նույնականացման խնդիրը այսօր ծառացել է ոչ միայն Ռուսաստանի, այլև Մերձավոր Արևելքի և Աֆրիկայի բազմաթիվ երկրների, ինչպես նաև տնտեսապես զարգացած արևմտյան այնպիսի առաջատար պետությունների առջև, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Գերմանիան, Նիդեռլանդները, Բելգիան և այլն: Այն չի շրջանցել նաև Արևելյան Եվրոպան և հետխորհրդային տարածքը: Մեր կարծիքով, Ուկրաինայում ներկայումս ծավալվող իրադարձությունների հիմքում ևս ընկած է քաղաքակրթական նույնականացման խնդիրը: Վերջինս պետք է ընտրություն կատարեր և որոշեր, թե ով է իր հիմնական դաշնակիցը՝ Արևմո՞ւտքը, թե՞ Ռուսաստանը: Ուկրաինան վերջին տասնամյակների ընթացքում քաղաքական վայրիվերումների հետևանքով ներկայումս փլուզման եզրին է: Նույնականացման դժվարություններ են ապրում նաև Մոլդովան, Վրաստանը, Բելառուսը և նախկին խորհրդային մի շարք այլ հանրապետություններ:

Ինչպես նշում է պրոֆ. Ա. Ենգոյանը, հետխորհրդային որոշ ժողովուրդների առջև ծառացավ հարյուրամյակների ընթացքում ձևավորված նույնականության պահպանման խնդիրը, իսկ մյուսների մոտ՝ գլոբալ միասնականացման անբարենպաստ պայմաններում նույնա-

[2] Տե՛ս «Концепция внешней политики РФ 2013 г.»:

[3] Տե՛ս «Россия в глобальной политике. Новые правила игры без правил». М., 2015, էջ 87:

կանացման դժվարին ուղին անցնելու անհրաժեշտությունը: Այդ բոլոր ժողովուրդները վաղ թե ուշ պետք է կանգնեին ընտրության անհրաժեշտության առջև՝ հայտնվե՞լ մեկուսացման մեջ՝ հրաժարվելով Արևմուտքից պարտադրվող արժեքային համակարգից, թե՞ հարցականի տակ դնել սեփական նույնականացումը՝ լիովին հավատարիմ մնալով դրանց, կամ էլ այն կիրառել այնքանով, որ չվտանգվեն սեփական արժեքները: Նկատի ունենալով միաբևեռ աշխարհակարգում այլընտրանքի բացակայությունը՝ անհնար է դառնում վերջին տարբերակը[4]:

Ա. Ս. Պանարինի կարծիքով, ռուսաստանյան նույնականացումը որոշվում է մի շարք գործոնների փոխկապակցվածությամբ՝ տարածքի միասնականությամբ, պատմությամբ, մշակութային կոլեկտիվ հիշողությամբ, արժեքային նորմատիվ համակարգով: Դ. Տրենինը գտնում է, որ նույնականացում ասելով պետք է հասկանալ ոչ այնքան այս կամ այն երկրի կամ ժողովրդի ինքնատիպությունը (այն ավելի շատ վերաբերում է մշակույթի և մարդաբանության բնագավառներին), որքան այլ երկրներում նրա ունեցած դերն ու տեղը: Նրա կարծիքով, նույնականացումը սերտորեն կապված է պետականության, դրա բնույթի ու միջազգային հարաբերությունների համակարգում պետության դիրքորոշման, նրա էլիտայի հավակնությունների, ինչպես նաև ազգի ինքնագիտակցության հետ: Ըստ Դ. Տրենինի՝ «նույնականացում» հասկացությունը փոփոխական է, և Ռուսաստանը 20-րդ դարում երկու անգամ արդեն (1917 և 1991 թթ.) այն փոխել է[5]: Ի. Չուբայսի կարծիքով, եթե ազգային գաղափարախոսությունը արտացոլում է երկրի գլխավոր, առանցքային բնութագրիչները, ապա նույնականացումը երկիրն է, նրա «ինքնանմանակումը»: Նույնականացումը միաժամանակ այլ երկրներից տարբերության ընդգծումն է[6]:

Այսպիսով, քաղաքակրթությունը հասարակության կարևորագույն ցուցիչներից է և բնորոշվում է նրա որակական, նյութական ու հոգևոր, մշակութային, արժեքային համակարգի որոշակի չափանիշներով: Քաղաքակրթությանը հատուկ են ոչ միայն հասարակական կառուցվածքի և մարդկանց կյանքի որոշակի մոդելներ ու պայմաններ, այլև արժեքային համակարգի, ավանդույթների, վարքի, հասարակական հարաբերությունների որոշակի նորմեր:

Ռուս հետազոտողներից Դ. Ե. Սորոկինը գտնում է, որ քաղաքակրթական-մշակութային նույնականացման տեսանկյունից Ռուսաստանը ունի ընտրության չորս տարբերակ:

---

[4] Տե՛ս **Енгоян А. П**. Проблема идентичности в интеграционных процессах // Республиканская научная конференция (5 ноября 2013 г.): «Проблема национальной идентичности в условиях глобализации (международные аспекты)». Ер., 2014, էջ 32:

[5] Տե՛ս «Цивилизационная идентичность современной России: К постановке проблемы» // http://moyuniver.net/civilizacionnaya-identichnost-sovremennoj-rossii-k-postanovke-problemy (վերջին մուտքը՝ 14.05.2016թ.):

[6] Տե՛ս **Чубайс И.** Разгаданная Россия (Что же будет с Родиной и с нами?). М., 2005, էջ 15:

1. Ռուսաստանը արևմտաեվրոպական քաղաքակրթության բաղկացուցիչ մասն է, ուստի պետք է զարգանա դրա հենքի վրա,

2. Ռուսաստանը ինքնուրույն քաղաքակրթություն է և ունի զարգացման իր ուրույն ճանապարհը,

3. Ռուսաստանը սլավոնական յուրահատուկ քաղաքակրթության բաղկացուցիչ մասն է (միջուկը) և գերազանցապես գտնվում է սլավոնական բնակչություն ունեցող պետությունների քաղաքակրթական ուղեծրում,

4. Ռուսաստանը էթնիկ առումով յուրահատուկ բազմատիպ քաղաքակրթություն է, ընդ որում, որպես կանոն, կա՛մ ընդգծվում է արևմտաեվրոպական, կա՛մ ասիական քաղաքակրթական տարրերի առավելությունը[7]:

Առաջին տարբերակին հիմնականում հարում են ռուսաստանյան ազատական արևմտականները: Նրանց կարծիքով, Ռուսաստանը պետք է հետևի Արևմուտքի (ԱՄՆ-ի գլխավորությամբ) խորհուրդներին, քանի որ, ի տարբերություն քաղաքակրթական առումով առավել զարգացած Արևմուտքի, չունի պատմական որևէ ինքնուրույն առաքելություն: Ռուս ազատականները չեն ցանկանում ընդունել, որ ԱՄՆ-ի և ԵՄ-ի հետ համագործակցությունը առնվազն ենթադրում է նման ցանկություն նաև Արևմուտքի կողմից, որն ունի իր ուրույն շահերը և անվստահությամբ է վերաբերվում Ռուսաստանին: Ս. Հանթինգտոնը նշում է, որ «սառը պատերազմի» շրջանում Եվրոպան մեկ ամբողջություն չէր: Իսկ արդի փուլում Արևմուտքի քաղաքակրթական սահմանները որոշվում են արևմտաքրիստոնեական և ուղղափառ ու մահմեդական ժողովուրդների բնակության գոտիներով: Հյուսիսից այդ սահմանը անցնում է Ֆինլանդիայով, Էստոնիայով, Լատվիայով ու Լիտվայով, Արևմտյան Բելառուսով ու Արևմտյան Ուկրաինայով, Ռումինիայի Տրանսիլվանիայի հատվածով (բնակեցված է կաթոլիկ հունգարացիներով), Սլովենիայով ու Խորվաթիայով[8]: Ներկայումս Արևելյան Եվրոպայի ուղղափառ քաղաքակրթության գոտում գտնվող երկրները աշխատում են փոխել իրենց քաղաքակրթական նույնականացման կոդը. ինտեգրվելով արևմտյան կառույցներին՝ դառնալ Արևմուտքի մաս և հեռանալ իրենց պատմական արմատներից:

Ռուսաստանի քաղաքակրթական նույնականացման հարցը բավական բարդ ու խճճված խնդիր է: Ռուսաստանը կարելի է համարել ինչպես եվրոպական, այնպես էլ ասիական պետություն:

Եթե մշակութային առումով Ռուսաստանը միանշանակ ավելի մոտ է Եվրոպային, ապա պատմական զարգացման առանձնահատկություններով և աշխարհագրական առումով այն ավելի ընդհանրություններ ունի Ասիայի հետ:

---

[7] Տե՛ս **Сорокин Д.** Россия, проблемы цивилизационного выбора // "Общественные науки и современность", 2002, № 6, էջ 125:

[8] Տե՛ս **Хантингтон С.**, նշվ. աշխ., էջ 14:

Խնդիրը բարդանում է նաև այն հանգամանքով, որ Ռուսաստանի նույնականացումը երբեք ազգային բնույթ չի կրել: Նույնականացման տեսանկյունից Ռուսաստանի պատմությունը մասնագետները բաժանում են երեք փուլի՝ կայսրության, խորհրդային և հետխորհրդային շրջանների: Կայսրության շրջանում ազգային գաղափարը ներառում էր երեք առանցքային արժեքներ՝ հողերի համախմբում, որը հետագայում վերածվեց տարածքային էքսպանսիայի, ուղղափառություն և համայնքային կոլեկտիվիզմ[9]:

Երբ 19-րդ դարի կեսերին ավարտվեց «հողերի հավաքման» գործընթացը, իսկ ստոլիպինյան բարենորոգումները խարխլեցին համայնքային կոլեկտիվիզմի հիմքերը, 20-րդ դարի սկզբներին որպես դրա հետևանք առաջացավ ազգային գաղափարական ճգնաժամ: Գաղափարական և քաղաքակրթական նույնականացման ճգնաժամը առկա էր նաև հետխորհրդային Ռուսաստանում: 1996 թ. ՌԴ առաջին նախագահ Բ. Ելցինը ստիպված էր խոստովանել, որ հին գաղափարները (կոմունիստական, միապետական, հանրապետական) այլևս չեն «աշխատում» և նոր գաղափարներ մշակելու կոչով հեռուստացույցով դիմեց ռուսաստանյան հասարակությանը: «Գաղափարներ Ռուսաստանի համար» խորագրով մրցույթ հայտարարվեց, որի արդյունքները երկու տարի անց ամփոփեց պրոֆ. Վորոնկովը՝ նշելով, որ ոչ միայն նոր գաղափարներ մշակելու անհրաժեշտություն չկա, այլև վնասակար է այդ մրցույթի արդյունքների իրականացումը: Մեկուկես տարի անց վարչապետ Վ. Պուտինը այդ ուղղությամբ կրկին քայլեր իրականացրեց: Գ. Գրեֆի գլխավորությամբ ստեղծվեց ռազմավարական մշակումների կենտրոն, որի գործունեությունը ևս շոշափելի արդյունքներ չտվեց[10]:

Ռուսական պետականության համար իր գոյության ընթացքում «արևմտյան սայլին» լծվելը միշտ աղետալի հետևանքներ է ունեցել: Նման իրավիճակ ստեղծվեց նապոլեոնյան պատերազմներից հետո, այնուհետև այն ժամանակ, երբ Մեծ Բրիտանիային ու Ֆրանսիային հաջողվեց Ռուսաստանը ներքաշել Առաջին աշխարհամարտի հորձանուտը, որը նրա համար ավարտվեց հեղափոխությամբ ու քաղաքացիական պատերազմով: Արևմուտքի խորհրդով ու դեղատոմսերով 1990-ական թվականներին ՌԴ-ում իրականացված «ազատական բարենորոգումները» ողբերգական հետևանքներ ունեցան միլիոնավոր մարդկանց համար. ռուսաստանյան հասարակության շրջանում վերջնականապես հեղինակազրկվեցին արևմտյան ազատական արժեքները: Պատահական չէ, որ արտահայտելով ռուսաստանցիների այդ տրամադրությունները՝ բեմադրիչ Ն. Միխալկովը ժամանակին առաջարկեց պետական մակարդակով հանցավոր ճանաչել Մ. Գորբաչովի ու Բ. Ելցինի՝ ԽՍՀՄ փլուզմանը հանգեցրած քաղաքականությունը:

[9] Տե՛ս **Чубайс И.**, նշվ. աշխ., էջ 15:
[10] Տե՛ս նույն տեղը:

2016 թ. մարտին Լիբերալ-դեմոկրատական խմբակցությունը ՌԴ պետդումա ներկայացրեց «ԽՍՀՄ նախագահ Մ. Ս. Գորբաչովի և ՌԴ առաջին նախագահ Բ. Ն. Ելցինի քաղաքական գործունեությունը հանցավոր ճանաչելու մասին» հայտարարության նախագիծ[11]:

20-րդ դարի ռուս նշանավոր փիլիսոփաներից Ալեքսանդր Զինովևը նշում է, որ երբ Արևելյան Եվրոպայի ու Խորհրդային Միության ժողովուրդները նպատակադրվեցին նմանվել Արևմուտքին, նրանք անտեսել էին այն հանգամանքը, որ իրենց երկրների արևմտականացումը, միևնույնն է, մի շարք գործոնների պատճառով նրանց չի դարձնի Արևմուտքի բաղկացուցիչ մաս: Նա առանձնացնում է երկու հիմնական պատճառ: Առաջինն այն է, որ Արևմուտքի առանձին արժեքների (ժողովրդավարություն, շուկա, սեփականաշնորհում և այլն) պարտադրումը այդ ժողովուրդներին ու երկրներին դեռևս չի նշանակում, որ նրանք վերածվել են Արևմուտքի բաղկացուցիչ մասի, քանի որ դա միայն այդ բնութագրիչներով չի բնորոշվում: Երկրորդ պատճառը այն է, որ տարբեր քաղաքակրթությունների շարքում Արևմուտքը արդեն զբաղեցրել է իր ուրույն տեղը. իր որոշակի դերակատարմամբ և թողտվությամբ արևմտականացվող ժողովուրդները ամենաշատը, որ կարող են հավակնել, գաղութի վերածվելն է: Այդ իսկ պատճառով Ա. Զինովևը գտնում է, որ ինչքան էլ ռուսները փնովեն իրենց պատմության կոմունիստական շրջանը, և ինչքան էլ ջանասիրաբար ավերեն իրենց բոլոր նվաճումները, միևնույնն է, Ռուսաստանը երբեք Արևմուտքի մաս չի դառնա[12]:

Այնուամենայնիվ, ՌԴ երկրորդ և երրորդ նախագահները, հաշվի առնելով երկրի արդիականացման հիմնախնդիրները, ինչպես նաև այն, որ ռուսաստանյան հասարակության մի զգալի հատվածը աշխարհագրական և հատկապես մշակութային առումով իրենց պետությունը եվրոպական է համարում, փորձեցին իրավահավասար սկզբունքով վերաձևավորել հարաբերությունները ԵՄ հետ: ՌԴ-ն ցանկանում էր, համագործակցելով ԵՄ հետ, ստեղծել մայրցամաքային մի նոր կառույց, որը կկանխեր Եվրոպայի՝ սառը պատերազմի հետևանքով սկսված տրոհումը, իսկ ՌԴ-ն կդառնար ժամանակակից միջազգային կենտրոններից մեկը, ինչն էլ կնպաստեր երկրի տնտեսական և կառավարման համակարգի արդիականացմանը: Այդ գործընթացի փաստացի ձախողմանը նպաստեց այն հանգամանքը, որ Ռուսաստանը, աշխարհագրական և մշակութային առումով լինելով եվրոպական երկիր և ներկայացնելով եվրոպական քրիստոնեական քաղաքակրթության արևելյան ուղղափառ քրիստոնեական ճյուղավորումը, չի կարող ինտեգրվել ատլանտյան Արևմուտքին: Ատլանտիզմը վերացնում է ԵՄ

[11] Տե՛ս «Ազգ», 18 մարտի 2016 թ.:

[12] Տե՛ս **Демурин М.** Провидения Зиновьева // http://zinoviev.info/wps/archives/1395 (վերջին մուտքը՝ 14.05.2016թ.):

պետությունների մշակութային և ազգային առանձնահատկությունները, իսկ ՆԱՏՕ-ի ընդլայնումը դեպի Արևելք նշանակում է Արևմուտքի համախմբում ընդդեմ Ռուսաստանի: Ըստ այդմ՝ եվրոպական քաղաքակրթությունը, սպառելով ռացիոնալ և արժեհամակարգի զարգացման հնարավորությունները, աստիճանաբար վերածվում է սպառողական ինդուստրիալ քաղաքակրթության: 2013 թ. նոյեմբերին իր ծրագրային ելույթում ԵՄ նախագահ Հերման վան Ռոմպույը եվրոպացիներին կոչ արեց հրաժարվել ազգային նույնականացման վերականգնման որևէ փորձից և պատմության աղբանոց նետել «ժողովուրդ» ու «հայրենիք» հասկացությունները, և Եվրոպան ընդունել որպես «բոլորի համար ունիվերսալ տուն»[13]:

2008 թ. հունիսի 5-ին հանդես գալով Բեռլինում՝ ՌԴ նախագահ Դ. Մեդվեդևը նշեց. «Չնայած երկու համաշխարհային պատերազմների ողբերգությանը՝ մենք կարողացանք վերջնականապես լուծել պատմական հաշտեցման դժվարագույն խնդիրը: Եվ ոչ միայն այն պատճառով, որ դա պահանջում էր ժամանակը: Որոշակի դեր խաղացին համաեվրոպական արժեքները և հումանիզմի իդեալները, որոնք Ռուսաստանի մշակույթի անբաժանելի մասն են, և համոզված եմ, որ Եվրոպայի խնդիրները չեն լուծվի այնքան ժամանակ, քանի դեռ չի որոշվի նրա նույնականացումը. նրա բոլոր ինտեգրալ հատվածների՝ ներառյալ նաև Ռուսաստանի Դաշնության, օրգանական միասնությունը: Քանի որ դեն նետելով խորհրդային համակարգը և որոշակի պատմական շրջանում հրաժարվելով նրա վերականգնումից՝ Ռուսաստանը այնպիսի պետության ձևավորման հիմքեր դրեց, որը լիովին համատեղելի է Եվրոպայի մնացած հատվածի հետ և ավելի ողջամտորեն ներառեց այն լավագույնը, որը կազմում է եվրոպական քաղաքակրթության ընդհանուր ժառանգությունը»[14]:

2009 թ. հունվարի 15-ին գերմանական «ARD» հեռուստատեսությանը տված հարցազրույցում Վ. Պուտինը նշել է. «Եվրոպայի ու Ռուսաստանի ապագաները անկասկած փոխկապակցված են: Հարկավոր է խոսել այդ բնական փոխկապակցվածության մասին, հարաբերությունները կառուցել՝ նկատի ունենալով երկարատև հեռանկարը, դրանք կառուցել փոխըմբռնելի սկզբունքների վրա և հարգել միմյանց շահերը: Միայն այս դեպքում Մեծ Եվրոպայի ողջ տարածքը կբարգավաճի և մրցունակ կլինի այսօրվա բարդ աշխարհում»[15]:

---

[13] «Президент ЕС призвал европейцев отказаться от каких-либо попыток по восстановлению национальнной идентичности» // http://rus.postimees.ee/2605072/prezident-es-prizval-evropejcev-otkazatsja-ot-kakih-libo-popytok-po-vosstanovleniju-nacionalnoj-identichnosti(վերջին մուտքը՝ 14.05.2016թ.).

[14] «Выступление Президента РФ Д. Медведева 5 июня 2008 г. на встрече с представителями политических, парламентских и общественных кругов Германии» // http://kremlin.ru/events/president/transcripts/320 (վերջին մուտքը՝ 14.05.2016թ.).

[15] «Интервью В. В. Путина первому каналу германского телевидения "АРД"» // http://archive.government.ru/special/docs/3001 (վերջին մուտքը՝ 14.05.2016թ.).

2010 թ. նոյեմբերին ՌԴ վարչապետ Վ. Պուտինը գերմանական «Suddeutsche Zeitung» թերթում զետեղած իր հոդվածում Լիսաբոնից մինչև Վլադիվոստոկ տարածությունը դիտում էր որպես մեկ ամբողջություն և Եվրոպային առաջարկում՝

1) ստեղծել ազատ առևտրի ընդհանուր գոտի,

2) արդիականացնել արտադրությունը,

3) ստեղծել միասնական էներգետիկ համալիր,

4) գիտության ու կրթության բնագավառում իրականացնել քաղաքականության միասնականացում,

5) վերացնել ՌԴ և ԵՄ միջև վիզային ռեժիմը, զարգացնել համագործակցությունը[16]:

Այսպիսով, Վ. Պուտինը և Դ. Մեդվեդևը իրենց կառավարման սկզբնական շրջանում Ռուսաստանը համարում էին արևմտյան քաղաքակրթության անբաժելի մաս: Իրավիճակը սկսեց փոխվել 2008 թ.-ից, որի պատճառը ռուս-վրացական պատերազմն էր: Արտգործնախարար Ս. Լավրովը, որը արտահայտում էր քաղաքական որոշ շրջանակների տեսակետները, 2009 թ. սկզբներին «Ռուսաստանի և Եվրոպական միության միջև հարաբերությունների զարգացման հեռանկարների մասին» հոդվածում թեպետ նշում է, որ Պորտուգալիայից մինչև Ռուսաստանի Հեռավոր Արևելք հսկայածավալ տարածքը ներկայացնում է միասնական եվրոպական քաղաքակրթությունը, իսկ ԵՄ-ն համարում է ռազմավարական գործընկեր, սակայն նկատի ունենալով միջազգային նոր զարգացումները՝ հավելում է, որ «Ռուսաստանը իր առջև չի դրել և չի դնում ԵՄ-ին անդամագրվելու խնդիր»: Այնուհետև նա ասում է, որ իրականացնելով իրենց եվրոպական ընտրությունը՝ «մենք չենք մոռանում այն մասին, որ որպես համաշխարհային տերություն, որը տեղակայված է երկու մայրցամաքների վրա, մեր երկիրը պարտավոր է պահպանել անհրաժեշտ ազատություն իր ներքին և արտաքին քաղաքականության իրականացման վերաբերյալ որոշումներ կայացնելիս, իսկ որպես եվրասիական պետություն՝ ունենալ իր առավելությունները և կարգավիճակը: Թեև Ռուսաստան-ԵՄ համագործակցությունը մեզ համար առաջնահերթ խնդիրներից է, սակայն դա չպետք է կենսագործվի ի հաշիվ այլ երկրների ու տարածաշրջանների հետ հարաբերությունների»[17]:

Ռուսաստանի իշխանությունների կարծիքով՝ եվրոպական, եվրասիական ու ռուսական աշխարհի հայեցակարգերը ոչ միայն չեն հակասում, այլև ինչ-որ տեղ փոխլրացնում են իրար: Սակայն Արևմուտքի հետ հարաբերությունների լարվածությանուժեղացման, Ռուսաստա-

---

[16] Տե՛ս «Прохоров М. предложил концепцию Большой Европы» // http://www.rbc.ru/politics/11/08/2011/609989.shtml (վերջին մուտքը՝ 14.05.2016թ.):

[17] Տե՛ս Статья министра иностранных дел России С. В. Лаврова “О перспективах отношений между Россией и Европейским союзом” // http://www.mid.ru/evropejskij-souz-es//asset_publisher/6OiYovt2s4Yc/content/id/309790 (վերջին մուտքը՝ 18.05.2016թ.):

նում ազատական կուսակցությունների դերի թուլացման և պահպանողական գաղափարների ազդեցության մեծացման պայմաններում ռուսաստանյան քաղաքակրթությունը առավել հաճախ սկսեցին դիտվել որպես ուրույն քաղաքակրթություն:

Այնուամենայնիվ, հետագա տարիներին Կրեմլը մի շարք փորձեր ևս կատարեց ԵՄ հետ հարաբերությունները կարգավորելու ուղղությամբ: Այսպես, 2012 թ. փետրվարին Վ. Պուտինը իր «Ռուսաստանը փոխակերպվող աշխարհում» հոդվածում նշում է. «Ռուսաստանը Մեծ Եվրոպայի անբաժանելի, օրգանական մասն է, եվրոպական քաղաքակրթություն: Մեր քաղաքացիները իրենց եվրոպացի են զգում»[18]:

2012 թ. մայիսի 7-ին Վ. Պուտինի ստորագրած «Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքական կուրսի իրականացման միջոցառումների մասին» հրամանագրում ռազմավարական նպատակ էր համարվում Ատլանտյան օվկիանոսից մինչև Խաղաղ օվկիանոս միասնական տնտեսական ու հումանիտար տարածքի ստեղծումը[19]:

2016 թ. մարտին Ս. Լավրովը նշեց. «Գլոբալացման շրջանում ժամանակակից աշխարհը տարբերվում է զանազան պետությունների փոխկապակցվածությամբ, և այսօր Ռուսաստան-ԵՄ հարաբերությունները հնարավոր չէ կառուցել սառը պատերազմի շրջանին բնորոշ մոտեցումներով, երբ նրանք դեռևս գտնվում էին համաշխարհային քաղաքականության էպիկենտրոնում: Հնարավոր չէ հաշվի չառնել Ասիայում, Խաղաղ օվկիանոսի ավազանում, Մերձավոր և Միջին Արևելքում, Աֆրիկայում և Լատինական Ամերիկայում ընթացող հզոր գործընթացները:

Մենք չենք ցանկանում հարաբերությունները սրել ԱՄՆ-ի, ՆԱՏՕ-ի կամ ԵՄ հետ: Գտնում ենք, որ եվրոպական մայրցամաքում բնակվող ժողովուրդների շահերի ապահովման լավագույն տարբերակը Ատլանտիկայից մինչև Խաղաղ օվկիանոս ընդհանուր տնտեսական ու հումանիտար տարածքի ապահովումն է, այնպես, որ ձևավորված Եվրասիական տնտեսական միությունը կարողանա կապող օղակ հանդիսանալ Եվրոպայի և ԱԽՏ-ի միջև»[20]:

ՌԴ նախկին արտգործնախարար (1998-2004 թթ.) Ի. Իվանովը միանգամայն արդարացիորեն նշում է, որ այն հնարավորությունը, որ տրվում է հարյուր տարին մեկ անգամ «Մեծ Եվրոպա» ձևավորելու համար, չկայացավ: Ուկրաինական ճգնաժամը մեկ անգամ ևս ապացուցեց, որ Ռուսաստանի և Եվրոպայի քաղաքական էլիտաները ի վիճակի

---

[18] **В. Путин.** Россия в меняющемся мире // http://www.mn.ru/politics/78738 (վերջին մուտքը՝ 21.05.2016թ.).

[19] Указ президента РФ В. В. Путина от 7 мая 2012 г. «О мерах по реализации внешнеполитическиго курса Российской Федерации» // http://kremlin.ru/events/president/ news/-15256 (վերջին մուտքը՝ 21.05.2016թ.).

[20] «Сергей Лавров об исторической перспективе внешней политики России» // https://lenta.ru/articles/2016/03/03/lavrovtext (վերջին մուտքը՝ 21.05.2016թ.).

չեն փոխհամաձայնության գալու և քաղաքական ու տնտեսական միասնական տարածք ձևավորելու[21]:

2008 թ.-ից ԱՄՆ-ը ուժեղացրեց իր ջանքերը ԵՄ-ի ու ՌԴ-ի միջև տարաձայնությունները խորացնելու ուղղությամբ և ի վերջո ձախողեց «Մեծ Եվրոպայի» գաղափարը: Եվրաատլանտյան տարածք ասելով՝ այժմ հասկանում ենք Արևմտյան Եվրոպան ու Հյուսիսային Ամերիկան. այսինքն՝ մեկի փոխարեն ձևավորվեց երկու աշխարհաքաղաքական տարածք՝ Մեծ Եվրոպա և Մեծ Եվրասիա: Այսօր Եվրոպայում ստեղծվել է միանգամայն այլ իրավիճակ: Եթե դեռևս ոչ վաղ անցյալում Ռուսաստանը, Գերմանիան և Ֆրանսիան կարող էին խոսել բազմաբևեռ աշխարհակարգի մասին կամ քննադատել ԱՄՆ-ի հարձակումը Իրաքի վրա, ապա ներկայումս նման համատեղ ձեռնարկներ հնարավոր չէ պատկերացնել:

Ռուսաստանի նույնականացման շրջանակներում Կրեմլը փորձեց օգտագործել նաև «ռուսական աշխարհի» հայեցակարգը: ԽՍՀՄ փլուզումից հետո բարենպաստ պայմաններ ստեղծվեցին ռուսների էթնիկ ինքնագիտակցության ուժեղացման համար:

«Ռուսական աշխարհ» հասկացությունը 1999 թ. մշակեցին Պյոտր Շչեդրովսկին ու Գլեբ Պավլովսկին: Նրանք իրենց ծրագրային հոդվածում նշում էին, որ 20-րդ դարում «ռուսական աշխարհը» ձևավորվեց համաշխարհային պատերազմների ու հեղափոխությունների արդյունքում: Այն ռուսերեն լեզվամտածողություն և ցանցային կառուցվածք ունեցող մեծ և փոքր հանրությունների ամբողջություն է: Նրանց կարծիքով, ՌԴ-ն ընդգրկում է ռուսական աշխարհի ընդամենը կեսը[22]: Վաշինգտոնյան «Center for Global Interest» կենտրոնի փորձագետ Մարլեն Լարուելի կարծիքով, «ռուսական աշխարհի» հայեցակարգը որոշակորեն հակասում է Եվրասիական միության և պահպանողական գաղափարախոսություններին[23]: ՌԴ նախագահ Վ. Պուտինը «ռուսական աշխարհ» տերմինը առաջին անգամ օգտագործեց 2001 թ. Հայրենակիցների համաշխարհային կոնգրեսում, երկրորդ անգամ՝ 2006 թ., իսկ երրորդ անգամ՝ 2014 թ. մարտին:

«Ռուսական աշխարհ» հասկացությունը առավել լայն քննարկումների թեմա դարձավ սկսած 2007 թ.: Հաշվի առնելով հետխորհդային տարածքի ինտեգրացիոն գործընթացների բարդությունը՝ Մոսկվան «հայրենակիցների» նկատմամբ բավական զուսպ քաղաքականություն էր որդեգրել: Թեպետ ժամանակին ՌԴ պետական դումայում քննարկ-

---

[21] Տե՛ս **Иванов И.** Выступление на XX ежегодной конференции Балтийского форума «США, ЕС И Россия – новая реальность» (14 сентября 2015) // http://www.warandpeace.ru/ru/analysis/view/104997 (վերջին մուտքը՝ 21.05.2016թ.):

[22] Տե՛ս **Ларуэль М.** Русский мир. Мягкая сила России и геополитическое воображение (11.06.2015) // http://politobzor.net/show-56343-marlen-laruel-russkiy-mir-myagkaya--sila-rossii-i-geopoliticheskoe-voobrazhenie.html (վերջին մուտքը՝ 21.05.2016թ.):

[23] Տե՛ս նույն տեղը:

վել են «Ռուս ժողովրդի ազգային-մշակութային զարգացման մասին» և «Ռուս ժողովրդի ինքնորոշման, Ռուսաստանի ողջ տարածքում ինքնիշխանության և միասնական պետությունում վերամիավորման իրավունքի մասին» օրինագծերը, սակայն դրանք ոչ միայն չընդունվեցին, այլև 2000 թ.-ից՝ նախագահ ընտրվելուց հետո, Վ. Պուտինին հաջողվեց զսպել ընդդիմության ազգայնական ուժերին, որոնք գտնում էին, որ ռուս ժողովուրդը մասնատված է հետխորհրդային մի շարք պետությունների՝ արհեստականորեն գծված սահմանների պատճառով: Անարձագանք մնացին նաև Ղրիմի, Հյուսիսային Ղազախստանի ու Հյուսիսային Կովկասի ռուսների՝ աջակցություն ստանալու վերաբերյալ խնդրանքները[24]: Սակայն Ղրիմի դեպքերը նպաստեցին, որ ՌԴ նախագահը իր քայլերին օրինականություն հաղորդելու համար ռուսներին համարի «մասնատված ազգ»: 2014 թ. մարտին Վ. Պուտինը, ելույթ ունենալով օրենսդիր, գործադիր և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների առջև, նշեց «ԽՍՀՄ-ի փլուզումից հետո նախկին միութենական հանրապետություններում բնակվող միլիոնավոր ռուսներ դարձան ազգային փոքրամասնություններ, իսկ ռուսները ամենաբազմաքանակ ժողովուրդներից մեկն են, եթե չասենք՝ աշխարհի ամենատարանջատված ժողովուրդներից մեկը»[25]: Ղրիմի վերամիավորումը կարևորվեց նաև քաղաքակրթական նույնականացման տեսանկյունից: 2014 թ. դեկտեմբերին ՌԴ դաշնային ժողովին հղած իր ուղերձում Վ. Պուտինը նշեց «Ղրիմում ռուսները իրենց զգացին որպես միասնական ժողովուրդ: Եվ դա մեզ հիմք է տալիս ասելու, որ Ռուսաստանի համար Ղրիմը, հին Կորսունը, Խերսոնեսը քաղաքակրթական և սրբազան հսկայական նշանակություն ունեն»[26]:

Մեր կարծիքով, ՌԴ արտաքին քաղաքականության ուղեգծի, քաղաքակրթական նույնականացման վերաբերյալ քննարկումները 2008 թ. ռուս-վրացական պատերազմից հետո ընթացան ուրույն ուղղությամբ: ՌԴ քաղաքակրթական նույնականացման քննարկումների ժամանակ ձևավորվեցին երեք մոտեցումներ, որոնցում ընդհանուր էին Ռուսաստանի ինքնիշխանության, անկախության և հզորության ամրապնդումը, ժողովրդի շրջանում իշխանության ազդեցության մեծացումը և միջազգային ու ներքին ոլորտներում քաղաքական համակարգի լեգիտիմացումը:

Առաջին մոտեցումը եվրասիական քաղաքակրթության հայեցակարգն է, երկրորդը՝ Ռուսաստանը Արևմուտքից ներմուծվող «գունավոր հեղափոխությունների» քաոսի և ազատական գաղափարների դեմ պայքարող պահպանողական ուժերի միջնաբերդ է, և երրորդը՝ Ռուսաստանը՝ որպես առանձին քաղաքակրթություն, հայեցակարգն է, որի

[24] Տե՛ս «Россия в глобальной политике: Новые правила игры без правил», էջ 86:

[25] «Обращение президента Российской Федерации» (18 марта 2014 года) // http://kremlin.ru/events/president/news/20603 (վերջին մուտքը՝ 21.05.2016թ .).

[26] «Послание Президента Федеральному собранию (4 декабря 2014 года) // http://kremlin.ru/events/president/news/47173 (վերջին մուտքը՝ 21.05.2016թ .).

շրջանակները չեն ավարտվում միայն ՌԴ պետական սահմաններով: Երեք մոտեցումների համար ընդհանուր է այն, որ տեսական առումով դրանք հենվում են պահպանողական գաղափարների վրա և ունեն հակաարևմտյան ուղղվածություն: Պահպանողականությունը ավելի հասկանալի է արտաքին աշխարհի համար, և այդ հենքի վրա հնարավոր է ազատական Արևմուտքի դեմ ստեղծել ուղղափառ Ռուսաստանի, կոնֆուցիական Չինաստանի, ինչպես նաև Հնդկաստանի և ոչ արմատական իսլամ դավանող երկրների կոալիցիա: Պատահական չէ, որ քաղաքակրթական և մշակութային առումով իր ինքնությունը կորցնող Եվրոպայում Վ. Պուտինը համարվում է պահպանողական քաղաքական գործիչ, որը հետևողականորեն պաշտպանում է իր երկրի շահերը: Այս տեսանկյունից օրինաչափ է, որ երրորդ տարին անընդմեջ «Forbes» ամսագրի հարցումներով Վ. Պուտինը գլխավորում է աշխարհի ամենաազդեցիկ մարդկանց ցուցակը, իսկ 2016 թ. մարտի դրությամբ ՌԴ բնակչության 74 %-ը պատրաստ էր քվեարկելու Վ. Պուտինի օգտին[27]:

2013 թ. սեպտեմբերին Վ. Պուտինը նշեց. «Ռուսաստանի համար ազգային նույնականացման ձեռքբերումը և ամրապնդումը արմատական բնույթ ունեն, քանի որ առանց դրանց մենք չենք կարող հակադրվել արտաքին ու ներքին մարտահրավերներին, գլոբալ մրցակցության պայմաններում չենք կարող հասնել հաջողությունների»[28]: 2014 թ. մարտին «Լևադա» կենտրոնի կողմից ռուսաստանցիների շրջանում անցկացված հարցումներից պարզվել է, որ բնակչության 37 տոկոսը իրեն զգում է եվրոպացի, 59 տոկոսը գտնում է, որ արևմտյան քաղաքակրթական արժեքները համընդհանուր չեն, դրանք Ռուսաստանի համար միանշանակ չեն, և առկա են արժեքային ու մշակութային էական տարբերություններ: Հարցվածների մեծ մասը գտնում է, որ «արժեքային համակարգով Ռուսաստանը պետք է կողմնորոշվի ըստ անցյալի փորձի և ներկայիս սերնդի նվաճումների: Իսկ միակ ստանդարտը մոլորակի բոլոր բնակիչների համար արդարության ապահովումն է և Ռուսաստանը մոլորակի լավագույն պետություն դարձնելու ձգտումը»[29]:

Վերջին շրջանում ակտիվորեն քննարկվում է նաև եվրասիական քաղաքակրթական հայեցակարգը: Այստեղ հարկ ենք համարում տարբերակել եվրասիական ինտեգրացիան՝ որպես աշխարհաքաղաքական նախագիծ, և եվրասիական քաղաքակրթական հայեցակարգը: Այս տե-

---

[27] Տե՛ս «Число готовых проголосовать за Путина выросло до максимума за четыре года» // http://www.rbc.ru/politics/03/03/2016/56d7ebeb9a794750a015b5f9 (վերջին մուտքը՝ 21.05.2016թ.):

[28] «Владимир Путин: Вопрос обретения и укрепления национальной идентичности носит для России фундаментальный характер» (19 сентября 2013) // https://russian.rt.com/article/15641 (վերջին մուտքը՝ 21.05.2016թ.).

[29] **Лозовая М. Ю.** Особенности цивилизационной идентичности россиян // http://sibac.info/conf/social/xxxvii/38382(վերջին մուտքը՝ 21.05.2016թ.).

սության կողմնակիցները գտնում են, որ Եվրասիան ոչ թե Եվրոպայի և Ասիայի զուգորդումն է, այլ նրանց միջև գտնվող միջին մայրցամաք: Գ. Վերնադսկին դեռևս 1927 թ. նշում էր. «Չկա երկու Ռուսաստան՝ «եվրոպական» և «ասիական»: Գոյություն ունի միայն մեկ Ռուսաստան՝ «եվրասիական» կամ «Ռուսաստան-Եվրասիա»»[30]: Եվրասիականության գաղափարները միանշանակ չընդունվեցին ռուսաստանյան հասարակությունում: Նույնիսկ ՌԴ նախագահ Վ. Պուտինը այս հարցի նկատմամբ միանշանակ մոտեցում չուներ: 2005 թ. նա Կազանում հայտարարեց, որ Ռուսաստանը եվրասիական քաղաքակրթություն է, իսկ նույն թվականին Դաշնային ժողովին հղած իր ուղերձում Ռուսաստանը արդեն համարում էր «եվրոպական» երկիր: 2007 թ. Բաշկիրիան Ռուսաստանին միացնելու 450-ամյակին նվիրված իր ելույթում Վ. Պուտինը Ռուսաստանը կրկին անվանեց եվրասիական քաղաքակրթություն, իսկ 2012 թ. նշեց. «Ռուսաստանը դարեր ի վեր զարգանում է որպես բազմազգ պետություն, պետություն-քաղաքակրթություն, որը ամրանում է ռուս ժողովրդով, ռուսաց լեզվով և մշակույթով»[31]: Եվրասիացիները գտնում են, որ Ռուսաստանը բազմազգ քաղաքակրթություն է, որը պատմականորեն միավորվել է ռուս ժողովրդի միջոցով: Եվրասիացիների կարևոր խնդիրներից են յուրաքանչյուր ազգի ինքնատիպության պահպանումը և համաեվրասիական հայրենասիրության դաստիարակումը: 2014 թ. նոյեմբերին Մոսկվայում կայացած համաշխարհային ռուսական ազգային 28-րդ ժողովում ընդունվեց «Ռուսական նույնականացման» հռչակագիրը, որտեղ նշված էր. «Ռուս ժողովուրդը գենետիկ բարդ կազմավորում է և ներառում է սլավոնական, ուգրոֆինական, սկանդինավյան, բալթյան, իրանական և թյուրքական ցեղեր, որոնք ռուս ժողովրդի ազգային միասնականության համար երբեք սպառնալիք չեն եղել: Պատկանելությունը ռուս ազգին որոշվել է գենետիկ, ամուսնական, մշակութային և պատմական կապերի բարդ համադրմամբ:

Ռուսական նույնականացումը այն է, որ մարդ իրեն ռուս է համարում, չունի այլ էթնիկ նախապատվություն, խոսում և մտածում է ռուսերեն, իր ազգային և հոգևոր մշակույթի հիմքը ընդունում է ուղղափառությունը, համերաշխ է ռուս ժողովրդի ճակատագրի հետ»[32]:

Վիկտոր Ակսյուտիչը իրավամբ ուտոպիական է համարում եվրասիական քաղաքակրթության ստեղծումը. նա գտնում է, որ Եվրասիայում իսլամ, հուդայականություն, բուդդայականություն և շամանականություն դավանող ազգերը չեն համաձայնվի, որ կրոնական առումով

---

[30] Հղումն ըստ՝ **Клубков А.** Евразийская доктрина Путина и классическое евразийство (10.04.2015) // http://eurasian-movement.ru/archives/14551 (վերջին մուտքը՝ 21. 05.2016թ.):

[31] Նույն տեղում:

[32] «ВРНС: Принята декларация русской идентичности» (12 ноября 2014) // http://www.pravoslavie.ru/75079.html (վերջին մուտքը՝ 21.05.2016թ.):

ինտեգրվեն ուղղափառությանը: Ժամանակակից «եվրասիականության» կողմնակիցները (Թաթարստանի և Ղազախստանի ղեկավարները) եվրասիականությունը համարում են այլընտրանք ռուս ազգի պետականության ու մշակույթի վերածննդի գործընթացներին[33]: Եվրասիականության կողմնակիցների շրջանում դեռևս բացակայում է տարածքային նույնականացումը: Մի մասը այն համարում է նախկին ԽՍՀՄ տարածքը, մյուս մասը ներառում է նաև Չինաստանը, Հնդկաստանը և Միջին Արևելքը: Այս կապակցությամբ Ս. Կարագանովը նշում է. «Հասարակության հոգևոր զարգացումը պահանջում է ժամանակակից, սակայն նախկին նվաճումների հիման վրա արմատավորված նույնականացման մշակում: Դրա հենքը ռուսաց լեզուն ու մշակույթն է (հատկապես գրականությունը), հարգանքը կրթության ու գիտության և, իհարկե, փառապանծ ռազմական հաղթանակների և անկախության համար մղված պայքարի նկատմամբ»[34]: Նրա կարծիքով, եթե եվրասիական միության ստեղծումը ենթադրում է Ռուսական կայսրության վերականգնում, ապա այն դատապարտված է ձախողման, և միանգամայն այլ խնդիր է, եթե այն որպես կամավոր միավորում պետք է կառուցվի երբեմնի ավերակների վրա՝ որպես տնտեսական, մարդկային և քաղաքական նոր հանրություն[35]:

Եվրասիական քաղաքակրթությունում բացակայում են նաև ընդհանուր տարածքը, լեզուն, մշակութային տիպաբանությունում բացակայում է պատմական սուբյեկտը՝ ժողովուրդը, իսկ պետականությունը փոխվում է իդեոկրատիայով: Վ. Ակսյուչիցը գտնում է, որ եթե եվրասիականությանը բնորոշ է մոնղոլոֆիլիան, ապա նեոեվրասիականությանը՝ թյուրքոֆիլիան, այսինքն՝ գերագնահատված է Ռուսաստանի ոչ ռուս էթնոսների դերը, և որոշակիորեն նաև ռուսոֆոբիա է պարունակում (ռուսական էթնոսը թուլանում է, իսկ թյուրքականը և իսլամականը՝ ուժեղանում)[36]:

Ռուս ազգայնականների մի մասը գտնում է, որ եվրասիական քաղաքակրթական (ոչ որպես աշխարհաքաղաքական տարածք) գաղափարների օգտագործումը վնասում է ռուսական պետականությանը, քանի որ Եվրասիայում այն փոխարինվում է «բազմազգայինով», իսկ ըստ էության՝ թյուրքական պետականությամբ:

Հասկանալի է, որ այս տեսանկյունից այդ գաղափարներն ընդունելի չեն նաև Բելառուսի և Հայաստանի համար: 2014 թ. ռուսաստանցիների շրջանում անցկացված հարցումները ևս վկայում են, որ նրանց համար նույնպես եվրասիական վեկտորը գերիշխող չէ: Երբ նրանց

---

[33] Տե՛ս **Аксючиц В.** Соблазн евразийства (28/03/2001) // http://www.pravoslavie.ru/jurnal/ideas/eurasiasoblazn.htm (վերջին մուտքը՝ 21.05.2016թ.):

[34] «**Караганов С.**: Стратегия просвещенного консерватизма» // http://svop.ru/news/10199 (վերջին մուտքը՝ 21.05.2016թ.):

[35] Տե՛ս նույն տեղը:

[36] Տե՛ս **Аксючиц В.,** նշվ. աշխ.:

հարցնում էին եվրասիական քաղաքակրթական նույնականացման մասին, նրանք հստակ պատկերացում չունեին, թե ինչ է դա, և Ռուսաստանը ավելի շատ ընդունում էին ոչ թե եվրասիական, այլ եվրոպական-եվրասիական երկիր[37]:

Հատկապես վերջին 10 տարիներին Ռուսաստանում պահպանողական գաղափարները լայն տարածում ստացան: Հասարակական կարծիքի ուսումնասիրման համառուսաստանյան կենտրոնի (ВЦИОМ) 2014 թ. մարտին անցկացրած հարցումները վկայում են, որ ռուսաստանցիների 56 %-ը գտնում է, որ պահպանողականությունը նպաստում է երկրի զարգացմանը և ավանդույթների պահպանմանը[38]:

2013 թ. սեպտեմբերին Վ. Պուտինը հարցազրույցի ընթացքում նշեց, որ ինքը կիսում է պահպանողականության փիլիսոփայությունը, և ընդգծեց, որ պահպանողականության հենքը ավանդական արժեքներն են, սակայն պարտադիր դեպի զարգացումը միտված տարրերով: Այս մտքերը նա երկու շաբաթ անց զարգացրեց «Վալդայ» վիճաբանական ակումբում և ՌԴ դաշնային ժողովին ուղղված դեկտեմբերյան ուղերձում[39]: Ինչո՞վ բացատրել այն հանգամանքը, որ Արևմուտքում ազատականությունը ամրապնդվեց պահպանողականության դեմ պայքարով, իսկ Ռուսաստանում ճիշտ հակառակն է: Պահպանողական գաղափարախոսության տարածմանը նպաստում է մի քանի հանգամանք: Այս տեսանկյունից արժե հիշատակել Ռուսաստանի աշխարհաքաղաքական դերակատարման նվազումը, ազգային և քաղաքակրթական նույնականացման կորուստը և պատմական հեռանկարի անորոշությունը, ինչպես նաև ազատական բարենորոգումների պայմաններում ազգային ինքնագիտակցության ձևախեղումները: Ռուսական պահպանողականության հիմքում ընկած են ուղղափառության հազարամյա ավանդույթները, ռուսաստանյան հասարակության՝ ուժեղ պետություն ունենալու ձգտումը, անհատի շահերի ստորադասումը կոլեկտիվի շահերին, իրավական նիհիլիզմը, սոցիալական արդարության և փոխօգնության սուր զգացումը և «արհամարհական» վերաբերմունքը մասնավոր սեփականության ու հարստության նկատմամբ, քանի որ, ըստ ռուսական մենթալիտետի, այն ավելի շատ պայմանավորված է ոչ թե սոցիալական ակտիվությամբ կամ անհատի կողմից ցուցաբերվող նախաձեռնողականությամբ, այլ շահագործմամբ: Քանի որ, պատմական զարգացման առանձնահատկություններից ելնելով, Ռուսաստանում ժողովրդավարական ավանդույթները թույլ են զարգացած, ուստի ավելի մեծ պատասխանատվություն վերապահվում է ոչ թե քա-

---

[37] Տե՛ս **Андреев А., Петухов В.** Россия и окружающий мир // http://svom.info/entry/5-60-rossiya-i-okruzhayushij-mir-kak-menyaetsya-otnoshe (վերջին մուտքը՝ 21.05.2016թ.):

[38] Տե՛ս «Опрос: консерватизм в России стал популярнее» (04.04.2014) // http://ria.ru/society/20140404/1002526094.html (վերջին մուտքը՝ 21.05.2016թ.):

[39] Տե՛ս նույն տեղը:

ղաքացիական հասարակությանը, այլ պետությանը: Օրինակ՝ ՌԴ պետդումայի պատգամավոր Անդրեյ Իսաևը գտնում է, որ Ռուսաստանի ժողովրդի առջև ծառացած գաղափարական ընտրության հարցը միաժամանակ ընտրություն է, թե ինչպիսի ճանապարհով իրականացնել արդիականացումը՝ ժողովրդավարակա՞ն, թե՞ ավտորիտար: Նրա կարծիքով, միայն պահպանողականության ճանապարհով է հնարավոր ժողովրդավարական միջոցներով իրականացնել արդիականացումը[40]: Իշխանությունները, նկատի ունենալով Ռուսաստանի քաղաքացիական հաստատությունների, բնակչության մեջ արժեքային համակարգի թուլացումը, գտնում են, որ արդիականացման բնականոն ընթացքը հնարավոր է ապահովել՝ օգտագործելով քաղաքակրթական ռեսուրսը:

Այսպիսով, քաղաքակրթությունները իրարից տարբերվում են ոչ միայն էթնիկ, ռասայական, պատմական զարգացման առանձնահատկություններով, տնտեսական ներուժով, կրոնով, աշխարհայացքով, այլև գաղափարական առումով:

Վերջին տասնամյակների աշխարհաքաղաքական զարգացումներով պայմանավորված՝ Ռուսաստանի համար ճիշտը առանձին քաղաքակրթությամբ հանդես գալն է: Ինչպիսի՞ կեցվածք կամ դիրքորոշում պետք է գրավի Ռուսաստանը գլոբալացվող աշխարհում: Ներկայումս Ռուսաստանը չի կարող հանդես գալ որպես տնտեսական բևեռ, սակայն նկատի ունենալով ռազմական և քաղաքական ներուժը՝ ՌԴ-ի համար ամենաարդյունավետը որպես քաղաքակրթական ուրույն բևեռ հանդես գալն է: Քաղաքակրթական գործոնը կարելի է հիմնավորել Ռուսաստանի անցած պատմական ուրույն ուղիով և այն առաքելությամբ, որը ներառում է էթնիկ ու կրոնական առանձնահատկությունները, ազգային խառնվածքին բնորոշ պահպանողականությունը: Ռուսաստանը արտաքին ու ներքին բոլոր վայրիվերումների ժամանակ ամենաքիչը տուժեց քաղաքակրթական տեսանկյունից: Այդ առումով հատկապես կարևորվում է քաղաքակրթական նույնականացման խնդիրը: Ռուսական քաղաքակրթությունը յուրահատուկ է. բաղկացուցիչ մասերն են մոնղոլական, ուգրոֆիննական, թյուրքական և այլ տարրերը: Այնուամենայնիվ, այդ քաղաքակրթության պետականակերտ տարրը և միավորիչ գործոնը ռուս ժողովուրդն է, որը մշակութային առումով որոշիչ դերակատարում է ունեցել: Ռուսական քաղաքակրթությունը՝ որպես ուղղափառ-սլավոնական քաղաքակրթության բաղկացուցիչ մաս, այնուամենայնիվ ստեղծեց իր հոգևոր ու պատմական ուրույն արժեքները, ժամանակի ամենահզոր պետություններից մեկը, որը միավորեց և դինամիկ ազդակներ հաղորդեց Եվրասիա հսկայական մայրցամաքին: Ի տարբերություն այլ քաղաքակրթությունների՝ ռուսականը բազմազգ և բազմակրոն էթնոսների շփման արդ-

[40] Տե՛ս **Исаев А.** Консервативная идеология и современная политическая система // http://www.cscp.ru/8/10996/?print (վերջին մուտքը՝ 21.05.2016թ.):

յունք է և ձևավորվել է որպես բազմազգ պետություն: Ռուսաստանի քաղաքակրթական նույնականացումը նրան հնարավորություն կտա հանդես գալու որպես քաղաքակրթական ուրույն բևեռ: Մեր կարծիքով, սխալ է այն հարցադրումը, թե Ռուսաստանը եվրոպական կամ ասիական երկիր է: Ռուսաստանը ինքնաբավ երկիր է և կարիք չունի իրեն նույնականացնելու Եվրոպայի կամ Ասիայի հետ: Այս ամենը չի նշանակում հակադրվել Եվրոպային կամ Ասիային: Ճիշտ հակառակը. այս տեսանկյունից ռուսական քաղաքակրթությունը փակ համակարգ չէ: Անհրաժեշտության դեպքում, երբ Եվրոպան զգում է Ռուսաստանի կարիքը, անմիջապես փորձում է նրան դասել եվրոպական երկրների շարքին: Այդպես եղավ նապոլեոնյան պատերազմների, Առաջին աշխարհամարտի և նացիստական Գերմանիայի դեմ պայքարի տարիներին:

Ռուսաստանի քաղաքակրթական նույնականացումը կնպաստի նաև նրա տնտեսական վերելքին, բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, քանի որ առանց հոգևոր ու նյութական ռեսուրսների համախմբման ոչ մի պետություն չի կարող կարևոր դերակատարում ունենալ: Գլոբալացման շրջանում Արևմուտքի քաղաքակրթական բազմաթիվ տարրեր առկա են Արևելքում, իսկ Արևելքը պակաս ներկայացված չէ Արևմուտքում: Նման տեսանկյունից իրատեսական չեն այնպիսի հարցադրումները, թե Ռուսաստանը Արևմո՞ւտք է, թե՞ Արևելք, կամ էլ՝ նա դրանց սինթեզն է: Այս դեպքում խոսք կարող է լինել ոչ թե Արևելքի կամ Արևմուտքի միջև ընտրություն կատարելու, այլ արժեքային համակարգի վերագնահատման մասին: Անհրաժեշտ է զարգացման սեփական ուղին ընտրել՝ հաշվի առնելով աշխարհում տեղի ունեցող փոփոխությունները: Եթե նախկինում երկրի արդիականացումը փոխկապակցված էին դիտում Եվրոպայի հետ, ապա այժմ՝ սեփական ռեսուրսների համախմբման և Արևելքի հետ:

Ինչ վերաբերում է Արևելքին, ապա չինական, ճապոնական, հարավկորեական և Սինգապուրի զարգացման մոդելները հրապուրիչ չեն ռուսաստանյան հասարակության համար: Չինաստանը իր հերթին հեռու է Ռուսաստանի արդյունաբերական հիմնական կենտրոններից, Մոսկվան զգուշանում է նրա ժողովրդագրական սպառնալիքից, իսկ քաղաքակրթական տեսանկյունից այն բավականին տարբերվում է ռուսականից: 2014 թ. գարնանը սկսված ռուս-չինական մերձեցումը սպասվելիք արդյունքները չունեցավ: ՌԴ-ն և ՉԺՀ-ն տնտեսական առումով փոխկապակցված չեն: Չնայած մեքենաշինության և նավթագազային բնագավառում 2015 թ. կնքված երկկողմանի խոշոր պայմանագրերին՝ նույն թվականին առևտուրը երկու երկրների միջև նվազեց 30 տոկոսով, իսկ Չինաստանի՝ արտասահմանյան ներդրումների միայն 0.7 տոկոսն էր բաժին ընկնում Ռուսաստանին[41]: Չինաստանի խոշորա-

[41] Տե՛ս **Коростиков М.** Уроки китайского. Почему российский «поворот на Восток» пока не оправдывается (08.02.2016) // http://www.centrasia.ru/newsA.php?st=1454922720 (վերջին մուտքը՝ 21.05.2016թ.):

գույն բանկերը ամերիկացիների հետ հարաբերությունները չվատացնելու համար վարկեր չտրամադրեցին Ռուսաստանին: Այս ամենը օրինաչափ էր, քանի որ պրագմատիկ չինացիները, շարժվելով տնտեսական կոշտ տրամաբանությամբ, ակտիվ ներդրումների համար առանձնացնում են երկրների երկու խումբ: Առաջին խմբի մեջ մտնում են առաջին աշխարհի երկրները, որոնցից չինացիները ակնկալում են ստանալ ժամանակակից տեխնոլոգիաներ և սովորել արդյունավետ կառավարում: Երկրորդ խմբում ընդգրկված են երրորդ աշխարհի երկրները՝ էժան հումքով ու աշխատուժով և այնպիսի աշխատանքային օրենսդրությամբ, որոնք դժվարություններ չեն հարուցի չինական ընկերությունների համար: Ինչո՞ւ Պեկինը ներդրումներ պետք է իրականացնի Ռուսաստանում, որը այդ խմբի մեջ չի մտնում, ավելին, ըստ բիզնես վարելու հնարավորությունների «Doing Business»-ի սանդղակի, ՉԺՀ-ի անմիջական հարևանությամբ են գտնվում Սինգապուրը (1-ին տեղ), Հոնկոնգը (5-րդ տեղ), Հարավային Կորեան (4-րդ տեղ), Թայվանը (11-րդ տեղ), Մալայզիան (18-րդ տեղ): ՌԴ-ն այս շարքում գրավում է 51-րդ տեղը: Ներդրումների գրավչությամբ, ըստ «Global Opportunity» գործակալության տվյալների, Սինգապուրը գրավում է 1-ին, Հոնկոնգը՝ 2-րդ, Մալայզիան՝ 10-րդ, Հարավային Կորեան՝ 28-րդ, Ճապոնիան՝ 17-րդ, իսկ Ռուսաստանը՝ 81-րդ տեղը[42]: Բացի այդ, չինացիները, օգտվելով Արևմուտքի պատժամիջոցներից, մի քանի անգամ բարձրացրին իրենց արտադրության էլեկտրոնային պահեստամասերի գները, իսկ ներդրումներ անելու դեպքում ցանկանում են ստանալ 50 տոկոս զումարած 1 ձայնի իրավունք[43]: Չինաստանը 2016 թ. սկզբներին նույնիսկ միացավ նոր «Մետաքսի ճանապարհին», որն անցնում է Ուկրաինա-Վրաստան-Ադրբեջան-Ղազախստան-Չինաստան երթուղով[44]:

Այսպիսով, եթե ամփոփենք վերը շարադրվածը, ապա կարող ենք կատարել հետևյալ եզրակացությունները:

1. Ռուսաստանը այսօր կանգնած է քաղաքակրթական ընտրության կամ նույնականացման խնդրի առջև, որը նրա համար ոչ միայն ազգային անվտանգության խնդիր է, այլև այդ ընտրությունից են կախված երկրի արտաքին քաղաքականությունը, ներքին բարենորոգումները և արդիականացումը: Ցանկացած մեծ պետության համար հնարավոր չէ կանխատեսել երկրի ապագան՝ առանց որոշելու նրա քաղաքակրթական դերակատարումը:

2. Ռուսական պետությունը ստեղծվել է անընդմեջ պատերազմների բովում: Հանուն գոյատևման՝ նա ստիպված է եղել պայքարել ինչպես Արևմուտքի սպառնալիքների, այնպես էլ Արևելքի նկրտումների դեմ: Ճիշտ է, հակամարտությունը մարդկային հասարակության զար-

[42] Տե՛ս նույն տեղը:
[43] Տե՛ս նույն տեղը:
[44] Տե՛ս «Ազգ», 10 փետրվարի, 2016 թ.:

գացման բնականոն ձևերից է, իսկ քաղաքակրթությունների պարագայում այդ հակամարտությունը ընթանում է համաշխարհային գերիշխանության համար:

3. Այն հարցադրմանը, թե Ռուսաստանը Եվրոպա՞ է, թե՞ ոչ, պետք է պատասխանել՝ նկատի ունենալով ոչ թե աշխարհագրական, այլ սոցիալ-տնտեսական, մշակութային, այսինքն՝ ավելի շատ քաղաքակրթական գործոնը: Այս դեպքում հարց է առաջանում. արդյո՞ք Ռուսաստանը պատկանում է արևմտաեվրոպական քաղաքակրթությանը: Ռուսաստանը չի կարող միանալ Եվրոպային, քանի որ միանգամայն այլ տիպի քաղաքակրթություն է, ունի մշակութային և կրոնական ուրույն կոդ: Ռուսաստանը ունի պետական ինքնատիպ կառուցվածք, որը բխում է ռուս ժողովրդի պատմությունից, առանձնահատկությունից և ոգուց: Բացի այդ, այսօրվա Եվրոպան քաղաքակրթական առումով ավելի ամորֆ է և, սպառելով իր արժեքային համակարգը, վերածվել է սպառողական ինդուստրիալ քաղաքակրթության: «Եվրոպական երազանքը» աստիճանաբար կորցնում է իր գրավչությունը: Հետխորհրդային Ռուսաստանը երկար տարիներ գտնվել է Եվրոպայի վերջնագծում և այժմ չի պատրաստվում նրան ինտեգրվելով՝ իր վրա վերցնել նրա «մեղքերի» մի մասը:

4. Արևմուտքի հետ հարաբերությունների վատթարացման պայմաններում Արևելքը ընկալվում է որպես այլընտրանքային կենտրոն: Այստեղ շեշտադրումը հիմնականում ուղղված է դեպի Չինաստանը (Բրազիլիան, Հարավաֆրիկյան Հանրապետությունը և Հնդկաստանը տնտեսական առումով իրենց Արևմուտք են համարում): Սակայն այս ձևաչափով ևս Ռուսաստանը չի կարող միանալ Արևելքին հետևյալ պատճառներով: Նախ և առաջ մշակութային կողմնորոշման, տեխնիկական զարգացման և արտադրական ուժերի կազմակերպման տեսանկյունից Ռուսաստանը ավելի մոտ է եվրոպականին, քան ասիականին:

5. Ռուսաստանը չի կարող միանալ Արևմուտքին կամ Արևելքին ևս մեկ կարևոր պատճառով. Ռուսաստանի համար դարեր շարունակ կարևոր են եղել ոչ թե ազգային, այլ քաղաքական, կրոնական և գաղափարական գործոնները: Այդ իսկ պատճառով Ռուսաստանում ազգային շահը շատ հաճախ նույնացվել է պետականի հետ: Հզոր պետության կարգավիճակի կորուստը ռուսական ազգային ինքնագիտակցությունում համարժեք է անկախության կորստի հետ: Ռուս ժողովրդի պատմական հիշողության մեջ դեռևս մնում է այն իրողությունը, որ իր գոյության ընթացքում Ռուսաստանն իր առջև ծառացած հիմնախնդիրները կարողացել է հաղթահարել միայն պետականության ամրապնդմամբ:

6. Քաղաքակրթական նույնականությունը կարևորվում է նաև այն տեսանկյունից, որ հստակեցնում է, թե ինչպիսի սահմաններ պետք է պաշտպանի ռուսական պետությունը: Ռազմական պարտությունը

դեռևս չի նշանակում երկրի կործանում, իսկ ազգային ու քաղաքակրթական նույնականացման վերացումը անվերապահորեն ենթադրում է պետականության կորուստ: Այդ իսկ պատճառով ներկայումս Արևմուտքը իր հիմնական հարվածը հասցեագրում է ոչ թե Ռուսաստանի Դաշնությանը, այլ նրա արժեքային համակարգին և քաղաքակրթական նույնականացմանը: Նույնիսկ տնտեսական առումով զարգացած երկրներում գիտատեխնիկական նվաճումները և նյութական բարեկեցությունը ինքնաբերաբար չեն նպաստում ժողովրդի հոգևոր աճին, ազգային և սոցիալական հարցերի լուծմանը:

7. Մեր կարծիքով, սխալ են այն պատկերացումները, որ եթե Ռուսաստանն ընդգրկվի որևէ ուժային կենտրոնի ազդեցության ոլորտ, ապա ֆինանսական տեսանկյունից դա իր համար առավել ձեռնտու կլինի: Այս դեպքում կուժեղանա ներքին լարվածությունը, հասարակությունը կտրոհվի, իսկ գլոբալ խաղի մեջ մտնելու դեպքում՝ այն առավել արդյունավետ և ոչ ռիսկային կլինի: Պատահական չէ, որ ռուսաստանյան հասարակությունը ներկայիս պայմանները ավելի կանխատեսելի և ոչ ռիսկային է համարում, քան Մ. Գորբաչովի և Բ. Ելցինի կառավարման շրջանները:

8. Ռուսաստանը կարիք չունի միանալու ո՛չ Եվրոպային և ո՛չ էլ Ասիային: Ռուսաստանը ո՛չ Եվրոպա է, ո՛չ էլ Ասիա կամ Եվրասիա: Այն պարզապես Ռուսաստան է, որն ուրույն քաղաքակրթություն է: Միայն այս ճանապարհով նա կարող է պահպանել իր պատմական ինքնատիպությունը: Նման հարցադրումը այսօր տարօրինակ է, քանի որ նույն տեսանկյունից կարող ենք դիտարկել, թե որ քաղաքակրթությանը կարող են միանալ Չինաստանը, Ճապոնիան կամ Հնդկաստանը:

Ռուսաստանի քաղաքակրթական նույնականացումը կվերացնի նաև այն բացերը, որ առկա են տնտեսության և կառավարման բնագավառներում: Միայն այս ճանապարհով մեծապետական Ռուսաստանը կարող է մնալ որպես համաշխարհային քաղաքականության կարևոր գործոն: Միաժամանակ, քաղաքակրթական նույնականացումը չի ենթադրում, որ Ռուսաստանը չպետք է համագործակցի այլ քաղաքակրթությունների հետ: Ճիշտ հակառակը. իր գոյության ընթացքում Ռուսաստանը բարգավաճել է՝ խորացնելով այդ համագործակցությունը:

9. Կրեմլը պետք է աշխատի օգտագործել Ղրիմի իրադարձությունները կամ «ռուսական գարունը»՝ Ռուսաստանի քաղաքակրթական նույնականացման գործընթացը ավարտին հասցնելու, ինչպես նաև «ռուսական աշխարհի» գործուն կենտրոն դառնալու համար, որի շնորհիվ միայն կարող է վերածվել աշխարհի մրցունակ բևեռի:

Բանալի բառեր *– քաղաքակրթական նույնականացում, ԱՄՆ, ԵՄ, ռուսական քաղաքակրթություն, ռուսական աշխարհ, եվրասիական քաղաքակրթություն, գլոբալիզացիա*

МАРУТ ВАРДАЗАРЯН – ***Проблема цивилизационной идентификации РФ во внешней политике.*** – В современных геополитических процессах особое значение приобретает цивилизационная идентификация России. Она должна способствовать консолидации власти и обшества, упростить преодоление стоящих перед страной трудностей. С точки зрения внешней политики цивилизационная идентификация предполагает, что государство выбирает вектор своего развития, формирует на международной арене новый образ, а также обеспечивает более высокий уровень суверенитета и национальной безопасности. Россия не является ни Европой, ни Азией и ни Евразией; это именно Россия, представляющая особую цивилизацию. Только так она способна сохранить свою историческую индивидуальность и, сотрудничая с другими цивилизациями, выступать важным фактором мировой цивилизации.

Ключевые слова: *цивилизационная идентификация, США, ЕС, российская цивилизация, русский мир, евразийская цивилизация, глобализация*

MARUT VARDAZARYAN – ***Civilization Identification Problem of the Russian Federation in the Foreign Policy.*** – In the current complex geopolitical processes the civilizational identification of the Russian Federation is highlighted. It will contribute to the consolidation of the government and the society and will simplify the overcoming of the challenges that the country faces. In terms of foreign policy, the civilizational identification assumes the selection of the development vector of the country, the formation of a new image in the current international arena, as well as the assurance of sovereignty and national security. Russia is neither Europe nor Asia nor Eurasia, but simply Russia, which at the same time is a unique civilization. Only in this way it can preserve its historical individuality and through cooperation with other civilizations it can continue to stay as an important factor of the world civilization.

Key words: *civilizational identification, the USA, the EU, Russian civilization, Russian world, Eurasian civilization, globalization*

ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (1991-2008 ԹԹ.)

ԼՈՒՍԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Անկախության վերականգնումից հետո Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության օրակարգում առաջնային խնդիրների շարքին դասվեց նաև հարևան երկրների հետ տնտեսական կապերի ձևավորման ու զարգացման հարցը: Այս առումով կարևոր նշանակություն ձեռք բերեց հարևան Իրանը, ինչն առաջին հերթին պայմանավորված էր նրա տարանցիկ նշանակությամբ, իսկ Արցախյան պատերազմի թեժացման պայմաններում՝ թուրք-ադրբեջանական շրջափակումից դուրս գալու հրամայականով: Հայաստանը նույնպես Իրանի համար ունի տնտեսական որոշակի նշանակություն, առաջին հերթին՝ էներգակիրների տարանցման ծրագրերի իրագործման և տարածաշրջանում Իրանի ավանդական շահերի իրացման տեսանկյունից: Փաստորեն, Իրանի հետ հարաբերությունների զարգացման գործում կարևոր նշանակություն ստացավ երկկողմ տնտեսական շահերի հանգամանքը: Այս մասին է վկայում նաև այն, որ մինչև այսօր էլ երկու երկրների հարաբերություններն առավելապես ծավալվում են տնտեսական հարթությունում: Միևնույն ժամանակ, երկկողմ փոխհարաբերությունների զարգացման գործում պակաս նշանակություն չունեցան նաև քաղաքական շահերն ու պատմամշակութային որոշակի ընդհանրությունները:

Երկկողմ տնտեսական հարաբերությունների զարգացմանը նպաստում է նաև այն, որ Հայաստանն ու Իրանը, լինելով հարևաններ, տարածաշրջանի այն քիչ երկրներից են, որ չունեն տարածքային վեճեր, քաղաքական տարաձայնություններ:

Իրանի Իսլամական Հանրապետությունը առաջիններից էր, որ 1991 թ. դեկտեմբերի 25-ին ճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը: 1992 թ. փետրվարի 9-ին Թեհրանում երկու երկրների արտգործնախարարները ստորագրեցին ՀՀ և ԻԻՀ միջև լիարժեք դիվանագիտական հարաբերություններ հաստատելու վերաբերյալ հռչակագիրը: Նույն օրը ստորագրվեց նաև «Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև հարաբերությունների սկզբունքների և նպատակների մասին» հռչակագիրը[1]: Դրանով կողմերը հավաստում էին բարիդրացիական հարաբերություններ հաստատելու իրենց մտադրությունը:

[1] Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 326, ց. 9, գ. 68, թ. 14-15:

1992 թ. փետրվարի 28-ին պաշտոնական այցով Երևան ժամանեց ԻԻՀ արտգործնախարար Ալի Աքբար Վելայաթին: Նա կարծիք հայտնեց, որ այսուհետ Իրանը Հայաստանի համար լինելու է աշխարհին կապող ամենակարճ ճանապարհը, և Հայաստանին այլևս չեն սպառնա շրջափակումները[2]: Իրանի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը հայտարարեց, որ Հայաստանը տարանցման հարցերում կարող է շեշտը դնել Իրանի հետ համագործակցության վրա:

Երկու երկրների միջև բարեկամական հարաբերությունները նոր մակարդակի վրա դրվեցին 1992 թ. մայիսի 6-8-ը ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի՝ Իրան կատարած պաշտոնական այցի շրջանակներում ստորագրված «Համագործակցության, բարեկամության և բարիդրացիության մասին» փաստաթղթով[3]: 1992 թ. նոյեմբերին ՀՀ նախագահի հրամանագրով ստեղծվեց «Հայ-իրանական հարաբերությունները համակարգող պետական հանձնախումբ»[4], իսկ երկու երկրների միջև առևտրատնտեսական հարաբերությունները խթանելու նպատակով Թեհրանում ստեղծվեց «Իրան-Հայաստան առևտրական պալատ»՝ իրանահայ գործարար Լևոն Ահարոնյանի գլխավորությամբ[5]:

Անուրանալի է, որ Ղարաբաղյան պատերազմի տարիներին, ընդհուպ մինչև 1994 թ. զինադադարի կնքումը, Իրանի Իսլամական Հանրապետությունը Հայաստանին սննդամթերք և նավթամթերք մատակարարող գլխավոր երկիրն էր: 1992 թ. Թեհրանում Հայաստանի Հանրապետության դեսպանության բացումը մեծ լիցք հաղորդեց երկու երկրների առևտրատնտեսական հարաբերություններին:

Առևտրային հարաբերությունների զարգացման գործում կարևոր նշանակություն ունեցավ Արաքս գետի վրա 1992 թ. մայիսին գցված ժամանակավոր նավակամուրջը, իսկ 1996 թ. հունվարի 9-ին բացված կամուրջը մեծապես խթանեց երկկողմ առևտրաշրջանառությանը: Այս կամրջի շինարարությունն ավելի քան նշանակալից էր. Իրանի Իսլամական Հանրապետությունը Հայաստանի Հանրապետության համար դարձավ Պարսից ծոցի, Հեռավոր Արևելքի, Հարավարևելյան Ասիայի երկրներից բեռների փոխադրման տարանցիկ ճանապարհ: Բեռնափոխադրումներն ավելացան երեք-չորս անգամ: Կամրջի շահագործումից արդեն չորս տարի անց Իրանից Հայաստան էր տեղափոխվում տարեկան միջինը 50 հազար տոննա էներգակիր, ինչը գումարային առումով հարյուր անգամ ավելին էր, քան 1992 թ. Իրանից Հայաստան ներկրված

---

[2] Տե՛ս **Վ. Ա. Բայբուրդյան,** Հայ-իրանական հարաբերությունները Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո // «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. XVII, Եր., 1998, էջ 7:

[3] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 12.05.1992:

[4] Տե՛ս ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժնի նյութեր, ցուցակ 1, գործ 286:

[5] Տե՛ս **Գ. Իսկանդարյան,** Հայ-իրանական հարաբերությունները Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո, Եր., 2007, էջ 18:

բոլոր տեսակի ապրանքների ծավալները միասին վերցրած[6]: Այս կամրջի կարևորությունը հատկապես զգալի էր Ադրբեջանի հետ ռազմական գործողությունների պայմաններում, քանի որ դրանով իրականացվում էր մեզ համար կենսական ապրանքների փոխադրումը: Մշտական կամրջի շահագործումը հնարավորություն տվեց Իրանի տարածքով իրականացնելու նաև տարանցիկ բեռների փոխադրումը Հայաստան: Խոշոր ծավալներով սկսեց գործել Պարսից ծոց–Իրան–Հայաստան տրանսպորտային ուղին: Ծայր առավ նաև Հայաստանի տարածքով իրանական բեռնատար մեքենաների տարանցիկ ուղին դեպի Սև ծով և հակառակ ուղղությամբ: Մեղրիի շրջանում գործող մաքսակետը վերածվեց միջազգային սահմանային անցակետի:

1990-ական թվականների երկրորդ կեսին Հայաստանի արտաքին տնտեսական կապերի մեջ Իրանը գրավում էր երկրորդ տեղը՝ զիջելով միայն Ռուսաստանին: Հայաստանի Հանրապետությունում գործում էին 200-ից ավելի հայ-իրանական ձեռնարկություններ: ԻԻՀ առանձին նահանգներ ուղիղ կապեր էին հաստատել Հայաստանի պետական և մասնավոր հատվածների հետ:

1997 թ. երկու երկրների միջև ապրանքաշրջանառությունն ավելացավ երեք անգամ և անցավ տարեկան 200 մլն դոլարի սանդղակը: Մեկնարկեց նաև սահմանային առևտուրը, որի զարգացմանը երկուստեք մեծ կարևորություն էր տրվում: 1994 թ. Հայաստանի և Իրանի կառավարությունները ստորագրեցին համաձայնագիր Մեղրիի շրջանի և Իրանի Մարանդ գավառի միջև սահմանամերձ առևտրի մասին:

Հայ–իրանական զարգացող առևտրատնտեսական հարաբերություններում օրակարգային անհետաձգելի լուծման հարց դարձավ նաև բանկային համակարգում համագործակցության խնդիրը: 1995 թ. հունվարի 12-ին Երևանում բացվեց իրանական հայտնի բանկերից մեկի՝ «Բանկ Մելլաթի» մասնաճյուղը, որը կոչված էր հեշտացնելու երկու երկրների միջև առևտրական գործարքները[7]: Բանկային համակարգում համագործակցությունը հնարավորություն տվեց բացելու մասնավոր և պետական առևտրական ձեռնարկությունների մասնաճյուղեր, կազմակերպելու առևտրա-արդյունաբերական ցուցահանդեսներ և այլն:

Երկու երկրների միջև առևտրատնտեսական հարաբերությունները որակական նոր փուլ թևակոխեցին 1995 թ., երբ Իրանի, Հայաստանի և Թուրքմենստանի միջև ստորագրվեց եռակողմ համագործակցության մասին պայմանագիր: Կողմերը համաձայնվեցին համատեղ տրանսպորտային ընկերություններ ստեղծել Թեհրանում, Երևանում և

---

[6] Տե՛ս **Ս. Մելքումյան**, Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական կապերը: Եր., 2002, էջ 236:

[7] Տե՛ս **Վ. Ա. Բայբուրդյան,** Հայ-իրանական հարաբերությունները 1991 - 1998 թթ. // Հայացք երկու տասնամյակ հեռավորությունից, «Հայաստան-Իրան. 20 տարի համագործակցության ճանապարհով»: Միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., 2012 , էջ 45:

Աշխաբադում: Առևտրի բնագավառում երեք պետություններն էլ հանձն առան անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել՝ դյուրացնելու ապրանքաշրջանառությունը[8]:

Երկու երկրների միջև տնտեսական հարաբերությունները չեն սահմանափակվում միայն առևտրային փոխհարաբերություններով, այլ ընդգրկում են նաև խոշոր ծրագրեր: Առաջին հերթին խոսքը վերաբերում է էներգետիկ ոլորտում համագործակցությանը: 1992 թ. մեկնարկեցին, իսկ 1994 թ. ավարտին հասցվեցին Իրան-Հայաստան գազատարի շինարարության նախագծային-հետազոտական աշխատանքները: 1995 թ. կնքվեց համաձայնագիր Իրան–Հայաստան գազամուղ կառուցելու վերաբերյալ[9]: Նախնական պայմանավորվածության համաձայն՝ գազատարի տրամագիծը կազմելու էր 700 մմ, իսկ տարեկան թողունակությունը՝ 1,2 մլրդ մետր խորանարդ: Հետագայում նախատեսվում էր Հայաստան մատակարարվող գազի ծավալները հասցնել 2,3 մլրդ մետր խորանարդի: Յուրաքանչյուր 1 մետր խորանարդ գազի դիմաց Հայաստանը Իրանին մատակարարելու էր 3 կվտ էլեկտրաէներգիա: Սակայն գազատրի շինարարության աշխատանքները մեկ տասնամյակով հետաձգվեցին: Պատճառն այն էր, որ Ռուսաստանը անթաքույց դժգոհությամբ էր նայում էներգետիկ ոլորտում հայ-իրանական աճող համագործակցությանը: Որպես Հայաստանին գազ մատակարարող հիմնական պետություն, նա չէր ցանկանում կորցնել իր գերակա դիրքերը հայկական շուկայում: Այս էր պատճառը, որ գազատարի շինարարությունը սկսվեց միայն 2004 թ. Իրանի նախագահ Մոհամմադ Խաթամիի՝ Հայաստան կատարած պաշտոնական այցից հետո, իսկ գազատարի թողունակության ծավալները զգալիորեն նվազեցվեցին[10]: Գազատարի առաջին հատվածի բացման արարողությունը տեղի է ունեցել 2007 թ. մարտի 19-ին՝ ՀՀ և ԻԻՀ նախագահների մասնակցությամբ: Նույն օրը ստորագրվեց «Հայաստանի Հանրապետության կառավարության և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջև Արաքս գետի վրա հիդրոէլեկտրակայաններ կառուցելու և շահագործելու բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը[11]: Իրան-Հայաստան գազատարը շահագործման հանձնվեց 2008 թ., որի շինարարության ընդհանուր ծախսերը կազմեցին 250 մլն դոլար:

---

[8] Տե՛ս «Համաձայնագիր ՀՀ կառավարության և ԻԻՀ կառավարության միջև առևտրատնտեսական համագործակցության վերաբերյալ», ՀՀ ԱԳՆ պատմաղիվանագիտական բաժնի նյութեր, ցուցակ 1, գործ 286:

[9] Տե՛ս **Գ. Իսկանդարյան**, Հայաստան-Իրան հարաբերությունները էներգետիկ ոլորտում // Հայացք երկու տասնամյակ հեռավորությունից, «Հայաստան-Իրան. 20 տարի համագործակցության ճանապարհով»: Միջազգային գիտաժողովի նյութեր, էջ 91:

[10] Տե՛ս **Գ. Բաղալյան,** Հայաստան-Իրան հարաբերությունները 20 տարեկան են, Երևան-Թեհրան, 2012, էջ 264:

[11] Տե՛ս ՀՀ ԱԳՆ պատմաղիվանագիտական բաժնի նյութեր, ցուցակ 13, գործ 123:

Էներգետիկ ոլորտում համագործակցության հաջորդ փուլը բարձրավոլտ էլեկտրահաղորդակցության գծերի շինարարությունն էր: Առաջինը շահագործման հանձնվեց ռեկորդային կարճ ժամանակահատվածում՝ 1997 թ. սկզբներին: Ենթադրվում էր,որ այդ գիծը կշարունակվեր դեպի Վրաստան, որը, սակայն, տեղի չունեցավ Թբիլիսիի հրաժարվելու պատճառով: 2007 թ. ամռանը Իրանի արտգործնախարար Մ. Մոթաքին հայտարարեց, որ պաշտոնական Երևանի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել Թավրիզ-Մեղրի 200 կմ երկարությամբ նավթամուղի և Մեղրիում նավթավերամշակման գործարան կառուցելու վերաբերյալ[12]: Այս նախագիծը առայժմ մնում է միայն թղթի վրա՝ երկու հիմնական պատճառով: Նախ՝ սկսվեց համաշխարհային տնտեսական ճգնաժամը, և երկրորդ՝ այստեղ նույնպես կարելի է տեսնել Ռուսաստանի քաղաքական ազդեցության գործոնը. Հայաստանի հեղուկ վառելիքի շուկայում ռուսական ընկերություններն ունեն մենաշնորհային դիրքեր:

Երկկողմ տնտեսական կապերի զարգացման համար հանգուցային նշանակություն կարող է ունենալ Իրան-Հայաստան երկաթգծի կառուցումը: Ադրբեջանի շրջափակման հետևանքով չի գործում Երևան-Նախիջևան-Ջուլֆա-Թավրիզ երկաթգիծը: Նոր երկաթգիծ կառուցելու շուրջ բանակցությունները մեկնարկել են դեռևս 1992 թ., մշակվել են դրա կառուցապատման վերաբերյալ մի քանի նախագծեր, սակայն մինչ օրս այն դասվում է չիրականացված ծրագրերի շարքին[13]: Ակնհայտ է, որ այս ծրագրի իրագործման դեպքում Հայաստանը հնարավորություն կստանար իրանական երկաթուղային ցանցով մուտք գործելու հուսալի հաղորդակցական ուղիներ և դուրս գալու Պարսից ծոց ու Միջին Ասիա: Դրանով Իրանը լուծում կտար իր հեռահար նպատակներից ևս մեկին՝ ստեղծել հաղորդակցության ցանց, որը երկիրը կկապի Սև ծովի ավազանի և ԱՊՀ երկրների հետ: Նախնական հաշվարկների համաձայն՝ երկաթգծի շինարարության ընդհանուր ծախսը 1,8 մլրդ դոլար էր, որից 1,4 մլրդը պետք է հոգար Իրանը, իսկ մնացած մասը՝ «Ռուսական երկաթգծեր» ԲԲԸ-ն: Երկաթգծի շինարարության վերաբերյալ բանակցությունները վերականգնվեցին միայն 2009 թ. ապրիլին՝ ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի՝ Իրան կատարած այցի ընթացքում: Որոշվեց ակտիվացնել քայլերը շինարարական աշխատանքների մեկնարկի վերաբերյալ, սակայն այս անգամ էլ առարկայական բանակցություններին խանգարեց համաշխարհային տնտեսական ճգնաժամը:

2007 թ. ապրիլի 5-ին ՀՀ կառավարությունը կապի և տրանսպորտի նախարարությանը հատկացրեց 1,86 մլրդ դրամ՝ կառուցելու Իրան-Հայաստան այլընտրանքային ճանապարհ, որը կանցնի Մեղրի-Շվանի-

[12] Տե՛ս **Гаджиев К. С.** Большая игра на Кавказе: Вчера, сегодня, завтра. М., 2010, էջ 148:
[13] Տե՛ս **Վ. Ա. Բայբուրդյան,** Իրանն այսօր: (Տեղեկատու), Եր., 1999, էջ 323:

ձոր-Վերիշեն-Ծավ-Կապան գծով: Այսպիսով փորձ է արվում խուսափել Կապան-Քաջարան դժվարանցանելի ճանապարհից, որը հատկապես ձմռան ամիսներին գրեթե միշտ անանցանելի է լինում: Նախնական հաշվարկներով ճանապարհաշինությունը կարժենա 20 մլն դոլար: Ներկայումս Հայաստանում ընթացքի մեջ է հյուսիս-հարավ ավտոմայրուղու կառուցապատումը, որը «Մեծ մետաքսի ճանապարհ» հաղորդակցության ծրագրի մաս է, և որի շնորհիվ Իրանը կբարելավի ավտոմոբիլային հաղորդակցությունը մերձսևծովյան տարածաշրջանի հետ: 2007 թ. հոկտեմբերի 26-ին բացվեց Իրան-Հայաստան 91 կմ երկարությամբ այլընտրանքային ճանապարհը[14]:

Մեր հետազոտությունները ցույց են տալիս, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում ՀՀ-Իրան փոխհարաբերություններում առաջնային նշանակություն և զարգացման առավել բարձր ու դինամիկ տեմպեր են ունեցել տնտեսական առնչությունները: Այսօր էլ երկու երկրների միջև հարաբերություններում լոկոմոտիվի դերը շարունակում է տանել տնտեսական ուղղությունը: Բավարար հիմքեր կան եզրակացնելու, որ մոտ ապագայում այդ հարաբերությունները կարող են վերաճել ավելի լայն համագործակցության: Մասնավորապես այն կարող է դառնալ արևելք-արևմուտք հաղորդակցության, Իրան-Վրաստան, Իրան-Եվրոպա կապող օղակ: Մյուս կողմից էլ՝ ՀՀ-Իրան զարգացող տնտեսական հարաբերությունները ամուր հիմք են նախապատրաստել երկու երկրների միջև քաղաքական փոխհարաբերությունների հետագա զարգացման համար: Գաղտնիք չէ, որ Իրանի տարածաշրջանային քաղաքական ծրագրերի իրագործման ճանապարհին Հայաստանին կարևոր դերակատարություն է տրված: Չնայած Իրանի նկատմամբ արևմտյան պատժամիջոցներին՝ Հայաստանը չի դադարեցրել Իրանի հետ համագործակցությունն ու ի դեմս նրա տեսել է իր տնտեսական ու քաղաքական հիմնական գործընկերներից մեկին: Այսօր, երբ Իրանի նկատմամբ միջազգային պատժամիջոցները վերացվում են, առավել քան երբևէ լավ հող է ստեղծվել երկկողմ ու բազմակողմ տնտեսական հարաբերությունների զարգացման, ինչպես նաև անավարտ մնացած ծրագրերի իրագործման համար:

Բանալի բառեր - *տարածաշրջանային զարգացումներ, տնտեսական համագործակցություն և ապաշրջափակում, էներգետիկ և տրանսպորտային հաղորդակցության ծրագրեր, տարանցիկ երկիր*

ЛУСИНЕ ПЕТРОСЯН – ***Армяно-иранские экономические отношения (1991 – 2008).*** – Экономические отношения с Ираном всегда были важным элементом во внешнеполитической повестке Армении. В условиях азербайджано-турецкой блокады Иран для неё – транзитная страна. Кроме того, экономические связи с ним дают альтернативу в энергетическом секторе. С другой стороны, Ар-

[14] Տե՛ս «Ազգ» օրաթերթ, 27.10.2007:

мения также представляет для Ирана некоторое экономическое значение. Многое зависит от реализации транзитных проектов в энергетике. Сегодня роль локомотива в двусторонних отношениях, имеющих тенденцию к укреплению, продолжает выполнять экономика. Экономические связи подготовили прочную основу для дальнейшего развития двусторонних политических отношений.

Ключевые слова: *региональное развитие, экономическое сотрудничество и разблокирование, проекты энергетических и транспортных коммуникаций, транзитная страна*

LUSINE PETROSYAN – *Armenian-Iranian Economic Relations (1991-2008)*. – The development of economic relations with Iran has always been an active part of Armenia's foreign policy agenda. In the conditions of dual blockade, Iran is important as a transit country for Armenia. On the other hand, the strengthening of economic ties with Iran allows having some alternatives in the energy sector. Armenia also has some economic importance for Iran. It ultimately depends on the implementation of energy transit projects, as well as the necessity of realization of Iran's traditional interests in the region. Today, the role of locomotive between the relations of two countries continues to take economic direction. Moreover, these relations have a tendency to become larger cooperation. The Armenian-Iranian economic relations prepared a solid foundation for further development of political relations between the two countries.

Key words: *regional development, economic cooperation and unblocking, energy and transportation infrastructure projects, transit country*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԵՎ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ
(1990-ական թվականների առաջին կես)

ՆԱԻՐԱ ՂԱԶԱՐՅԱՆ

ԽՍՀՄ փլուզումից և «սառը պատերազմի» ավարտից հետո աշխարհի բազում երկրներում ի հայտ եկան նոր իրողություններ, ինչը պայմանավորված էր գերազանցապես նոր աշխարհակարգի հաստատմամբ: Արմատական փոփոխություններ կատարվեցին նաև հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում:

Հայաստանի երրորդ Հանրապետության ծննդից հետո բազմաթիվ ու բազմապիսի խնդիրներ ծագեցին ոչ միայն երկրի ներքաղաքական, տնտեսական ոլորտներում, այլև միջազգային հարաբերություններում: Արտաքին աշխարհի հետ միանգամայն նորովի հարաբերվելու գրեթե անսահմանափակ քաղաքական հնարավորություններ էին ստեղծվել, որոնցից մեկը հայկական սփյուռքի հետ ուղղահայացից հորիզոնական հարաբերությունների անցնելու հրամայականն էր: Այս առումով հատկանշական էր ՀՀՇ հիմնադիր համագումարի բանաձևը Հայաստան-Սփյուռք հարաբերությունների մասին.

«ա) Հայաստան-Սփյուռք կապերը պետք է հիմնվեն ապազաղափարայնացման համազգային արժեքների շուրջ երկու հատվածների համախմբման և ազգային միասնական գործունեության վրա, բ) հարաբերություններ հաստատելու իրավունք և հնարավորություն պետք է ունենան երկու հատվածների բոլոր կազմակերպությունները և առանձին անհատներ անկախ կուսակցական պատկանելությունից, կրոնական, ընկերական և այլ պարագաներից, գ) ինչպես Հայաստանում, այնպես էլ Սփյուռքում հարաբերություններ հաստատելու և իրականացնելու իրավունքը չպետք է լինի որևէ հաստատության, պետական, կուսակցական, կրոնական և այլ մենաշնորհ»[1]:

Թեպետ հայտնի է, որ Հայաստան-հայկական սփյուռք կապերը հաստատվել էին դեռևս 1920-ական թվականներին, սակայն դրանք վերահսկվում և ուղղորդվում էին Կրեմլի կողմից: Գաղտնիք չէ նաև, որ

[1] «Հայոց համազգային շարժման հիմնադիր համագումարի բանաձև Հայաստան-Սփյուռք հարաբերությունների մասին» - http://archive-am.com:

Երկրորդ աշխարհամարտից հետո արտերկրի հայերի հետ կապերի սերտացումը «սառը պատերազմը» միջազգային քաղաքականության միկրոմակարդակ տեղափոխելու նպատակ էր հետապնդում[2]: Այդ առումով խիստ ուշագրավ է, որ Սփյուռքի հայկական համայնքները բաժանվել էին հիմնականում երկու մասի, որոնցից մեկը հայտնվել էր, այսպես ասած, խորհրդային ազդեցության ոլորտում, իսկ մյուսը՝ Արևմուտքի: Այդ հողի վրա սուր պայքար ծավալվեց Հայ առաքելական եկեղեցու զույգ աթոռների՝ Էջմիածնի և Անթիլիասի միջև՝ Սփյուռքի համայնքներում առաջնայնությունն իրենց ձեռքը վերցնելու նպատակով[3]: Ընդ որում, հատկանշական է, որ Մայր աթոռը Կրեմլի վերահսկողության տակ էր, իսկ Անթիլիասի վրա մեծ էր Արևմուտքի ազդեցությունը, որն արտահայտվում էր գերազանցապես «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցության մենաշնորհային դիրքով:

Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանի Հանրապետությունն ու Սփյուռքի կառույցներն սկսեցին միմյանց հետ հարաբերվելու գաղափարական նոր բանաձևեր և մեթոդներ փնտրել[4]: Այդ տեսանկյունից խիստ կարևոր են ինչպես Էջմիածնի և Անթիլիասի կաթողիկոսական աթոռների միջև 1991 թ.-ից սկսած շփումները, այնպես էլ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության հանդեպ ՀՀ իշխանությունների որդեգրած դիրքորոշումն ու հարաբերությունները:

Կասկածից վեր է, որ 1988 թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժից մի քանի տարի անց և Արցախյան պատերազմի տարիներին տարատեսակ լուրջ դժվարություններ էին առկա Սփյուռքի հետ գործուն կապեր հաստատելու համար: Բնական է, որ այդ վիճակը երկար չէր կարող տևել: Դրությունն ավելի լուրջ էր գաղափարական դաշտում: Այս կապակցությամբ ուշագրավ է 1993 թ. հունվարին «Հայաստան համահայկական հիմնադրամի» հոգաբարձուների խորհրդի աշխատանքներին մասնակցելու նպատակով Երևան ժամանած Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Երկրորդի տեսակետը: Լրագրողի այն հարցին, թե ինչպիսին են Անթիլիաս-Էջմիածին հարաբերությունները 1993 թ. դրությամբ, Գարեգին Երկրորդը պատասխանել է. «Ես բազմաթիվ անգամներ եմ անդրադարձել այս հարցին և այս անգամ էլ շեշտում եմ, որ մեր հարաբերությունները այսօր դրված են բնական վիճակի մեջ: Անբնականն այն

---

[2] Տե՛ս **Հ. Մելիքսեթյան,** Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980 թթ.), Եր., 1985, **Ա. Բաղալյան,** Խորհրդային Հայաստան-Սփյուռք կապերի պատմության փուլերը, «Հայ գաղթականությունը և Հայրենիք-Սփյուռք կապերը 1918-1985 թթ.», միջազգային գիտաժողովի զեկուցումներ, Եր., 2011, էջ 69-76, **Дятлов В., Мелконян Э.** Армянская диаспора: очерки социокультурной типологии. Ер., 2009:

[3] Մանրամասն տե՛ս **Կ. Դալլաքյան,** Ամենայն Հայոց սուրբ աթոռը մեկն է՝ իր մեկ գահակալով ու մեկ Աստծով, «Հայաստանի Հանրապետություն», օրաթերթ, 28 հունիս 1995, թիվ 159 (1279):

[4] Մանրամասն տե՛ս «Armenia-Diaspora Relations: 20 Years Since Indipendence». Armenia, France, Ireland, Kuwait, Slovakia, Sweden, Switzerland, UAE, UK, USA: A publication of Policy Forum Armenia, 2010, էջ 7-10:

էր, որ մենք իրար հետ չէինք գործակցում: Լինելով մեկ եկեղեցի՝ ճակատագրորեն ու պատմականորեն առաջ եկած վարչական միավորները չեն կարող մեզ տանել բաժանումի: Պետք է ասեմ, որ նույնիսկ այն ժամանակ, երբ խորհրդային իշխանությունը բռնակալական բոլոր գործոններով իշխում էր մեր ազգային, եկեղեցական կարգերին, այն ժամանակ նույնիսկ Վազգեն Վեհափառի և իմ միջև անբացատրելի, խորհրդալի հոգեկան հաղորդակցություն կար: Երբ պայմանները փոխվեցին, այդ հոգեկան միասնությունը դրսևորվեց մեր կաթողիկոսության բոլոր մարմինների միջոցով, նաև նրանց աջակցությամբ, և ես այսօր ասում եմ, երկուսիս եղբայրական հարաբերությունը միայն անձնական հանգամանք չունի: Ուրախ եմ, որ այս համագործակցությունը չի պայմանավորված սոսկ երկու կաթողիկոսներիս ջանքերով. այս հարցում իրրենց աջակցությունը ունեն նաև հայրենի կառավարությունը, պետությունը, մտավորականները, աշխարհականները, եկեղեցականները: Այս ճանապարհը ոչ թե նոր է բացվել, այլ շարունակվում է և գնալով պիտի ընդարձակվի»[5]:

Կիլիկիո կաթողիկոսի խոսքերից կարելի է եզրակացնել՝ ա) Անթիլիասի կաթողիկոսությունը մտադիր չէր միավորվելու Էջմիածնի Մայր աթոռին, այլ նախընտրել էր պահպանել միայն, այսպես ասած, հոգևոր միասնությունը, ինչը նշանակում էր հայոց եկեղեցու բաժանված վիճակի շարունակություն, բ) Հայաստանի իշխանություններին ևս չէր հաջողվել նոր իրողություններում հասնել զույգ կաթողիկոսական աթոռների միավորմանը Էջմիածնի գերակայությամբ, ինչը վկայում է, որ Անթիլիասը չէր պատրաստվում հրաժարվել Սփյուռքի հայկական բազում համայնքներում ունեցած գերիշխող դիրքերից[6]:

Իհարկե, միանգամայն հասկանալի է, թե ինչու էր Հայաստանի պետական իշխանությունը 1990-ականների երկրի համար ծանր օրերին ձգտում օգտագործել Սփյուռքի, ներառյալ նաև Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության ներուժը: Սակայն եթե սոցիալ-տնտեսական ու բարեգործությունների ոլորտներում որոշակի հաջողություններ էին գրանցվում, ապա միանգամայն այլ էր իրավիճակը քաղաքական միասնության հասնելու ձեռնարկումներում: Պետք է ասել, որ և՛ Հայաստանի հանրությունը, և՛ ղեկավարությունը ոչ թե հայ եկեղեցու երկու աթոռների համագործակցության, այլ միավորման կարիք ունեին, ինչին դեմ դուրս եկավ ոչ միայն և ոչ այնքան Անթիլիասը, որքան ողջ Սփյուռքը ներկայացնելու մենաշնորհային դիրքին հավակնող Հայ հեղափոխական դաշնակցությունը:

Հայաստանի անկախության առաջին տարիների ներքաղաքական

---

[5] «Հայաստանի Հանրապետություն», օրաթերթ, 13 հունվար 1993, թիվ 6 (610):

[6] Մանրամասն տե՛ս **Ա. Քալաշյան,** Էջմիածին-Անթիլիաս կանոնական միասնացման գործընթացների արդի փուլը (1988-2008 թթ.), «Հայ աստվածաբան», գիտական հոդվածների ժողովածու, Գ, Եր., 2009:

զարգացումները վկայեցին, որ հնարավոր չէր Հայաստան-Սփյուռք քաղաքական բավարար միասնություն հաստատել. դրա համար քիչ էր միայն մեկ ժողովուրդ լինելու գիտակցությունը ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրի համայնքներում: Դժվար է ասել, թե ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը չէր գնահատում այդ հանգամանքը, երբ փորձում էր հանրապետության քաղաքական ազդեցության գոտի բերել Սփյուռքի կազմակերպություններին՝ մասնավորապես Կիլիկիո կաթողիկոսությանը, սակայն հաջողությունները, կարելի է ասել, առավելապես բարեգործությունների ոլորտում էին: Սփյուռքի կառույցները, ներառյալ Կիլիկիո կաթողիկոսությունը, Հայաստանի շուրջ միավորելու ՀՀ առաջին նախագահի ձեռնարկած գործնական քայլերը, թերևս, «Հայաստան համահայկական հիմնադրամի» ստեղծումն ու այդ կազմակերպության հոգաբարձուների խորհրդում Կիլիկիո կաթողիկոսի ընդգրկումն էր: Լ. Տեր-Պետրոսյանն ընդծում էր, որ «Հայաստան» հիմնադրամն այն միակ կազմակերպությունն էր, որտեղ միավորված էին Հայ եկեղեցու, հայկական ազգային կազմակերպությունների, ավանդական կուսակցությունների ներկայացուցիչները, և որին մեծ ապագա էր սպասում՝ իբրև հայ ժողովրդի միասնության, Սփյուռք-Հայաստան կապերի ամրապնդման միջոցի[7]:

Այն իրողությունը, որ Լ. Տեր-Պետրոսյանի օրոք Հայաստանի իշխանություններին չհաջողվեց միավորել Հայ առաքելական եկեղեցու զույգ աթոռները, ուներ գերազանցապես առարկայական պատճառներ, որոնք կարելի է բաժանել երեք մասի՝ 1) հոգեբանական, 2) տնտեսական և 3) գաղափարական: Ընդ որում, հարկ է ասել, որ կաթողիկոսական աթոռների միավորման անհնարինությունը նախ և առաջ բխում էր Հայաստանի հետ Սփյուռքի՝ քաղաքական միասնություն հաստատելու կամքի բացակայությունից, ինչը նույնպես, կարծում ենք, պայմանավորված էր վերը նշված գործոններով[8]:

Հայաստանի և Սփյուռքի հայերի միջև առկա հոգեբանական անջրպետը, գաղտնիք չէ, որ խորացավ ու արմատավորվեց ԽՍՀՄ գոյության ընթացքում, որում մեծ էր խորհրդային պարտադրված մտածելակերպի և արժեհամակարգի դերը: Խորհրդային վարչակարգն ապահովել էր արևելահայերի պետականությունը և գրեթե վերացրել ֆիզիկական բնաջնջման վտանգը: Իբրև արդյունք՝ Խորհրդային Հայաստանի քաղաքացին իրեն տեր զգաց իր սեփական հողում: Միանգամայն այլ կերպ դասավորվեց ցեղասպանությունը վերապրած արևմտահայի ճակատագիրը: Նա իր գոյությունը շարունակում էր օտարության և ու-

---

[7] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», օրաթերթ, 18 սեպտեմբեր 1993, թիվ 186 (790):

[8] Այդ մասին տե՛ս **Ն. Օվսեպյան,** Երկքաղաքացիությո՞ւն, թե՞ ընդհատակյա երկդիմություն, «Հայաստանի Հանրապետություն», օրաթերթ, 25 հունիս 1994, թիվ 125 (945), **Ե. Խոսրովյան**, Սփյուռք-Հայրենիք հարաբերություն-հասկացություն, «Լրագիր», էլ. պարբերական, 13 օգոստոսի 2008, http://www.lragir.am/index/arm/0/society/view/14133 (15.06.2016):

ծացման ենթարկվելու վտանգի պայմաններում: Նման վիճակն ավելի խորացրեց գաղթականի հոգեբանությունը: Բացի այդ, ԽՍՀՄ «երկաթյա վարագույրները» ավելի մեծացրին Հայաստանի և Սփյուռքի հայերի հոգեբանական տարբերությունները ինչպես սոցիալ-քաղաքական կյանքում, այնպես էլ ազգային արժեհամակարգում:

Սոցիալ-տնտեսական մակարդակում ևս ակնհայտ տարբերություններ ու հակասություններ կային Հայաստանի և Սփյուռքի հայերի մտածելակերպի, ինչպես նաև վարքագծի միջև: Ուշագրավ է, որ նույնիսկ խորհրդային բարեկեցիկ տարիներին հայաստանցու համար սփյուռքահայի հետ առնչությունը արտերկրից առնվազն որակյալ ապրանքներ ստանալու հնարավորություն էր: Այս իրողությանը գումարվեց Հայաստանի անկախության առաջին շրջանի ծայրահեղ ծանր սոցիալ-տնտեսական վիճակը, որն առաջացրեց երկրի լայն զանգվածների դժգոհությունը բարեկեցիկ կյանքով ապրող Սփյուռքի հայրենակիցներից: Կարծում ենք՝ հենց նման իրավիճակից էին բխում սփյուռքահայերից հայաստանցիների նյութական օգնության և օժանդակության սպասումները, որոնք, վերջիններիս կարծիքով, Սփյուռքը պարտավոր էր միշտ բավարարել: Մյուս կողմից, սփյուռքահայերին նյարդայնացնում էին Հայաստանից ստացվող պահանջների՝ օրեցօր աճող չափերը, և պատահական չէ, որ սկսվեց փոխադարձ անվստահություն[9]:

1990-ականներին Հայաստան-Սփյուռք հարաբերություններում ամենալուրջ խոչընդոտը, սակայն, գաղափարականն էր, որը, ըստ մեզ, խորությամբ չընկալվեց ոչ միայն Հայաստանի պետական իշխանության և հասարակության, այլև Սփյուռքի կառույցների, այդ թվում՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության կողմից: Ինչպես գիտենք, 1915 թ. ցեղասպանության հետևանքով առաջացած հայկական սփյուռքի համախմբման առանցքը Հայ դատի գաղափարն էր: Խորհրդային Միության գոյության տասնամյակներին հայկական սփյուռքը տիրապետում էր ազգային քաղաքականություն վարելու մենաշնորհին, որի թիրախը Թուրքիայի նկատմամբ ճնշում գործադրելն էր, ընդ որում՝ ինչպես քաղաքական, այնպես էլ զինված պայքարի մեթոդներով: Հայաստանի Հանրապետությունը Սփյուռքից վերցրեց հենց այդ մենաշնորհը և սկսեց վարել մի քաղաքականություն, որը հիմնված էր realpolitik-ի սկզբունքների վրա: Դա տրամագծորեն հակառակ էր տարիներ շարունակ Սփյուռքի բազմաթիվ կառույցների, այդ թվում՝ Անթիլիասի աթոռի վարած քաղաքականությանը, որը, բնականաբար, խորը հակասություններ էր առաջացնելու ՀՀ-Սփյուռք հարաբերություններում, որոնք Հայաստանի անկախության գոնե առաջին տարիներին, ըստ էության, դատապարտված էին ձախողման:

Հենց նշված հանգամանքներն էլ լրջորեն խոչընդոտեցին Մեծի

[9] Մանրամասն տե՛ս **Կ. Դալլաքյան,** Հայ սփյուռքի պատմություն, Եր., 2004, էջ 49-54:

Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Երկրորդին զույգ աթոռների միավորման իր ձեռնարկումներում, երբ նա արդեն ընտրվեց Ամենայն հայոց կաթողիկոս՝ ունենալով ՀՀ իշխանության և մասնավորապես Լ. Տեր-Պետրոսյանի ծանրակշիռ աջակցությունը[10]: Անվիճելի է, որ Գարեգին Առաջին Ամենայն հայոց կաթողիկոսը դավանանքի և ազգային հարցերում ամենագիտակից ու գիտական մոտեցումներ ունեցող անձնավորություններից էր[11]: Ավելին, ՀՀ առաջին նախագահը, որը հայ եկեղեցու աթոռների միավորման ուղղությամբ, կարելի է ասել, ջանք ու եռանդ չէր խնայում, այսպիսի բառերով է հիմնավորել Կիլիկիո հայրապետի ընտրությունը. «…իր աստվածաբանական պատրաստությամբ, հայագիտական հմտությամբ և վարչական կարողություններով այսօր Ամենայն հայոց կաթողիկոսի ամենաարժանի թեկնածուն, իմ կարծիքով, Կիլիկիո աթոռի հայրապետ Գարեգին Բ վեհափառն է»[12]: Ինչ խոսք, կաթողիկոսը լավագույնս էր տիրապետում մարդկային հարաբերությունների և՛ օրենքին, և՛ արվեստին: Թեպետ վեհափառը կարողանում էր հիանալիորեն շփվել ինչպես իշխանության բարձրաստիճան պաշտոնյաների, ընդհուպ երկրի նախագահի, այնպես էլ, այսպես ասած, հասարակ քաղաքացիների հետ[13]՝ ամեն հարցում հանգելով ընդհանուր հայտարարի, սակայն կարծում ենք, բոլորի, նաև իր համար պարզ չէր, թե ինչպես պետք է վեհափառը կարողանար շտկել եկեղեցու պառակտված վիճակը, երբ հարցը պետք է լուծեին այն քաղաքական ուժերը, որոնցից մեկին անհրաժեշտ էր միավորումը, իսկ մյուսին՝ պառակտված վիճակը: Այս տեսակետից բնութագրական էր 1995 թ. Էջմիածնում գումարված ազգային-եկեղեցական ժողովում Լ. Տեր-Պետրոսյանի արտահայտած տեսակետը, որը, փաստորեն, ոչ միայն ՀՀՇ կուսակցության, այլև ՀՀ իշխանության պաշտոնական դիրքորոշումն էր Կիլիկիո կաթողիկոսության հանդեպ և Հայ եկեղեցու՝ երկու գլուխ ունենալու հանգամանքի վերաբերյալ: «Պատմությունը,- նշում էր ՀՀ նախագահը,-բացառիկ պատեհություն է ընձեռել ձեռնարկելու Եկեղեցու միասնության վերականգնման համազգային գործը: Եվ ես կարծում եմ, որ Ազգային-եկեղեցական ժողովը չի կորցնի

[10] Տե՛ս **Է. Մելքոնյան,** Հայաստանի երրորդ Հանրապետության և Սփյուռքի քաղաքական փոխհարաբերությունների հարցի շուրջ, «Սփյուռքագիտություն (տեսության և պատմության հարցեր)», տարեգիրք, Եր., 2012, էջ 109:

[11] Հատկանշական է, որ Հայաստանը Սփյուռքի համայնքներին կապող բազում միջոցառումների հեղինակ էր նաև Անթիլիասի կաթողիկոսը, ով անփոխարինելի տեղ էր հատկացնում հայոց պետականությանն ու դրա խորհրդանիշներին. ասվածի վկայությունն է 1994 թ. հունիսի 12-ին Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարում Գարեգին Երկրորդի կողմից կազմակերպված ՀՀ դրոշի օրհնության արարողությունը, որին մասնակցում էր նաև ՀՀ արտաքին գործերի նախարարի՝ Վահան Փափազյանի գլխավորած պատվիրակությունը. «Հայաստանի Հանրապետություն», օրաթերթ, 25 հունիս 1994, թիվ 125 (945):

[12] **Է. Մելքոնյան,** նշվ. աշխ., էջ 109:

[13] «Հայաստանի Հանրապետություն», օրաթերթ, 19 մայիս 1995, թիվ 119 (1239):

այս պատեհությունը: Այլապես սերունդները մեզ չեն ների: Եկեք ընդունենք, որ այն իրավիճակը, որ գոյություն ունի մեր Եկեղեցում, ես նկատի ունեմ նրա երկփեղկվածությունը, ազգային խայտառակություն է»[14]:

Բնականաբար նման քաղաքականությունը բախվեց ոչ միայն Անթիլիասի, այլև Հայ հեղափոխական դաշնակցության դիմակայությանը (խուլ, թե բացահայտ, կարծում ենք, էական չէ): Պատահական չէ, որ այս իրողությունը 1990-ականների առաջին կեսին ՀՀ իշխանությունների և ՀՀ դաշնակցության միջև հակասությունների սրման մի նոր դուռ բացեցին. ընդ որում, Հայաստանի իշխանության հետ դաշնակցության հակասություններն ավելի արտահայտիչ ու սուր էին, քան կոմունիստական կուսակցության հետ: Հետևաբար, միանգամայն հասկանալի է, որ Գարեգին Առաջինին չհաջողվեց և, կարծում ենք, չէր էլ հաջողվելու հասնել Հայ առաքելական եկեղեցու միավորմանը:

Ձախողումից հետո խնդիրը, թերևս, հետևյալն էր՝ արդյոք պետք էր Անթիլիասի կաթողիկոսության գործունեությունը Հայաստանի երրորդ Հանրապետության հռչակումից հետո, որը, իր հերթին, տեղիք էր տալիս նոր հարցերի՝ ա) եթե այո՛, ապա զույգ աթոռների միավորման փորձերի տապալումից հետո ինչպիսի՞ն պետք է լիներ ՀՀ իշխանության դիրքորոշումը Անթիլիասի աթոռի հանդեպ, բ) ի՞նչ դեր պետք է խաղար Անթիլիասը հայ ժողովրդի կյանքում, գ) ի՞նչ ձևաչափով պետք է միմյանց հետ հարաբերվեին հայոց եկեղեցու երկու աթոռները:

Դեպքերը ցույց տվեցին, որ 1990-ականների առաջին կեսին ՀՀ իշխանությունը՝ ի դեմս այդ իշխանությունը ներկայացնող ՀՀՇ կուսակցության, եկեղեցու աթոռների միավորման փորձի ձախողումից հետո որդեգրեց մի մոտեցում, որի էությունը հետևյալն էր. թեպետ անհրաժեշտ էր պահպանել Անթիլիասը, որը անգամ իր պատմական իրավասության շրջանակներում յուրատեսակ գործառույթներ ուներ, սակայն հարկ էր հասնել մի վիճակի, երբ վերջինս կգնահատեր դրությունն ու էջմիածնին կզիջեր բոլոր այն թեմերն ու կառույցները, որոնք գրավել էր խորհրդային տարիներին: Ընդ որում, ուշագրավ է, որ ինչպես ՀՀ իշխանությունը, այնպես էլ Հայաստանի բազմաթիվ հասարակական-քաղաքական ու գիտական շրջաններ ոչ միայն չհակադրվեցին Անթիլիասին և ծայրահեղական մոտեցումներ չդրսևորեցին, այլև ձգտում էին հնարավորինս խորացնել նրա հետ առկա բոլոր տեսակի շփումները, ինչին դեմ չէր նաև Անթիլիասը[15]: Տվյալ իրողությունը, ըստ մեզ, բխում էր այն իրավիճակից, որ Հայաստանում գրեթե բոլոր ուժերի համար

---

[14] «ՀՀ նախագահ տիար Լևոն Տեր-Պետրոսյանի խոսքը Ազգային-եկեղեցական ժողովում», «Էջմիածին», ամսագիր, 1995, ապրիլ, էջ 53:

[15] Տե՛ս «Արամ արքեպիսկոպոս Քեշիշյանը Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս», «Հայաստանի Հանրապետություն», օրաթերթ, 29 հունիս 1995, թիվ 160:

ակնհայտ էր, թե ինչ էր կատարվում պատմական իրավասության շրջանակում: Աշխարհաքաղաքական որոշ ուժերի կողմից, նախ և առաջ Թուրքիայի, պատմության վերջին հինգ տասնամյակների ընթացքում փորձեր են արվել հայաթափելու բոլոր այն տարածքները, որոնք գտնվում են պատմական Հայաստանի սահմանների մոտ՝ Սիրիա, Լիբանան, Արաբական Արևելք, Կիպրոս, ամբողջ սևծովյան ավազան: 1990-ականներին Հայաստանում համոզված էին, որ Անթիլիասի հետագա պատմական առաքելությունը հենց նշված տարածքներում հայության գոյատևումն ու զորացումն ապահովելն էր: Այսուհանդերձ, պետք է ասել, որ Հայաստանի իշխանությունը զույգ աթոռների միավորման չհաջողված փորձից հետո որդեգրեց այն տեսակետը, որ Հայ եկեղեցին ունի միայն մեկ գլուխ՝ Էջմիածնի Մայր աթոռը, իսկ Անթիլիասը պետք է մտնի իր չափավոր գործունեության դաշտ և հրաժարվի Հայ եկեղեցու գլուխ լինելուց:

Ինչպես և սպասելի էր, այս նոր դիրքորոշումը ևս չարդարացրեց իրեն, որովհետև տեսական հնարավորությունը ոչ միայն գործնականում չկիրառվեց, այլև երբեմն այնպիսի քայլեր ձեռնարկվեցին, որոնք իրենց բնույթով հիշեցնում էին 1920-ական թվականների դասակարգային շերտավորումների իրականությունը: Նշվածի վառ վկայությունը ՀՀԴ կուսակցության օտարումն էր ՀՀ իշխանության ձեռքով, այդ կուսակցության անդամների դատավարությունը և այլն: Կամա-ակամա առաջացել էր մի վիճակ, երբ սփյուռքահայության և Անթիլիասի հետ հարաբերվելու հորիզոնական սկզբունքը տեղը զիջել էր ուղղաձիգին. հենց այդ շրջանում էր, որ խնդիր դրվեց փոխել սփյուռքահայ կազմակերպությունների ղեկավար անձնակազմերը, որոնք պետք է անառարկելիորեն ենթարկվեին Երևանի ցուցումներին[16]: Ավելին, սփյուռքահայերը զրկվեցին սեփական կարծիքը հայտնելու հնարավորությունից նույնիսկ այն դեպքերում, երբ իշխանությունները շոշափում էին համազգային նշանակության խնդիրներ: Առաջ էր քաշվել անգամ «Հայաստանի ներքին գործերին» չխառնվելու թեզը, որին զուգահեռ ուժեղանում էր Սփյուռքից միայն ֆինանսական միջոցներ ստանալու պահանջը: Բարեբախտաբար, իրերի նման վիճակը երկար չտևեց, և 1990-ականների երկրորդ կեսին փորձեր արվեցին իրավիճակը շտկելու և կրկին հորիզոնական հարաբերությունների անցնելու համար: Նշվածի վկայությունն են 1999, 2002 թթ. և հետագայում կազմակերպված Հայաստան-Սփյուռք համաժողովներն ու տարատեսակ միջոցառումները:

Բանալի բառեր – *Հայաստանի երրորդ Հանրապետություն, սփյուռք, Հայ առաքելական եկեղեցի, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսություն, համազգային արժեքներ, Էջմիածին, Անթիլիաս*

[16] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», օրաթերթ, 18 հունիս 1994, թիվ 124 (988):

НАИРА КАЗАРЯН – ***Позиция властей РА по отношению к диаспоре и Киликийскому католикосату (1-я половина 1990-х гг.).*** – После провозглашения Третьей республики ключевыми вопросами для неё стали отношения с диаспорой и объединение двух католикосатов Армянской апостольской церкви. Появилась возможность установить непосредственные взаимодействия с зарубежными армянскими общинами и устранить разделённость Армянской церкви. Были, однако, обстоятельства, не позволявшие быстро решить эти задачи. Заметным препятствием стала поддержка Арменией принципов realpolitik, которых не разделяли ведущие структуры диаспоры, включая Киликийский католикосат. Краеугольным принципом для них всегда оставался Армянский вопрос. Таким образом, Армении не удалось объединить эчмиадзинский и антилиасский католикосаты и поднять на качественно новый уровень отношения с диаспорой: стороны не были готовы идти на уступки в вопросах общенационального значения.

Ключевые слова: *Третья Республика Армения, диаспора, Армянская апостольская церковь, католикосат Великого дома Киликийского, национальные ценности, Эчмиадзин, Антилиас*

NAIRA GHAZARYAN – ***Position of the Authorities of the Republic of Armenia in Relation to the Armenian Community and the Catholicosate of the Great House of Cilicia (the first half of the 1990s).*** – After the declaration of the Third Republic of Armenia, among the pivotal questions were the Armenian-Diaspora relations and the issue of the reunification of the two Catholicosates within the Apostolic Armenian Church. The collapse of the Soviet Union gave Armenia new opportunities to communicate on a horizontal level with Armenian Diasporas, as well as to make attempts to reunite the divided Armenian Church. However, new obstacles hindering the successful solution to the mentioned issues within a short time arose. One of the problems was the realpolitik policy conducted by the Republic of Armenia, which was not accepted by most bodies of the Diaspora, including the Catholicosate of the Great House of Cilicia, which, taking into account the issue of the “Hay Daht” (Armenian Cause) tended to make decisions and conduct policy concerning the issues of Armenians independently. The 1990s attempts to improve the Armenia-Diaspora relations, as well as the efforts at reunion of the two Catholicosates, namely the Catholicosate in Etchimiadzin and the Catholicosate in Antelias, failed mostly due to the unwillingness of the sides to make concessions on matters of national importance, or, even to recognize and accept the decisions of the other side.

Key words: *Third Republic of Armenia, the Armenian Diaspora, the Armenian Apostolic Church, Catholicosate of the Great House of Cilicia, national values, Echmiadzin, Antelias*

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՅԻՎԻԼԻԱՐԽԻԱՅԻ ԻՆԴԵՔՍԻ ՄՇԱԿՄԱՆ ՓՈՐՁ

ԱՇՈՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Ժամանակակից համաշխարհային, տարածաշրջանային և ներպետական հասարակական գործընթացները փոխակերպում են դեմոկրատական*, ոչ դեմոկրատական և հակադեմոկրատական քաղաքական համակարգերն ու վարչակարգերը: Արդի քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային գործընթացների ազդեցությամբ ձևավորվում են ժամանակակից քաղաքացիավարական համակարգերի անվտանգության, կայունության, զարգացման, կառավարման, ինքնակառավարման, արդյունավետության, համարժեքության և այլ բաղադրիչները:

Համաշխարհային, տարածաշրջանային և ներպետական մակարդակներում քաղաքականության սուբյեկտներից պահանջվում են արդյունավետորեն մշակել և իրականացնել ռազմավարական զարգացման հայեցակարգեր՝ դիմակայելու ծառացած սպառնալիքները, ռիսկերն ու մարտահրավերները: Աշխարհաքաղաքական իրավիճակի արմատական տեղաշարժերը մշտապես վերափոխում են միջազգային կազմակերպությունների, պետությունների, հասարակությունների և քաղաքականության մյուս սուբյեկտների միջև համագործակցության, հակամարտության և մրցակցության եղանակները, ինչպես նաև դրանց գնահատման հասարակագիտական չափանիշները:

Ժամանակակից պայմաններում կիրառվում են ժողովրդավարական քաղաքական համակարգի և վարչակարգի, ինստիտուտների և գործընթացների, ժողովրդավարության մակարդակի, մշակույթի, արժեքների և այլ բաղկացուցիչ տարրերի չափման բազմաթիվ ինդեքսներ[1], որոնք հիմնվում են ժողովրդավարության ավանդական և ժամանակակից տեսությունների վրա՝ համեմատական վերլուծությունների

---

* «Դեմոկրատիա» հասկացությունն օգտագործվում է երկու իմաստով՝ *ժողովրդավարություն* և *ժողովրդաիշխանություն*:

[1] Ավելի մանրամասն տե՛ս **Dahl R.**, On Democracy. New Haven, CT, Yale University Press, 1998, **Diamond L., Morlino L.**, The Quality of Democracy. An Overview // Journal of Democracy, 2004, 15 (4), էջ 20-31, **Diamond L.**, The Spirit of Democracy: the struggle to build free societies throughout the world. New York: Holt Paperbacks, 2008, **Morlino L.**, Transitions to Democracy. What theory to grasp complexities? Working paper No. 6. LUISS academy, 2014, էջ 1-28, **Campbell D. F. J.**, The Basic Concept for the Democracy Ranking of the Quality of Democracy. Vienna: Democracy Ranking, 2008, էջ 10-17 և այլն:

միջոցով վարկանիշավորելով ժողովրդավարության կայացման, կառուցվածքային-գործառական և զարգացման միտումները[2]: Մասնավորապես տարածված են Տ. Վանհանենի ժողովրդավարության ինդեքսը[3], «Հերիթեյջ» հիմնադրամի և «Ուոլ սթրիթ Ջորնըլ»-ի տնտեսական ազատության ինդեքսը[4], Համաշխարհային տնտեսական ֆորումի գլոբալ մրցունակության ինդեքսը[5]: Սակայն ժամանակակից պետությունների, ազգերի, մշակույթների և կրոնների միջև մրցակցության եղանակները, համաշխարհային մարտահրավերներին դիմակայելու տեխնոլոգիաները փոխակերպում են դեմոկրատիայի մասին պատկերացումները: Այս իմաստով ներկայումս զգացվում է նոր ինդեքսի մշակման անհրաժեշտություն, որը կհիմնվի դեմոկրատիայի որակի, արդյունավետության և համարժեքության վրա:

Դեմոկրատիայի ցիվիլիարխիկ մակարդակի չափման տեսանկյունից առանցքային նշանակություն ունեն մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության, հանրային քաղաքացիակենտրոն իշխանության և *հասարակաբար կառավարման*[**], անվտանգության, քաղաքակիրթ մրցակցության, ներկայացվածության և վերահսկողության ընթացակարգերը: Հաշվի առնելով ցիվիլիարխիայի ինդեքսի մշակման և կիրառման առանձնահատկությունները՝ դիտարկենք երկրների ժողովրդավարության մակարդակի տարեկան վարկանիշավորման և չափման մի շարք ինդեքսներ, որոնցում առանցքային նշանակություն ունեն մարդու քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներն ու ազատությունները՝ ըստ այդմ զուգահեռներ անցկացնելով վարկանիշների համեմատական վերլուծություններում Հայաստանի և հետխորհրդային մյուս երկրների գնահատման արդյունքների միջև:

---

[2] Այդ մասին տե՛ս **Lijphart A.**, Patterns of Democracy: Government Forms and Performance in Thirty-Six Countries. New Haven: Yale University Press, 2012, **Diamond L.**, Developing Democracy: toward consolidation. Baltimore: Johns Hopkins University Press, 1999, էջ 24-63, **Diamond L.**, Facing up to the democratic recession // Journal of Democracy, vol. 26, № 1 (January), 2015, էջ 141-155, **Morlino L., Carli L. G.**, How to assess a democracy. What alternatives? Moscow: HSE Publ. House, 2014 և ուրիշներ:

[3] Այդ մասին տե՛ս **Vanhanen T.**, Prospects of Democracy: A study of 172 countries. L., N.Y.: Routledge, 1997, էջ 10-42, **Vanhanen T**., A New Dataset for Measuring Democracy, 1810–1998 // Journal of Peace Research, vol. 37, No. 2, 2000, էջ 251–265,

[4] Այդ մասին տե՛ս «The Heritage Foundation and The Wall Street Journal: The Index of Economic Freedom» // http://www.heritage.org/index/about (վերջին մուտքը՝ 24.04.2016թ.):

[5] Այդ մասին տե՛ս «The World Economic Forum: The Global Competitiveness Report 2015-2016» // http://reports.weforum.org/global-competitiveness-report-2015-2016 (վերջին մուտքը՝ 29.04.2016թ.):

[**] «Մատթեոս Ջուղայեցին, տարբերակելով կառավարման երկու ձև՝ «բռնակալական» և «հասարակաբար», նշում է, որ բիրտ ուժի վրա հիմնված կառավարումը մարդկանց բաժանում է իրարից, ստեղծում ատելության ու սարսափի մթնոլորտ, իսկ «հասարակաբար», ընդհանուր կամ ժողովրդավարական կառավարումը մերձեցնում է մարդկանց, նրանց մեջ արթնացնում կարեկցանքի, սիրո ու գթասրտության զգացումներ» (**Ս. Զաքարյան**, Սոցիալական համերաշխության հարցը XIII-XV դարերի հայ փիլիսոփայության մեջ // Հայագիտության հարցեր, հանդես, 3 (6), 2015, էջ 136):

«The Economist Intelligence Unit»-ի (EIU) ժողովրդավարության ինդեքսը (ԺԻ)[6] հիմնված է հինգ բաղկացուցիչ տարրերի վրա, որոնք են՝ *ընտրական գործընթացը և բազմակարծությունը, քաղաքացիական ազատությունները, կառավարության գործունեությունը, քաղաքական մասնակցությունը և քաղաքական մշակույթը*: Ըստ EIU-ի ԺԻ-ի գնահատման մեթոդաբանության՝ վարչակարգերը դասակարգված են «լիարժեք ժողովրդավարություններ» (Full democracies), «թերի ժողովրդավարություններ» (Flawed democracies), «հիբրիդային ռեժիմներ» (Hybrid regimes) և «ավտորիտար ռեժիմներ» (Authoritarian regimes)[7]: EIU-ի ԺԻ-ի տվյալներով Հայաստանը համարվել է «հիբրիդային ռեժիմ»՝ 167 երկրների շարքում 2006 թ. զբաղեցնելով 110-րդ, 2008 թ.՝ 113-րդ, 2010 թ.՝ 109-րդ, 2011 թ.՝ 111-րդ, 2012 թ.՝ 114-րդ, 2013 թ.՝ 116-րդ, 2014 թ.՝ 113-րդ, 2015 թ.՝ 116-րդ տեղերը[8]: 2011-2015 թթ. հետխորհրդային երկրների շարքում «հիբրիդային ռեժիմ» ունեն նաև Վրաստանը, Ուկրաինան և Ղրղզստանը: 2011-2015 թթ. Բալթյան երեք հանրապետությունները և Մոլդովան համարվել են «թերի ժողովրդավարություններ», իսկ հետխորհրդային մյուս երկրները՝ ավտորիտար ռեժիմներ[9]:

«Ազատության տուն» կազմակերպության «Ազատությունը աշխարհում» ինդեքսի միավորների հաշվարկումը հիմնված է «քաղաքական իրավունքների» և «քաղաքացիական ազատությունների» գնահատման վրա[10]: Ըստ այդ մեթոդաբանության՝ «քաղաքական իրավունքները» բաղկացած են երեք ենթաինդեքսներից *(ընտրական գործընթաց, քաղաքական բազմակարծություն և մասնակցություն, կառավարության գործունեություն)*, իսկ «քաղաքացիական ազատությունները»՝ չորս ենթաինդեքսներից *(արտահայտման և համոզմունքների ազատություն, միավորումների և կազմակերպությունների իրավունք-*

---

[6] Տե՛ս **Kekic L.**, The Economist Intelligence Unit's index of democracy // http://www.economist.com/media/pdf/democracy_index_2007_v3.pdf (վերջին մուտքը՝ 20.04.2016թ.):

[7] Տե՛ս նույն տեղը:

[8] Տե՛ս **Kekic L.**, նշվ. աշխ., էջ 4, The Economist Intelligence Unit's Index of Democracy 2008. The Economist Intelligence Unit Limited, 2008, էջ 7, Democracy index 2010. Democracy in retreat: A report from the Economist Intelligence Unit. The Economist Intelligence Unit Limited, 2010, էջ 6, Democracy index 2011. Democracy under stress: A report from the Economist Intelligence Unit. The Economist Intelligence Unit Limited, 2011, էջ 7, Democracy index 2012. Democracy at a standstill: A report from the Economist Intelligence Unit. The Economist Intelligence Unit Limited, 2013, էջ 6, Democracy index 2013. Democracy in limbo: A report from the Economist Intelligence Unit. The Economist Intelligence Unit Limited, 2014, էջ 6, Democracy Index 2014. Democracy and its discontents: A report from the Economist Intelligence Unit. The Economist Intelligence Unit Limited, 2015, էջ 7, Democracy Index 2015. Democracy in an age of anxiety: A report from the Economist Intelligence Unit. The Economist Intelligence Unit Limited, 2016, էջ 5:

[9] Տե՛ս «Democracy index 2011», էջ 3-8, «Democracy index 2012», էջ 3-8, «Democracy index 2013», էջ 3-8, «Democracy index 2014», էջ 4-8, «Democracy index 2015», էջ 4-8:

[10] Տե՛ս Freedom House 2016. «About Freedom in the World: An annual study of political rights and civil liberties» // https://freedomhouse.org/report-types/freedom-world (վերջին մուտքը՝ 20.04.2016թ.):

ներ, օրենքի գերակայություն, անձնական ինքնուրույնություն և անհատական իրավունքներ)[11]: Դրանց միավորների հանրագումարի համաձայն՝ Հայաստանը 1991-2015 թթ. համարվել է «մասնակի ազատ», Լեռնային Ղարաբաղը 2002-2015 թթ.՝ «մասնակի ազատ», իսկ Ադրբեջանը 2003-2015 թթ.՝ «ոչ ազատ» երկիր[12]:

«Ազատության տուն» կազմակերպության ժողովրդավարության ինդեքսը դիտարկված է «Ազգերը անցումային փուլում» զեկույցում, որի միավորները հաշվարկվում են հետևյալ 7 ենթաինդեքսների հիման վրա՝ *1) ընտրական գործընթաց, 2) քաղաքացիական հասարակություն, 3) ԶԼՄ-ների անկախություն, 4) ազգային ժողովրդավարական կառավարում, 5) տեղական ժողովրդավարական կառավարում, 6) դատական համակարգի անկախություն և 7) կոռուպցիա*[13]: Դրանց ցուցանիշների հիման վրա երկրների քաղաքական վարչակագերը դասակարգվում են՝ *«համախմբված ժողովրդավարություն»* («1.00-2.99» միավոր), *«կիսահամախմբված ժողովրդավարություն»* («3.0-3.99» միավոր), *«անցումային կառավարություն կամ հիբրիդային վարչակարգ»* («4.0-4.99» միավոր), *«կիսահամախմբված ավտորիտար վարչակարգ»* («5.0-5.99» միավոր), *«համախմբված ավտորիտար վարչակարգ»* («6.0-7.0» միավոր)[14] (տե՛ս աղյուսակ 1): Համաձայն «Ազգերը անցումային փուլում» 1999-2016 թթ. զեկույցների համեմատական վերլուծության՝ Բալթյան երկրներն ունեն *«համախմբված ժողովրդավարություններ»*, Ուկրաինան, Վրաստանը և Մոլդովան՝ *«անցումային կառավարություն կամ հիբրիդային վարչակարգեր»*, Հայաստանը, Ռուսաստանը, Ղրղզստանը և Տաջիկստանը՝ *«կիսահամախմբված ավտորիտար վարչակարգեր»*, իսկ մյուս երկրները՝ *«համախմբված ավտորիտար վարչակարգեր»* (տե՛ս աղյուսակ 1):

«Ազատության տուն» կազմակերպության «Մամուլի ազատություն» զեկույցում միավորների հաշվարկումը 1994-2001 թթ. կատարվում էր հետևյալ 4 գործոնների հիման վրա՝ *1) մամուլի գործունեության վրա ազդեցություն ունեցող օրենքներ և նորմատիվ ակտեր, 2) մամուլի գործունեության նկատմամբ քաղաքական ճնշումներ և վերահսկողություն, 3) տնտեսական ազդեցություն, 4) մամուլի և լրագրողների դեմ բռնարարքներ*[15]: Սկսած 2002 թ.-ից՝ «Մամուլի ազատություն» զեկույցում գնահատման մեթոդաբանությունը փոխվեց՝ միավորելով 2-րդ և 4-րդ

---

[11] Տե՛ս Freedom House 2016. «Methodology» // https://www.freedomhouse.org/report-/freedom-world-2015/methodology#.UuEq87Qo71I (վերջին մուտքը՝ 20.04.2016թ.):

[12] Տե՛ս նույն տեղը:

[13] Տե՛ս Freedom House 2016. «Nations in Transit Methodology» // https://freedom house.org/report/nations-transit-methodology (վերջին մուտքը՝ 20.04.2016թ.), Freedom House 2016. «About Nations in Transit» // https://freedomhouse.org/report-types/nations-transit (վերջին մուտքը՝ 20.04.2016թ.):

[14] Տե՛ս նույն տեղը:

[15] Տե՛ս նույն տեղը:

Աղյուսակ 1

1999-2016 թթ. հետխորհրդային երկրների ժողովրդավարության ինդեքսի միջինացված հանրագումարը և վարչակարգերի տիպաբանությունը[16]

Երկիր	Միջինացված հանրագումար	Վարչակարգը
Էստոնիա	2.00	*համախմբված ժողովրդավարություն*
Լատվիա	2.15	*համախմբված ժողովրդավարություն*
Լիտվա	2.26	*համախմբված ժողովրդավարություն*
Ուկրաինա	4.62	*անցումային կառավարություն կամ հիբրիդային*
Վրաստան	4.69	*անցումային կառավարություն կամ հիբրիդային*
Մոլդովա	4.90	*անցումային կառավարություն կամ հիբրիդային*
Հայաստան	5.16	*կիսահամախմբված ավտորիտար*
Ռուսաստան	5.69	*կիսահամախմբված ավտորիտար*
Ղրղզստան	5.73	*կիսահամախմբված ավտորիտար*
Տաջիկստան	5.99	*կիսահամախմբված ավտորիտար*
Ադրբեջան	6.10	*համախմբված ավտորիտար*
Ղազախստան	6.26	*համախմբված ավտորիտար*
Բելառուս	6.56	*համախմբված ավտորիտար*
Ուզբեկստան	6.72	*համախմբված ավտորիտար*
Թուրքմենստան	6.89	*համախմբված ավտորիտար*

գործոնները[17]: Հաշվի առնելով մամուլի ազատության առանցքային նշանակությունը ժամանակակից հասարակությունների ժողովրդավարական առաջընթացում՝ *«Մամուլի ազատության» զեկույցում* գնահատման միավորների սանդղակը ձևավորվում է *իրավական («0-30» միավոր), քաղաքական («0-40» միավոր) և տնտեսական («0-30» միավոր) միջավայրերից*[18]: Դրանց հիման վրա էլ, ըստ մամուլի կարգավիճակի, երկրները դասակարգվում են «ազատ» («0-30» միավոր), «մասամբ ազատ» («31-60» միավոր) և «ոչ ազատ» («61-100» միավոր): Համաձայն «Մամուլի ազատության» 1992-2016թթ. զեկույցների համեմատական վերլուծության՝ 1992-2001 թթ. ժամանակահատվածում Հայաստանը համարվել է «մասամբ ազատ», իսկ 2002-2015 թթ.՝ «ոչ ազատ» մամուլ ունեցող երկիր: Հետխորհրդային երկրների շարքում «ազատ» մամուլ ունեն միայն Էստոնիան, Լատվիան և Լիտվան, «մասամբ ազատ»՝ Վրաստանը, Մոլդովան և Ուկրաինան, իսկ «ոչ ազատ»՝ մյուս երկրները[19]:

---

[16] Տվյալների աղբյուրը՝ «Ազատության տուն» կազմակերպության պաշտոնական կայք՝ https://freedomhouse.org/reports (վերջին մուտքը՝ 30.05.2016թ.):

[17] Տե՛ս նույն տեղը:

[18] Տե՛ս նույն տեղը:

[19] Տե՛ս նույն տեղը:

Հաշվի առնելով ժամանակակից պայմաններում համացանցի աշխարհաքաղաքական նշանակությունը և կայացման միտումները՝ *«Ազատության տուն» կազմակերպությունը* համեմատական վերլուծության է ենթարկում նաև համացանցի ազատության ցուցանիշները: *«Համացանցի ազատության» զեկույցում* միավորների հաշվարկումը կատարվում էր հետևյալ 3 գործոնների հիման վրա՝ *1) օգտվելու խոչընդոտներ («0-25» միավոր), 2) բովանդակության սահմանափակումներ («0-35» միավոր), 3) օգտատերերի իրավունքների խախտումներ («0-40» միավոր)*[20]: *«Համացանցի ազատության» զեկույցի* գնահատման մեթոդաբանության համաձայն՝ Էստոնիան, Հայաստանը և Վրաստանն ունեցել են առաջընթաց համացանցի ազատության ոլորտում[21] (տե՛ս աղյուսակ 2): Ընտրանքում ընդգրկված հետխորհրդային մյուս երկրներում պահպանվել է անբարենպաստ միջավայրը կամ էլ արձանագրվել է հետընթաց (տե՛ս աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Հետխորհրդային երկրների «համացանցի ազատության» ինդեքսը[22]

Երկիր/տարի	2011	2012	2013	2014	2015
Էստոնիա	ազատ	ազատ	ազատ	ազատ	ազատ
Հայաստան	-	-	ազատ	ազատ	ազատ
Վրաստան	մասամբ ազատ	ազատ	ազատ	ազատ	ազատ
Ուկրաինա	-	ազատ	ազատ	մասամբ ազատ	մասամբ ազատ
Ղրղզստան	-	մասամբ ազատ	մասամբ ազատ	մասամբ ազատ	մասամբ ազատ
Ադրբեջան	մասամբ ազատ	մասամբ ազատ	մասամբ ազատ	մասամբ ազատ	մասամբ ազատ
Ռուսաստան	մասամբ ազատ	մասամբ ազատ	մասամբ ազատ	մասամբ ազատ	ոչ ազատ
Ղազախստան	մասամբ ազատ	մասամբ ազատ	մասամբ ազատ	մասամբ ազատ	ոչ ազատ
Բելառուս	ոչ ազատ	ոչ ազատ	ոչ ազատ	ոչ ազատ	ոչ ազատ
Ուզբեկստան	-	ոչ ազատ	ոչ ազատ	ոչ ազատ	ոչ ազատ

Ժողովրդավարության ինդեքսի գնահատման այլ ընթացակարգ է մշակված *«Ժողովրդավարության բազմազանություն»* (Varieties of Democracy (V-Dem))[23] մեթոդաբանության շրջանակներում: Հատկապես կարևորվել են ժողովրդավարության հետևյալ 7 սկզբունքները՝ *ընտրական (Electoral), ազատական (Liberal), մասնակցային (Participatory), մե-*

[20] Տե՛ս նույն տեղը:
[21] Տե՛ս նույն տեղը:
[22] Տե՛ս նույն տեղը:
[23] Տե՛ս V-Dem 2016. “About V-Dem” // https://v-dem.net/en/about (վերջին մուտքը՝ 30.05.2016թ.):

ծամասնական (Majoritarian), համամասնական (Consensual), դելիբերատիվ (Deliberative), էգալիտար (Egalitarian)[24]: «V-Dem»-ի մոդելում ընտրական ժողովրդավարության առանցքի շուրջ դիտարկվում են ժողովրդավարության մյուս 6 հատկանիշները: Ըստ այդ մոդելի ընտրական ժողովրդավարության ինդեքսի՝ Հարավային Կովկասի երկների շարքում 1990-2003 թթ. առաջատարը Հայաստանն էր, իսկ 2004-2015 թթ.՝ Վրաստանը[25], իսկ դելիբերատիվ ժողովրդավարության ինդեքսով՝ 1990-1999 թթ. առաջատարը Հայաստանն էր, իսկ 2002-2015 թթ.՝ Վրաստանը: Համաձայն էգալիտար ժողովրդավարության ինդեքսի՝ 1990-2000 թթ. առաջատարը եղել է Հայաստանը, իսկ 2004-2015 թթ.՝ Վրաստանը: Լիբերալ ժողովրդավարության ինդեքսով՝ 1990-1997 թթ. առաջատարը եղել է Հայաստանը, իսկ 2002-2015 թթ.՝ Վրաստանը: Վերջապես մասնակցային ժողովրդավարության ինդեքսով՝ 1990-2003 թթ. առաջատարը եղել է Հայաստանը, իսկ 2004-2015 թթ.՝ Վրաստանը:

Հաշվի առնելով հասարակության քաղաքական համակարգում ժողովրդավարացման գործընթացում պետության առանձնահատուկ նշանակությունը՝ *Համաշխարհային բանկը (ՀԲ)* օգտագործում է «համաշխարհային կառավարման ինդիկատորները» (ՀԿԻ)[26]: Դրանցում երկրների վարկանիշը և միավորների հաշվարկումը կատարվում են 6 ենթաինդեքսների միջոցով՝ *«Ձայնի լսելիություն և հաշվետվողականություն» (ՁԼՀ), «Քաղաքական կայունություն և բռնության/ահաբեկչության բացակայություն» (ՔԿԲ/ԱԲ), «Կառավարման արդյունավետություն» (ԿԱ), «Կարգավորման որակ» (ԿՈ), «Օրենքի գերակայություն» (ՕԳ), «Կոռուպցիայի վերահսկում» (ԿՎ)*[27]: Աղյուսակ 3-ում ներկայացված է Հայաստանի և հետխորհրդային երկրների ՀԿԻ-ի միջինացված հանրագումարն ըստ 6 ենթաինդեքսների, որոնց համաձայն՝ պետական կառավարման համակարգի ժողովրդավարացման և քաղաքացիական հասարակության կայացման ուղղությամբ Բալթյան երկներն ունեն զգալի առաջընթաց (տե՛ս աղյուսակ 3): Հայաստանի համար, ի թիվս այլ հարցերի, շարունակում են հատկապես հրատապ մնալ հաշվետվողականության և կոռուպցիայի դեմ պայքարի հիմնախնդիրները (տե՛ս աղյուսակ 3): Ընդհանուր առմամբ Հայաստանի ՀԿԻ-ի ենթաինդեքսների ցուցանիշները համադրելի են Վրաստանի և Մոլդովայի համապատասխան ենթաինդեքսների ցուցանիշների հետ:

---

[24] Տե՛ս նույն տեղը:

[25] Տվյալների աղբյուրը՝ «Varieties of Democracy (V-Dem)» պաշտոնական կայք՝ https://v-dem.net/en/analysis/CountryGraph/#current-selections (վերջին մուտքը՝ 30.05.2016թ.):

[26] Տե՛ս «The Worldwide Governance Indicators (WGI) project» // http://info.worldbank.org/governance/wgi/index.aspx#home (վերջին մուտքը՝ 30.05.2016թ.):

[27] Այդ մասին տե՛ս **Kaufmann D., Kraay A.** and **Mastruzzi M.**, The Worldwide Governance Indicators: Methodology and Analytical Issues (September 2010). World Bank Policy Research Working Paper № 5430. Available at SSRN: http://ssrn.com/abstract=1682130 (վերջին մուտքը՝ 30.05.2016թ.):

Աղյուսակ 3

1996-2014 թթ. ժամանակահատվածում հետխորհրդային երկրների «համաշխարհային կառավարման ինդիկատորների» (ՀԿԻ) միջինացված հանրագումարը[28]

Երկիր	ՁԼՀ	ՔԿԲ/ԱԲ	ԿԱ	ԿՈ	ՕԳ	ԿՎ
Էստոնիա	82.00	68.62	79.39	90.23	79.23	77.61
Լիտվա	74.40	69.56	71.90	81.45	68.50	62.71
Լատվիա	70.54	63.44	70.67	79.50	67.64	58.85
Վրաստան	42.64	20.32	50.30	50.67	36.09	43.42
Մոլդովա	41.07	38.40	31.02	44.90	40.72	29.85
Ուկրաինա	40.44	35.16	28.47	31.62	23.34	17.18
Հայաստան	29.71	40.45	47.57	55.73	41.02	33.21
Ռուսաստան	27.62	16.82	39.33	40.02	21.87	18.40
Ղրղզստան	23.32	21.30	28.42	40.34	16.06	15.98
Ղազախստան	17.76	50.72	33.78	38.04	23.32	16.33
Ադրբեջան	15.06	23.98	24.62	31.57	22.84	12.24
Տաջիկստան	10.72	13.96	13.48	13.95	10.67	10.92
Բելառուս	8.15	51.94	18.00	9.07	15.86	29.69
Ուզբեկստան	2.49	17.53	17.12	3.97	9.31	11.79
Թուրքմենստան	2.25	50.53	6.12	2.43	6.06	7.62

Ժողովրդավարության և ժողովրդավարացման գործընթացների գնահատման այլ մոտեցում է ամրագրված ***«Polity IV» ինդեքսում***, որի մեթոդաբանության համաձայն՝ քաղաքական վարչակարգերը դասակարգվում են *«ժողովրդավարությունների» (+6-ից մինչև +10 միավոր), «ավտոկրատիաների» (-10-ից մինչև -6 միավոր) և «անոկրատիաների» (-5-ից մինչև +5 միավոր)*[29]: *«Polity IV»* ինդեքսի համաձայն՝ 1991-2015 թթ. քաղաքական վարչակարգը Հայաստանում (սկսած 1998 թ.-ից), Ռուսաստանում (սկսած 2007 թ.-ից) և Ուկրաինայում (սկսած 2013 թ.-ից) համարվել է «անոկրատական»: Բալթյան երկրներում, Ուկրաինայում (1994-2013 թթ.), Վրաստանում (սկսած 2013թ.-ից), Ղրղզստանում (սկսած 2013 թ.-ից)՝ ժողովրդավարական, իսկ Ադրբեջանում, Բելառուսում, Ղազախստանում, Տաջիկստանում, Թուրքմենստանում և Ուզբեկստանում՝ ավտոկրատական[30]:

---

[28] Տվյալների աղբյուրը՝ Համաշխարհային բանկի «The Worldwide Governance Indicators (WGI) project»-ի պաշտոնական կայք՝ http://info.worldbank.org/governance/wgi/-index.aspx#home (վերջին մուտքը՝ 30.05.2016թ.):

[29] Տվյալների աղբյուրը՝ «Center for Systemic Peace»-ի պաշտոնական կայքի՝ http://www.systemicpeace.org/polity/polity4.htm (վերջին մուտքը՝ 30.05.2016թ.):

[30] Տե՛ս նույն տեղը:

Կարևորելով հասարակական կյանքի ոլորտների ազդեցությունը ժողովրդավարության վրա՝ *«Democracy Ranking» (DR)*-ում ներառված են քաղաքական և ոչ քաղաքական (գենդերային, տնտեսական, գիտելիքի, առողջապահության, շրջակա միջավայրի) գործոններ[31]: DR-ի վարկանիշային գնահատման բանաձևում քաղաքականին հատկացված է 50 %, իսկ մյուս գործոններին՝ 10-ական %: DR-ի մոդելի համար կիրառվում է հետևյալ մոտեցումը. *«Ժողովրդավարության որակը» հավասար է՝ «քաղաքականության որակ» գումարած «հասարակության որակ» (Quality of Democracy = Quality of Politics + Quality of Society)*[32]: DR-ի ենթաինդեքսների ցուցանիշների հանրագումարի համաձայն՝ 2000-2014 թթ. ժամանակահատվածում Հայաստանի, Ռուսաստանի և Ղրղզստանի ժողովրդավարության որակը գնահատված է «ցածր», Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի ժողովրդավարության որակը՝ «միջին», իսկ Բալթյան երկրների ժողովրդավարության որակը՝ «բարձր»[33]:

Ժողովրդավարության կայացման բազմագործոնային մեթոդաբանություն է առաջարկված նաև ժողովրդավարության մակարդակի ինդեքսի (ԺՄԻ) մոդելում, որի միջոցով երկրների վարկանիշային ուսումնասիրություններում ներառված են *քաղաքական, տնտեսական, սոցիալական, կրթական և առողջապահական գործոնները*[34]: 2012-2013 թթ. ժամանակահատվածում ԺՄԻ-ի համեմատական միջերկրային վերլուծության համաձայն՝ հետխորհրդային 8 երկրների շարքում Հայաստանը զբաղեցրել է 4-րդ վարկանիշային տեղը[35]:

Զարգացող և փոխակերպվող երկրների ժողովրդավարության և շուկայական տնտեսության անցման գործընթացները չափվում են *Բերթելսմանի փոխակերպման ինդեքսի (ԲՓԻ)* վարկանիշային հետազոտության մեթոդաբանությամբ[36]: ԲՓԻ-ն գնահատում է զարգացող և փոխակերպվող երկրներում ժողովրդավարության և շուկայական տնտեսության կայացման գործընթացների ազդեցությունը սոցիալա-

---

[31] Տվյալների աղբյուրը՝ Ժողովրդավարության վարկանիշավորման ընկերակցության (Democracy Ranking Association) պաշտոնական կայք՝ http://democracyranking.org/wordpress (վերջին մուտքը՝ 30.05.2016թ.):

[32] Տե՛ս **Campbell D. F. J.**, The Basic Concept for the Democracy Ranking of the Quality of Democracy. Vienna: Democracy Ranking, 2008, էջ 33-37:

[33] Տվյալների աղբյուրը՝ Ժողովրդավարության վարկանիշավորման ընկերակցության պաշտոնական կայք՝ http://democracyranking.org/wordpress/rank/democracy-ranking-2014, http://democracyranking.org/ranking/2015/data/Scores_of_the_Democracy_Ranking_2015_letter.pdf (վերջին մուտքը՝ 30.05.2016թ.):

[34] Այդ մասին տե՛ս **Ա. Ս. Ալեքսանյան**, Ժողովրդավարության մակարդակի չափման մոդելը // Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի համեմատական վերլուծություն. Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ուկրաինա, Մոլդովա, Եր., 2015, էջ 13-28:

[35] Տե՛ս **Ա. Ս. Ալեքսանյան**, Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի համեմատական միջերկրային վերլուծություն // «21-րդ դար», թիվ 4 (62), 2015, էջ 141-142:

[36] Տվյալների աղբյուրն ըստ Բերթելսմանի հիմնադրամի փոխակերպման ինդեքսի պաշտոնական կայքի՝ http://www.bti-project.org/en/index (վերջին մուտքը՝ 30.05.2016թ.):

կան փոփոխությունների վրա: ԲՓԻ-ի «կարգավիճակի ինդեքսը» (Status index) վարկանիշավորում է երկրներն ըստ ժողովրդավարության և շուկայական տնտեսության որակի, իսկ «կառավարման ինդեքսը» (Management index)՝ ըստ քաղաքական մենեջմենթի արդյունավետության[37]: Ըստ ԲՓԻ-ի երկու ինդեքսների 2014-2016 թթ. վարկանիշային աստիճանակարգման՝ Հայաստանի ցուցանիշները մոտ են Վրաստանի, Մոլդովայի, Ուկրաինայի և Ղրղզստանի ցուցանիշներին[38]:

Ժողովրդավարության գնահատման ինդեքսներում առանցքային նշանակություն ունի ժողովրդավարության որակը, որը ենթադրում է *ընթացակարգերի որակ, կառուցվածքային-գործառական որակ և արդյունքների որակ*[39]: Դրանք դրսևորվում են աշխարհի տարբեր երկրներում առկա ժողովրդավարության բազմաբնույթ մոդելներում: Ժողովրդավարության կայացման, գործառման և առաջընթացի որակական հատկանիշներով պայմանավորված՝ ժողովրդավարագետները ժողովրդավարությունները դասակարգել են՝ սահմանելով «որակով», «ցածր որակով» և «առանց որակի» մակարդակներ[40]:

Հիմնվելով ժողովրդավարության մոտեցումների, ինդեքսների և վարկանիշային ուսումնասիրությունների վրա՝ դրանց որակական կողմերը համախմբելու համար առաջարկում ենք ***ցիվիլիարխիայի ինդեքսը***: Այն ներառում է հասարակական կյանքի 4 ոլորտների 9-ական գործոն՝ խարսխված մարդու[41] քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ու ազատությունների պաշտպանության ընթացակարգերի վրա (տե՛ս գծապատկեր 1): Դրանք գոյություն ունեն և գործառում են մեկը մյուսով, որոնց հիմնարար սկզբունքները բխում են մեկը մյուսից, փոխպայմանավորում և փոխլրացնում են մեկը մյուսին՝ ներպետական, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում ապահովելով *անվտանգություն, մասն-*

---

[37] Տե՛ս նույն տեղը:

[38] Տե՛ս Bertelsmann Stiftung 2016. «Post-Soviet Eurasia» // http://www.bti-project.org-/en/reports/regional-reports/post-soviet-eurasia (վերջին մուտքը՝ 30.05.2016թ.):

[39] Այդ մասին տե՛ս **Morlino L.**, Qualities of Democracy: How to Analyze Them. Florence: Istituto Italiano di Scienze Umane 2009, էջ 1-43:

[40] Այդ մասին տե՛ս **Nef J., Reiter B.**, The Democratic Challenge. Rethinking Democracy and Democratization. Palgrave Macmillan, 2009, էջ 33-52, **Held D.**, Models of Democracy. Stanford University Press, 1996, էջ 335-360, **Shapiro I.**, The State of Democratic Theory. Princeton University Press, 2003, էջ 10-34, **Przeworski A., Alvarez M. E., Cheibub J. A., Limongi F.**, Democracy and Development: Political Institutions and Well-Being in the World, 1950-1990. Cambridge University Press, 2000, էջ 216-265:

[41] Այդ մասին տե՛ս **Alexander A. C., Welzel Ch.**, Measuring Effective Democracy. The Human Empowerment Approach // Comparative Politics (April), 2011, էջ 271-289, **O'Donnell G.**, Human Development, Human Rights, and Democracy, in: **O'Donnell G., Cullell J. V., Iazzetta O. M.** (eds.), The Quality of Democracy. Theory and Applications. Notre Dame: University of Notre Dame Press, 2004, էջ 9-92, **Campbell D. F. J.,** նշվ. աշխ., էջ 40-41:

ակցություն, ներկայացվածություն, վերահսկողություն, հաշվետվողականություն, թափանցիկություն, երկխոսություն, գործընկերություն և զարգացում (տե՛ս գծապատկեր 1):

Գծապատկեր 1-ից երևում է, որ 4 ենթաինդեքսների 9 չափումները և 36 գործոնները ձևավորում են ***ցիվիլիարխիայի առանցքը***, որն ապահովում է մարդու ՔՏՍՄ իրավունքների և ազատությունների միջև փոխլրացուցչությունը: ***Ցիվիլիարխիայի առանցքից*** շեղումները «ՔՏՍՄ ազատությունների» կամ դեպի «ՔՏՍՄ իրավունքների» ուղղությամբ ի ցույց են դնում ցիվիլիարխիայի կառուցվածքային-գործառական հիմնախնդիրները:

Գծապատկեր 1

Մարդու ՔՏՍՄ իրավունքների և ազատությունների ցիվիլիարխիկ առանցքը



Գծապատկեր 2-ից երևում է մարդու ՔՏՍՄ իրավունքների և ազատությունների միջև *ցիվիլիարխիկ աստիճանակարգությունը*, որը ցույց է տալիս ցիվիլիարխիայի մոդելում ներառված և դրա կայացմանը նպաստող ընթացակարգերը: Հետևաբար՝ բոլոր այն գործոնները, որոնք խոչընդոտում և սահմանափակում են մարդու՝ ՔՏՍՄ իրավունքների և ազատությունների կայացումը՝ համարվում են ոչ ցիվիլիարխիկ և հակացիվիլիարխիկ:

Գծապատկեր 2

Մարդու ՔՏՍՄ իրավունքների և ազատությունների ցիվիլիարխիկ աստիճանակարգությունը



Գծապատկեր 3-ից երևում է 4 ենթաինդեքսների և դրացից յուրաքանչյուրի 9-ը չափումներով պայմանավորված 36 գործոնների միջև աստիճանակարգությունը: Վերջինս էլ իր հերթին ցիվիլիարխիայի ենթաինդեքսների և դրանց գործոնների կանոնակարգված հարաբերությունների ամբողջությունն է: Յուրաքանչյուր ենթաինդեքս ցույց է տալիս ցիվիլիարխիայի կայացման որոշակի մակարդակ, ինչպես նաև տվյալ մակարդակին բնորոշ քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներն ու ազատությունները:

Մարդու քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային (ՔՏՍՄ) անվտանգության իրավունքների և ազատությունների պաշտպանության ընթացակարգերը հենքն են մասնակցության, ներկայացվածության, վերահսկողության, հաշվետվողականության, թափանցիկության, երկխոսության, գործընկերության և զարգացման իրավունքների և ազատությունների: Մարդու ՔՏՍՄ զարգացման իրավունքներն ու ազատություններն ամբողջացնում են ցիվիլիարխիայի կայացման գործընթացը՝ ցույց տալով զարգացման արդյունքը և որակի բարելավումը: Մարդու ՔՏՍՄ զարգացման իրավունքներն ու ազա-

տությունները մի կողմից ապահովում են ցիվիլիարխիայի կայացման գործընթացի և արդյունքի միջև պատճառահետևանքային կապը, իսկ մյուս կողմից՝ շարունակականությունը և առաջընթացը:

Գծապատկեր 3

Մարդու իրավունքներն ու ազատությունները ցիվիլիարխիայի պայմաններում



Մարդու քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ և ազատություններ

Ցիվիլիարխիայի ինդեքսի համար սահմանվում են հետևյալ երեք մակարդակներն ըստ համապատասխան միավորների:

- **Հակացիվիլիարխիա և ոչ ցիվիլիարխիա՝ 1-2,9-ը միավոր,**
- **Կայացող ցիվիլիարխիա՝ 3-6,9-ը միավոր,**
- **Կայացած ցիվիլիարխիա՝ 7-9-ը միավոր**:

Ցիվիլիարխիայի յուրաքանչյուր մակարդակ ցույց է տալիս ցիվիլիարխիայի կայացման նախադրյալները, որոնք համապատասխանում են ցիվիլիարխիայի սկզբնական, միջին և բարձր կառուցվածքային-գործառական մակարդակներին:

Ցիվիլիարխիայի ինդեքսի քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների և ազատությունների ենթաինդեքսները գնահատվում են **1-9-ը միավորների միջակայքում**, որտեղ **1-ը՝ վատագույնն է, իսկ 9-ը՝ լավագույնը** (տե՛ս աղյուսակ 4):

Ցիվիլիարխիայի ինդեքսը հաշվվում է հետևյալ երկու եղանակով (հորիզոնական և ուղղահայաց) (տե՛ս աղյուսակ 4)՝

- **ՑԻ$_1$ = (ՔՏՍՄ$_{Անվտ.}$ + ՔՏՍՄ$_{Մաս.}$ + ՔՏՍՄ$_{Ներկ.}$ + ՔՏՍՄ$_{Վեր.}$ + ՔՏՍՄ$_{Հաշվ.}$ + ՔՏՍՄ$_{Թափ.}$ + ՔՏՍՄ$_{Երկ.}$ + ՔՏՍՄ$_{Գործ.}$ + ՔՏՍՄ$_{Զարգ.}$) / 9**
- **ՑԻ$_2$ = (Ք$_{ԱՄՆՎՀԹԵԳՋ}$ + Տ$_{ԱՄՆՎՀԹԵԳՋ}$ + Ս$_{ԱՄՆՎՀԹԵԳՋ}$ + Մ$_{ԱՄՆՎՀԹԵԳՋ}$) / 4**

Աղյուսակ 4

Ցիվիլիարխիայի ինդեքսի միավորների հորիզոնական և ուղղահայաց հաշվարկումը

Իրավունքներ և ազատություններ		*Քաղաքական*	*Տնտեսական*	*Սոցիալական*	*Մշակութային*	*ԳՈՐԾՈՆԱՅԻՆ ԵՆԹԱԻՆԴԵՔՍ*
1.	Անվտանգություն	+	+	+	+	*ՔՏՍՍանվտ.*
2.	Մասնակցություն	+	+	+	+	*ՔՏՍՍմաս.*
3.	Ներկայացվածություն	+	+	+	+	*ՔՏՍՍներկ.*
4.	Վերահսկողություն	+	+	+	+	*ՔՏՍՍվեր.*
5.	Հաշվետվողականություն	+	+	+	+	*ՔՏՍՍհաշվ.*
6.	Թափանցիկություն	+	+	+	+	*ՔՏՍՍթափ.*
7.	Երկխոսություն	+	+	+	+	*ՔՏՍՍերկ.*
8.	Գործընկերություն	+	+	+	+	*ՔՏՍՍգործ.*
9.	Զարգացում	+	+	+	+	*ՔՏՍՍզարգ.*
ՈՒՂՂՏԱՅԻՆ ԵՆԹԱԻՆԴԵՔՍ		*Քառավանդակ*	*Տասավանդակ*	*Սանդավանդակ*	*Սանդավանդակ*	*ՑԻՎԻԼԻԱՐԽԻԱՅԻ ԻՆԴԵՔՍ*

Ցիվիլիարխիայի ինդեքսը հորիզոնական եղանակով կհաշվարկենք հետևյալ բանաձևով՝

ՑԻ₁ = (Անվտ. + Մաս. + Ներկ. + Վեր. + Հաշվ. + Թափ. + Երկ. + Գործ. + Զարգ.) / 9

Դրա հիման վրա կունենանք ցիվիլիարխիայի հետևյալ գործոնային ենթաինդեքսները՝

- *Ցիվիլիարխիայի անվտանգության ենթաինդեքսը = $Քանվտ. + Տանվտ. + Ուանվտ. + Մանվտ.$,*
- *Ցիվիլիարխիայի մասնակցության ենթաինդեքսը = $Քմաս. + Տմաս. + Ումաս. + Մմաս.$,*
- *Ցիվիլիարխիայի ներկայացվածության ենթաինդեքսը = $Քներկ. + Տներկ. + Ուներկ. + Մներկ.$,*
- *Ցիվիլիարխիայի վերահսկողության ենթաինդեքսը = $Քվեր. + Տվեր. + Ումեր. + Մվեր.$,*
- *Ցիվիլիարխիայի հաշվետվողականության ենթաինդեքսը = $Քհաշվ. + Տհաշվ. + Ումաշվ. + Մհաշվ.$,*
- *Ցիվիլիարխիայի թափանցիկության ենթաինդեքսը = $Քթափ. + Տթափ. + Ումթափ. + Մթափ.$,*
- *Ցիվիլիարխիայի երկխոսության ենթաինդեքսը = $Քերկ. + Տերկ. + Ումերկ. + Մերկ.$,*
- *Ցիվիլիարխիայի գործընկերության ենթաինդեքսը = $Քգործ. + Տգործ. + Ումգործ. + Մգործ.$,*
- *Ցիվիլիարխիայի զարգացման ենթաինդեքսը = $Քզարգ. + Տզարգ. + Ումզարգ. + Մզարգ.$:*

Ցիվիլիարխիայի ինդեքսն ուղղահայաց եղանակով կհաշվարկենք հետևյալ բանաձևով՝

❖ **ՑԻ$_2$ = (ՔԱՄՆՎՀԹԵԳԶ + ՏԱՄՆՎՀԹԵԳԶ + ՍԱՄՆՎՀԹԵԳԶ + ՄԱՄՆՎՀԹԵԳԶ) / 4**

Դրա հիման վրա կունենանք ցիվիլիարխիայի հետևյալ ոլորտային ենթաինդեքսները՝

➢ *Ցիվիլիարխիայի քաղաքական ենթաինդեքսը (ԱՄՆՎՀԹԵԳԶ) = Անվտ. + Մաս. + Ներկ. + Վեր. + Հաշվ. + Թափ. + Երկ. + Գործ. + Զարգ.,*

➢ *Ցիվիլիարխիայի տնտեսական ենթաինդեքսը (ԱՄՆՎՀԹԵԳԶ) = Անվտ. + Մաս. + Ներկ. + Վեր. + Հաշվ. + Թափ. + Երկ. + Գործ. + Զարգ.,*

➢ *Ցիվիլիարխիայի սոցիալական ենթաինդեքսը (ԱՄՆՎՀԹԵԳԶ) = Անվտ. + Մաս. + Ներկ. + Վեր. + Հաշվ. + Թափ. + Երկ. + Գործ. + Զարգ.,*

➢ *Ցիվիլիարխիայի մակութային ենթաինդեքսը (ԱՄՆՎՀԹԵԳԶ) = Անվտ. + Մաս. + Ներկ. + Վեր. + Հաշվ. + Թափ. + Երկ. + Գործ. + Զարգ.:*

Ամփոփելով ցիվիլիարխիայի ինդեքսի (ՑԻ) վերոհիշյալ մոտեցումները՝ կարող ենք եզրակացնել.

- հիմնվելով ժողովրդավարության մակարդակի, ժողովրդավարացման չափման ինդեքսների և մեթոդաբանության վրա՝ ՑԻ-ն փոխլրացնում և ամբողջացնում է դրանց որակական կողմերը,
- ՑԻ-ն ներառում է ժողովրդավարության որակի ինդեքսների առանցքային ցուցիչները՝ հիմնավորելով ժողովրդավարության ցիվիլիարխիկ առավելությունները,
- ՑԻ-ի ոլորտային և գործոնային ենթաինդեքսները հիմնավորում են ժողովրդավարական փոխակերպման, կայացման և զարգացման քաղաքակրթական ընթացակարգերը,
- ՑԻ-ն հնարավորություն է տալիս չափելու երկրների հասարակական համակարգի, ինստիտուտների և գործընթացների քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային բաղադրիչների որակական կողմերը:

Բանալի բառեր – *ցիվիլիարխիայի ինդեքս, դեմոկրատիայի ինդեքս, անվտանգություն, ներկայացվածություն, վերահսկողություն, հաշվետվողականություն, թափանցիկություն, գործընկերություն, զարգացում*

АШОТ АЛЕКСАНЯН – ***Попытка разработать индекс цивилиархии.*** – В статье анализируются методологические основы индекса цивилиархии и популярные в социально-политических исследованиях индексы демократии. Рассматриваются возможности построить многоуровневую теоретическую модель цивилиархии, описывающую качество политических, социальных, экономических и культурных процессов. Основными её индикаторами являются права и свободы человека в разных сферах, защиту которых обеспечивают контроль, подотчётность, прозрачность, диалог, партнёрство и т. д. Индекс цивилиархии определяет уровни, которых достигли цивилиархические институты. Сравнительный анализ данных, содержащихся в индексах демократии, демонстрирует потенциал нового цивилиархичекого подхода.

Ключевые слова: *индекс цивилиархии, индекс демократии, безопасность, представительство, контроль, подотчетность, прозрачность, партнерство, развитие*

ASHOT ALEKSANYAN – *An Attempt to Develop an Index of Civiliarchy.* – The article analyzes the methodological basis of the index of civiliarchy and popular in socio-political studies major indexes of democracy. The article discusses the possibility of building a multilevel theoretical model of civiliarchy, which describes the qualitative aspects of political, social, economic and cultural processes. Main indicators of the model of democracy are political, economic, social and cultural rights and freedoms, the effective protection of which provides security, participation, representation, control, accountability, transparency, dialogue, partnership, and development. The index of civiliarchy determines the appropriate levels of civiliarchic institutions. Comparative analysis of data democracy indices demonstrates the potential of a new civiliarchic approach.

Keywords: *index of civiliarchy, index of democracy, security, representation, control, accountability, transparency, partnership, development*

ՄԱՆԻՊՈՒԼՅԱՑԻՈՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ԷԴԳԱՐ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Մանիպուլյացիոն մեթոդները կառավարման համակարգում կիրառվել են դեռևս Հին աշխարհում: Կառավարողները միշտ էլ գտել են հասարակության վրա ազդելու ոչ բռնի մեթոդներ: Մեր թվարկությունից առաջ IV-III դարերում Չինաստանում ստեղծվեց լեգիստների՝ իրավագետների դպրոցը, որի ներկայացուցիչները հիմնվում էին այն դատողության վրա, որ ժողովրդական զանգվածներին արդյունավետ կառավարելու համար բավարար չէ օժտված լինել բացառիկ ուժով. կարևոր է, ղեկավարն ունենա նաև հետևյալ երկու հատկանիշները՝ *իշխանություն* ու *հմայք*[1]:

Ստրկատիրական ժամանակաշրջանում հասարակությունը բաղկացած էր ստրուկներից և ազատ խավից: Ստրուկները սովորաբար չունեին սեփականության, ամուսնանալու և ազատ լինելու իրավունք, նրանց նկատմամբ մշտապես կիրառվում էին հարկադրանքի բռնի միջոցներ, իսկ ազատ խավը լայնորեն միջամտում էր քաղաքական գործերին, ուներ տարատեսակ իրավունքներ և ազատություններ, որոնք ազատությունները ևս պետք է սահմանափակվեին, այլապես դրանք կհանգեցնեին քաոսի: Հասարակական գիտակցության մանիպուլյացիան[2]՝ որպես սոցիալական կառավարման միջոց, նպատակ ուներ ազդելու ազատ խավի ներկայացուցիչների աշխարհայացքի վրա: Այն իրականացվում էր պոետների միջոցով, որոնք համարվում էին մտավոր վերնախավ. նրանց աշխատությունները և հրապարակային ելույթները ազդում էին ազատ խավի գիտակցության վրա[3]: Եվրոպական քաղաքակրթության զարգացման ընթացքում մանիպուլյացիոն մեթոդների ստեղծման գործում իրենց ներդրումն են ունեցել անտիկ հեղինակները:

---

[1] Տե՛ս **Переломов Л. С.** Конфуцианство и легизм в политической истории Китая. М., 1981, էջ 145:

[2] **«Մանիպուլյացիա»** տերմինը ծագել է լատիներեն manipulus բառից, որը սկզբնապես ընկալվել է դրական իմաստով, այն է՝ «կառավարել», «օգնություն ցույց տալ»: Ժամանակակից գրականությունում «մանիպուլյացիա» ասելով հասկացվում է վարքը կառավարելու ունակություն՝ մարդու գիտակցության և հոգեկան աշխարհի վրա նպատակաուղղված ազդեցություն գործելով: Եվրոպական բառարաններում այն մեկնաբանվում է որպես որոշակի օբյեկտների նկատմամբ վարվելակերպ՝ որոշակի նպատակներից և մտադրություններից ելնելով:

[3] Տե՛ս **Князева И. В.** Историческая эволюция форм манипуляции // "Научные ведомости БелГУ", 2010, № 20, էջ 223:

Օրինակ, սոփեստները պնդում էին, որ բանավեճի էությունը ոչ այնքան ճշմարտությունը գտնելն էր, որքան հակառակորդի նկատմամբ հաղթանակը ցանկացած ձևով՝ նույնիսկ մոլորեցնելով հակառակորդին:

Միջնադարում հասարակական գիտակցության վրա ազդող գործոններից էր կրոնը և սիմվոլիզմը: Ա. Գուրևիչը կրոնը համարում էր «...միջնադարյան աշխարհայացքի հիմնական բնութագրիչը»[4]: Այդ ժամանակահատվածում մանիպուլյացիան իրականացվում էր սիմվոլ-պատկերների միջոցով: Ավելի ուշ հասարակության տարբեր խմբերի վարքագծի և որոշումների ընդունման վրա ազդեցության միջոցների ուսումնասիրությամբ է զբաղվել Ն. Մաքիավելլին: «Իշխանը» հայտնի աշխատության մեջ նա արտահայտել է այն գաղափարը, որ կառավարողի իշխանությունը նրա ուժի, քաղաքացիների համաձայնության և օժանդակության մեջ է: Նրա գտնում էր, որ կառավարչի շահերից չի բխում օրենքների փոփոխումը, քանի որ այն կարող է հանգեցնել հանրության դժգոհությանը: Մաքիավելլին առաջիններից էր, որ գիտակցեց մշակույթի, սովորույթների և արժեքային համակարգի կարևորությունը հասարակության կյանքում: Նրա կարծիքով, որ կառավարողը պետք է հակառակորդների հետ հարաբերություններում լինի խորամանկ: Էթիկայի տեսանկյունից քաղաքական գործընթացի իրականացման ժամանակ պետք է բացառվեն արգելքները: Եթե հասարակությանը կառավարելը ղեկավարի առջև դրված նպատակների իրականացման գլխավոր միջոցն է, ապա ոչ մի բարոյական կանոն չպետք է հակադրվի դրան: Կառավարչի հիմնական նպատակը իշխանությունը գրավելն ու պահպանելն է, ինչպես նաև այլ պետությունների վրա իր իշխանությունը տարածելը: Այսպիսով, Մաքիավելլին բարոյականությունը ստորադասեց իշխանության հասնելու ձգտմանը և դարձավ քաղաքականության մեջ մանիպուլյացիայի հիմնադիրը: Վերածննդի դարաշրջանում մարդկանց մանիպուլյացիան քաղաքականության իրականացման կարևոր գործիք էր[5]:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարասկզբին մեծ թափով սկսեցին ուսումնասիրել հասարակության մեջ տեղեկատվական և հոգեբանական գործոնների ազդեցությամբ տեղի ունեցող գործընթացները: Ըստ այդմ, սկսեցին արագորեն զարգանալ սոցիոլոգիան և հոգեբանությունը, որոնք հնարավորություն տվեցին խորությամբ ուսումնասիրելու մարդու էությունը և նրա փոխհարաբերությունները հասարակության հետ: 20-րդ դարի 20-ական թթ. մանիպուլյացիոն տեխնոլոգիաների ուսումնասիրությունը նոր փուլ մտավ: Այս շրջանում մեծ տարածում էին գտել Զ. Ֆրոյդի աշխատությունները, ով պնդում էր, որ մարդու հոգեկան աշխարհը բաղկացած է երեք տարրերից՝ անգիտակցական, ենթագիտակցական և գիտակցական: Նա նշում էր, որ մարդու վարքագիծն ու գոր-

[4] **Гуревич А. Я.** Категории средневековой культуры. М., 1984, с. 76.

[5] Տե ս **Скирбекк Г.** История философии. М., 2003, էջ 284-290:

ծողությունները ծնվում են նրա ենթագիտակցության մեջ, այստեղից էլ ենթադրվում է, որ եթե կարողանում ես կառավարել անձի ենթագիտակցությունը, ուրեմն կարող ես իշխել նաև նրա վարքագծի վրա: Բացի դրանից, հեղինակը պնդում էր, որ ամբոխին ավելի հեշտ է ներշնչելը, քանի որ մարդիկ, հայտնվելով ամբոխի շարքերում, կորցնում են իրենց սեփական «ես»-ը, «զանգվածը շատ հեշտ է տրվում ազդեցությանը, այն քննադատող չէ և նրա համար անհավանական ոչինչ գոյություն չունի...»[6]: Այս գաղափարներից օգտվել է հատկապես ֆաշիզմը:

Արդի հասարակական հարաբերությունները գնալով զարգանում և բարդանում են՝ նորովի ազդելով մարդկային փոխհարաբերությունների և գործողությունների վրա: Ժամանակակից աշխարհում գոյություն ունեն հասարակական լայն շերտերի գիտակցության վրա ազդելու առավել նուրբ հնարքներ, որոնց ազդեցությունը միշտ չէ, որ տեսանելի և գիտակցված է հանրության կողմից: Դրանցից ամենակարևորը մանիպուլյացիան է, որը կիրառվում է հասարակական կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտներում:

Քսանմեկերորդ դարը գլոբալ տեղեկատվական տեխնոլոգիաների դարաշրջան է, որտեղ մարդը կարող է փնտրել և ստանալ իրեն հետաքրքրող ցանկացած տեղեկատվություն: Այսպիսի տեղեկատվական հոսքերի պայմաններում չափազանց դժվար է տարբերել տեղեկատվությունն ապատեղեկատվությունից, և այս առումով հասարակության յուրաքանչյուր անդամ դառնում է բավականին խոցելի քաղաքական գործիչների և լրատվամիջոցների կողմից կիրառվող մանիպուլյացիայի նկատմամբ: Սա լրջագույն խնդիր է, քանի որ վնասում է տվյալ համակարգի արդյունավետ գործունեությանը, հասարակության իրազեկվածության մակարդակին և այլն: Հասարակության մանիպուլյացիան դարձել է սոցիալ-տնտեսական և քաղաքական ոլորտում առկա փոխհարաբերությունների կարգավորման գործուն միջոցներից մեկը: Դրանից մեծապես օգտվում են գովազդը, քաղաքական և տնտեսական PR-ը, շուկայավարությունը և այլն:

Մասնագիտական գրականության մեջ գոյություն ունեն այս երևվույթի տարբեր մեկնաբանություններ, մասնավորապես.

– մանիպուլյացիան հոգևոր, հոգեբանական ազդեցության ձև է, այլ ոչ թե ֆիզիկական բռնություն կամ դրա սպառնալիք: Այն կիրառողի թիրախը համարվում է մարդ–անհատի հոգեբանական վիճակը,

– մանիպուլյացիան թաքնված ազդեցություն է, փաստ, որը չպետք է բացահայտվի մանիպուլիացիայի օբյեկտի կողմից: Եթե բացահայտվում և արագորեն հայտնի է դառնում, գործողությունը չի իրականացվում, քանի որ այն մանիպուլիացիա իրականացնողին կհասցնի նշանակալի վնաս: Իսկ եթե նույնիսկ բացահայտվում է, ապա չպետք է

[6] **Фрейд З.** Психология масс и анализ человеческого. М., 2013, с. 428-430.

թույլ տալ, որ պարզ դառնան դրա հիմքում ընկած խորքային մտադրությունները,

– մանիպուլյացիան ազդեցություն է, որը պահանջում է մեծ վարպետություն և գիտելիք: Եթե խոսքը վերաբերում է հանրային գիտակցությանը, քաղաքականությանը թեկուզ տեղական մակարդակով, ապա, որպես կանոն, մանիպուլյացիոն գործընթացում ներառվում են հատուկ մասնագետներ, ովքեր տիրապետում են որոշակի տեխնոլոգիաների[7]:

Ուսումնասիրելով հիմնախնդրին նվիրված գրականությունը՝ պետք է նշել, որ թեև հնագույն ժամանակներում պետական և եկեղեցական գործիչները տարբեր առիթներով իրենց աշխատություններում անդրադարձել են հանրային հարաբերությունների բազմազան հիմնախնդիրներին և նույնիսկ դրա առանձին դրույթներ ու սկզբունքներ կիրառել են պետական համակարգի տարբեր փուլերում, այնուամենայնիվ այն առավել մշակված է ամերիկյան քաղաքագիտական դպրոցում, որտեղ այդ ուսումնասիրությունները տարվում են բազմազան ուղղություններով՝ հիմքում ունենալով տարբեր մոտեցումներ: Մանիպուլյացիայի միջոցով հասարակական կարծիքի ձևավորմանն առավել մեծ տեղ և դեր է տրվում ժողովրդավարական պետություններում, քանի որ այստեղ կարևորը հանրային կարծիքն է, որն ուսումնասիրելը և որին ժամանակին արձագանքելը պետության կարևորագույն խնդիրներից են: Այն իր առանձնահատուկ դերն ու նշանակությունն ունի նաև անցումային փուլում գտնվող քաղաքական համակարգերում:

Քաղաքականությունը ժամանակակից հասարակության կյանքում կարևոր տարր է, որը կոչված է ապահովելու սոցիալական գործընթացների կայունությունը՝ կանոնակարգելով մարդկանց փոխհարաբերությունները սոցիումում: Ներկայումս ավելի մեծ չափով կարևորվում է քաղաքական մանիպուլյացիայի ուսումնասիրությունը: Վերջինիս նկատմամբ գիտական հետաքրքրությունը հատկապես մեծացավ ժամանակակից տեխնոլոգիական առաջընթացի պայմաններում: «Տեղեկատվական հասարակության» ի հայտ գալուն զուգընթաց՝ փոխվեցին նաև քաղաքական մանիպուլյացիայի կիրառման տեխնոլոգիաները. հետևաբար նախկինում գոյություն ունեցող տեսական մոտեցումները այլևս բավարար չեն երևույթի ուսումնասիրման համար: Քաղաքական մանիպուլյացիան՝ որպես արագ զարգացող երևույթ, ընդգրկել է հասարակական կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտները, քանի որ այն իշխանություն իրականացնելու և դրան հասնելու պայքարի միջոց է[8]: Այն ունի քաղաքական նպատակ. քաղաքական սուբյեկտի կողմից որոշակի նպատակների հասնելուն ուղղված գործողություն է: Մանիպուլյատորները մի կողմից գործում են բացեիբաց՝ հաճախ թաքնվելով

[7] Տե՛ս **Кара-Мурза С. Г.** Манипуляция сознанием. М., 2000, էջ 12:

[8] Տե՛ս **Цуладзе А. М**. Большая манипулятивная игра. М., 2000, էջ 23:

հանրային շահի գաղափարների ներքո, բայց մեծ մասամբ նրանց գործողություններում առկա են թաքնված ընթացակարգեր, նպատակ, գաղափար, որոնք տեսանելի չեն շրջապատի համար: Եթե կառավարումն ունի տեսանելի բնույթ, ապա նպատակները ներկայացվում և իրականացվում են հրապարակայնորեն, թաքնված կառավարման դեպքում դրանք չեն բացահայտվում: Այս կամ այն ձևի գերակշռումը, ըստ հետազոտողների, կախված է մի քանի պատճառներից՝ «...ավելի շատ կառավարողների և կառավարվողների շահերի անհամապատասխանության աստիճանից, հանրության քաղաքակրթված լինելուց, կառավարող էլիտայի ունակությունից և հնարավորությունից՝ օգտագործելու զանգվածի վրա թաքնված ճնշման տարբեր միջոցներ»[9]:

Քաղաքականության մեջ լայնորեն կիրառվում է իրավիճակային մանիպուլացումը, քանի որ այն հնարավորություն է տալիս աննկատ գործելու, միևնույն ժամանակ հաղորդակցումը տեղի է ունենում այլ մարդկանց միջոցով, տարբեր իրավիճակներում, ապահովում է երկարատև ազդեցություն, գործադրում է խորը ճնշում մարդու գիտակցության, ենթագիտակցության և հետևաբար՝ վարքի վրա: Իրավիճակը հարաբերությունների և իրադրության մի այնպիսի համակարգ է, որում գտնվում է սուբյեկտը, այդ պատճառով կարևոր նշանակություն ունի այն հանգամանքը, թե մանիպուլյացիայի օբյեկտ մարդը ինչպես է ընկալում այդ իրավիճակը, և որքանով է այն կարևոր տվյալ մարդու համար:

Քաղաքական մանիպուլյացիայի համատեքստում առանձնացվում են ազդեցության երեք մակարդակներ:

– Միջանձնային մակարդակում մանիպուլյացիա իրականացնողը շփման պահին օգտագործում է իր անձնական ռեսուրսները, հոգեբանական կարողությունները մրցակցին մանիպուլացնելու համար: Նրա նպատակն է պայմաններ ստեղծել, որպեսզի անձը գործի հօգուտ իր շահերի, եթե նույնիսկ դա հակասում է այդ մարդու շահերին: Այս դեպքում գործի են դրվում տարբեր հոգեբանական հնարքներ:

– Խմբային մակարդակում մանիպուլյատորն արդեն փոխգործակցում է խմբի հետ՝ ունակ լինելով իր նպատակին ծառայեցնելու մարդու վարքագիծը կոլեկտիվ հարաբերություններում: Իր կամքին ենթարկեցնելով խմբին՝ նա օգտագործում է խմբի հնարավորությունները, գործում է խմբի անունից՝ այդ ընթացքում առաջ մղելով իր սեփական նպատակներն ու խնդիրները, և միևնույն ժամանակ հնարավորություն ունի բարդ իրավիճակներում հրաժարվելու պատասխանատվությունից՝ այն թողնելով խմբի վրա: Հաճախ բավականին դժվար է տարանջատել մանիպուլյացիա իրականացնողին խմբի լիդերից, քանի որ դա կարող է լինել միևնույն անձը, բայց լիդերը մշտապես գործում է խմբի շահերից ելնելով, իսկ մանիպուլյատորը՝ իր անձնական շահերին համապատասխան: Այդ պատճառով վերջինս ջանք է գործադրում՝

[9] **Пугачев В. П.** Введение в политологию. М., 2010, с. 66.

պահպանելու իր հեղինակությունը խմբի ներսում և դրանով իսկ խմբի անդամներին մղելու իր շահերի իրականացմանը:

– Զանգվածային մակարդակում հաղորդակցությունն իրականացվում է միջնորդների միջոցով: Մեր ժամանակներում այդպիսի միջնորդներ են ԶԼՄ-ները: Դրանց դերը մանիպուլյացիոն գործընթացում հատկապես կարևորվեց 20–րդ դարի կեսերին, երբ ի հայտ եկավ հեռուստատեսությունը, որի շնորհիվ հնարավոր դարձավ ունկնդրի վրա ազդել տեսողական պատկերների միջոցով: Հեռուստատեությունը ընդլայնում է քաղաքական մանիպուլյացիայի հնարավորությունները. տեղեկատվությունը ներկայացվում է մի քանի ալիքներով, ունի ազդեցության մեծ ներուժ, ստեղծվում է տպավորություն, որ գտնվում ես իրադարձությունների վայրում, ինչպես նաև վստահություն ես զգում տվյալ քաղաքական դերակատարի նկատմամբ:

Մանիպուլյացիոն տեխնոլոգիաների դերը արդի հասարակության քաղաքական կյանքում շարունակում է մնալ գիտության տարբեր ճյուղերի, հատկապես քաղաքագիտության, հոգեբանության և սոցիոլոգիայի ուշադրության կենտրոնում: Այն կոչված է «խրախուսել» մարդուն՝ կատարելու այնպիսի գործողություններ, որոնք չեն բխում իր շահերից. «Մանիպուլյացիան մարդկանց վարքի և հոգեբանության թաքնված կառավարում է՝ նպատակ ունենալով ստիպելու նրանց գործել (կամ հակառակը)՝ անկախ իրենց ներկայիս մտադրության»[10]:

Ինչպես տեսնում ենք, մանիպուլյացիան բազմաշերտ երևույթ է, հետևաբար դրա վերաբերյալ ուսումնասիրությունները[11] կարելի է դասակարգել մի քանի խմբի.

1) սոցիալ-հոգեբանական, որն ուսումնասիրում է մանիպուլյացիայի ազդեցությունը անձի հոգեբանության վրա,

2) քաղաքական, որի խնդիրն է պարզել քաղաքականության մեջ, հատկապես ընտրությունների ընթացքում կիրառվող մանիպուլյացիոն տեխնոլոգիաների ունեցած ազդեցությունը,

3) լրատվական, որի նպատակն է բացահայտել լրատվամիջոցների մանիպուլյատիվ ներուժն ու ազդեցությունը հանրային կարծիքի վրա:

Այսպիսով, մանիպուլյացիան իշխանություն իրականացնելու, գործադրելու տեխնոլոգիա է: Այն տիրապետում է միջոցների և հնարքների հարուստ զինանոցի: Քաղաքական շատ գործիչներ չեն զգուշանում բացեիբաց խաբելուց, օգտագործում են այսպես կոչված «մեծ սուտ», որն այնքան է կրկնվում, մինչև ընդունվում է որպես ճշմար-

---

[10] **Пугачев В. П.**, նշվ. աշխ., էջ 93:

[11] Տե՛ս **Зеленский С.** Манипуляции массами и психоанализ. СПб., 2008, **Le Bon G.** The Crowd: A study of popular mind. Minnesota, 2006, **Кара-Мурза С.** Манипуляция сознанием. М., 2000, **Цуладзе А.** Политические манипуляции, или Покорение толпы. М., 1999, **Riker W.** The art of political manipulation. Yale University press, 1986**, Parenti M.** Democracy for the Few. Boston 2010; **Graber D.** Mass Media and American Politics. Washington, 2010:

տություն: Ժողովրդավարական հասարակությունում գիտակից մարդկանց միջավայրում փաստացի սուտը «չի աշխատում», այդ պատճառով օգտագործվում է մասնակի սուտը, որը քողարկում է այն, ինչը կարող է մեծ խառնաշփոթ առաջացնել: Մյուս մեթոդը ճշմարտանման սուտն է, որի դեպքում հավաստի փաստերի ներքո քողարկվում է սուտը: Հաջորդը գովաբանվող սուտն է, որի դեպքում մարդկանց տրվում են անիրականանալի, բայց ցանկալի խոստումներ: Այս մեթոդը տարածված է հատկապես ընտրությունների ժամանակ: Կիրառվում է նաև մասնակի ճշմարտությունը. հաճախ հրապարակվում է «լիակատար ճշմարտությունը», այսպես կոչված՝ դառը ճշմարտությունը: Վերջինիս ընդունումը ուղեկցվում է արդարացումներով, որոնք ազդում են մարդկանց հոգեբանության վրա: Օրինակ, քաղաքական ղեկավարը հայտարարում է, որ իրեն մեղադրում են անհիմն, կամ ինքը իրավիճակի զոհ է՝ իրականում իր մեղքը թաքցնելով հանրությունից:

Բացի այդ, մանիպուլյացիա իրականացնելիս հատուկ ուշադրություն է դարձվում արժեքային ենթակայությանը: Սա արտահայտվում է հետևյալ կերպ. որոշակի պայմաններից ելնելով՝ քաղաքական գործիչները առաջ են քաշում «պրագմատիկ» կամ «հումանիստական» գաղափարներ և արժեքներ, ինչպես օրինակ՝ ազատություն, հավասարություն, արդարություն, հայրենասիրություն, խաղաղություն և այլն: Մանիպուլացումը ենթադրում է և՛ հարկադրված ազդեցության արժեքային արդարացում, և՛ հարկադրանքի ձևերի քողարկում: Տոտալիտար վարչակարգերը լայնորեն օգտագործում էին ահաբեկչություն սեփական ժողովրդի նկատմամբ և ստիպված էին լինում դրանք արդարացնել ու քողարկել: Այս ամենը հիմք է տալիս առանձնացնելու մանիպուլյացիայի երկու մոդելներ՝ հոգեբանական և ռացիոնալ: Հոգեբանական մոդելը ենթադրում է համապատասխան խթանիչների ընտրություն, որոնք կառաջացնեն այնպիսի ռեակցիա, որն անհրաժեշտ է մանիպուլյացիա իրականացնողին: Ռացիոնալ մոդելի պարագայում մանիպուլյացիան իրականացվում է ոչ թե հոգեբանական մոտիվների օգտագործմամբ, այլ խաբելու միջոցով:

Պետական մակարդակով իրականացվող հասարակական կարծիքի մանիպուլյացիան հիմնվում է այն բանի վրա, որ հանրային գիտակցության մեջ համակարգված «ներմուծվում» են սոցիալ-քաղաքական միֆեր, գաղափարներ, նորմեր, արժեքներ, որոնք պետք է ընդունվեն անվերապահորեն: Հասարակության ուշադրությունը հաճախ կենտրոնացնում են այնպիսի գլոբալ բացասական երևույթների վրա, ինչպիսիք են միջազգային ահաբեկչությունների սպառնալիքը, համաճարակները և այլն. սրանց հիմնական նպատակն է հանրության ուշադրությունը շեղել նրանց համար կենսական նշանակություն ունեցող խնդիրներից, օրինակ՝ ցածր աշխատավարձ, ինֆլյացիայի բարձր մակարդակ, աղքատություն և այլն:

Քաղաքական գործիչները մանիպուլյացիայի համար օգտագործում են հանրային հոգեբանության հետևյալ օրինաչափությունները:

1. Հանրային գիտակցությունը հասարակական-քաղաքական իրականության վերաբերյալ ունի համարժեք և ոչ այնքան համարժեք մոտեցում: Մի կողմից մշակույթի զարգացումը, կրթությունը, տեղեկացվածությունը նպաստում են մարդկանց ռացիոնալության աճին, մյուս կողմից՝ հասարակական կյանքի բարդացումը խանգարում է մարդուն ստեղծելու հանրային իրադարձությունների և խնդիրների համակարգված պատկեր: Արդյունքը լինում է այն, որ մարդիկ ճիշտ չեն ընկալում հասարակական-քաղաքական իրականությունը, և հենց այդ հանգամանքից օգտվելով՝ քաղաքական դերակատարը կարողանում է մանիպուլյացիայի ենթարկել հանրությանը:

2. Հանրային գիտակցությունը բնութագրվում է իրականության նկատմամբ դոգմաներով և քննադատությամբ: Ղեկավար ուժերը հիմնվում են այդ դոգմաների վրա և փորձում ամրապնդել իրենց իշխանությունը: Նրանք հանրության շրջանում ստեղծում են որոշակի կարծրատիպեր և դրանց վրա հիմնվելով՝ մանիպուլացնում: Այս ձևը բնորոշ է տոտալիտար և ավտորիտար ռեժիմներին:

3. Հանրային գիտակցության մեջ սովորույթների, ավանդույթների և նորարարությունների համակցումը մանիպուլյացիայի համար լայն հնարավորություններ է ստեղծում: Ավանդույթներին, սովորույթներին կարևորություն տալը ամրապնդում է քաղաքական իշխանությունը: Բայց քաղաքական մանիպուլյացիայի համար առավել կարևոր են միֆերը: Խորհրդային Միությունում, օրինակ, իշխանությունը կիրառում էր միֆեր կապիտալիզմի անխուսափելի փլուզման և կոմունիզմի՝ որպես կատարյալ հասարակության հաղթանակի, աշխատավոր դասակարգի կառավարող դերի մասին և այլն[12]:

Ցանկացած քաղաքական մանիպուլյացիայի հիմնական նպատակը իշխանության հասնելը, իրականացնելն ու այն պահպանելն է: Իշխանությունը կարելի է դիտարկել նեղ և լայն իմաստով: Նեղ իմաստով այն վերաբերում է ղեկավար և ենթակա հարաբերություններին, որոնք կրում են կամավոր կամ հարկադրական բնույթ: Լայն իմաստով մանիպուլյացիան կապված է իշխանության՝ որպես գործառույթի հետ, որն ուղղված է հասարակական կարգի կայունության և համակարգի սոցիալ-մշակութային նույնականության ապահովմանը: Այս իմաստով մանիպուլյացիա իրականացնելու նպատակը հասարակության անդամների վարքի կառավարումն է, հասարակության անդամների միջև ինտեգրացիան, նրանց շահերի համաձայնեցումը՝ օգտագործելով սոցիալապես ընդունված նորմերն ու արժեքները:

Ընդհանրացնելով պետք է նշել, որ մանիպուլյացիան՝

[12] Տե՛ս **Евгеньева Т. В.** Технологии социальных манипуляций и методы противодействия им. СПб., 2007, էջ 33-40:

– գիտակցված կառավարում է, այն մարդկության պատմության անբաժանելի ուղեկիցն է և գոյություն է ունեցել պատմական զարգացման բոլոր փուլերում,

– բազմաչափ երևույթ է: Այն անհրաժեշտ է դիտարկել ոչ միայն որպես բացասական երևույթ, այլ նաև որպես հասարակության զարգացման կարևոր տարր, որն ունի իր սեփական տրամաբանությունը, առաջացման պատճառները և հետևանքները,

– հոգեբանական ազդեցության ձև է, քանի որ մանիպուլյացիա իրականացնողի թիրախը անհատի հոգեբանական վիճակն է,

– դժվար բացահայտվող երևույթ է և շատ դեպքերում ապացուցման ենթակա չէ, քանի որ այն իրականացնողը կարող է ասել, որ գործել է դիմացինի շահերից ելնելով, չի հետապնդել վատ մտադրություններ: Հենց դա է այդ երևույթի դեմ պայքարելու դժվարությունը,

– բռնություն չէ, այլ «գայթակղություն»: Յուրաքանչյուր մարդու տրված է հոգու և ցանկության ազատություն: Ուրեմն նա պարտավոր է չտրվել «գայթակղությանը»,

– ազդեցություն է, որը պահանջում է բավականաչափ հմտություն և գիտելիք: Մարդկանց, ովքեր մանիպուլացվում են, վերաբերվում են ոչ թե որպես անձանց, այլ որպես յուրահատուկ առարկաների,

– գաղտնի ազդեցություն է, և այդ փաստը չպետք է բացահայտվի մանիպուլյացիայի օբյեկտի կողմից,

– հիմնականում իրականացվում է երեք ոլորտներում՝ գաղափարական (քարոզչություն), տնտեսական (գովազդ), սոցիալական: Վերջին տարիներին տարածում է գտել զանգվածային գիտակցության մանիպուլյացիան, որի իրականացման հիմնական գործիքը ԶԼՄ-ներն են:

Բանալի բառեր – *մանիպուլյացիոն կառավարում, մանիպուլյացիոն տեխնոլոգիաներ, քաղաքական մանիպուլյացիա, թաքնված կառավարում, հոգեբանական ազդեցություն, հանրային գիտակցություն, հասարակական կարծիք*

ЭДГАР КАЛАНТАРЯН – *Манипулятивные методы в системе управления.* – Современные общественные отношения по-новому влияют на человеческие взаимосвязи. С древности, когда ещё не существовало системы управления, наблюдался интерес к тому, как управлять массами людей и приводить их в повиновение. Особое значение для этого придавалось насилию, угрозам, принуждению, а также идеологии, харизме. В современном мире используются более тонкие приёмы влияния на массовое сознание. Эти приёмы не всегда видны и понятны общественности. Один из этих приёмов – управление манипуляцией, применяемое во всех сферах общественной жизни. Его следует рассматривать не только негативно. Это важный элемент социального развития, который выражается в трёх аспектах – идеологическом (пропаганда), экономическом (реклама), социальном.

Ключивые слова: *управление манипуляцией, манипулятивные технологии, политическая манипуляция, скрытое управление, психологическое воздействие, общественное сознание, общественное мнение*

EDGAR KALANTARYAN – *Manipulation Methods in the Management System.* – Modern public relations are more complicated and have a huge impact on current human interrelationships. Since the very beginning of human society, many have interested in governing the masses and made them oblige to their interests. So there are many mechanisms for that purpose, including the violence, threats, enforcement and etc., at the same time using the ideological impact and charisma. In the modern world, there are more subtle tricks to influence the minds of large social masses, which are not seen and perceived. Manipulation is used almost in all spheres of public life. It should be considered both as a negative and positive phenomenon and a necessary element of the social development process. But mainly, it is carried out in three areas: ideological (propaganda), economic (campaign), and social.

Key words: *manipulation management, techniques of manipulation, political manipulation, latent governance, psychological impact, public awareness, public opinion*

ԹՎԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ. ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

ՀԱՅԿՈՒՀԻ ՄԿՐՏՉՅԱՆ

Տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների արագընթաց զարգացումը և որպես դրա հետևանք՝ ժամանակակից համաշխարհային տեղեկատվական հասարակության ձևավորումն անխուսափելիորեն իրենց ազդեցությունն են թողել հասարակության ու պետության բոլոր ոլորտների, այդ թվում՝ արտաքին քաղաքականության վրա: Ներկայումս շատ պետություններ արտաքին քաղաքականության բնագավառում լայնորեն կիրառում են թվային դիվանագիտության ծրագրեր:

Թվային դիվանագիտությունը պետական մարմինների կողմից տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների՝ սոցիալական ցանցերի, բլոգների և նմանատիպ այլ մեդիա հարթակների կիրառումն է դիվանագիտական և արտաքին քաղաքական խնդիրներ իրականացնելու համար[1]: Հաճախ որպես հոմանիշներ կիրառվում են նաև «ինտերնետ-դիվանագիտություն», «սոցիալական ցանցերի դիվանագիտություն» և «վեբ 2.0. դիվանագիտություն» տերմինները:

Թվային դիվանագիտության հանդեպ ուշադրությունը հատկապես աճեց Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի երկրներում զանգվածային բողոքի ալիքներից հետո, որոնք լրատվամիջոցներում ստացան «twitter-հեղափոխություն» անվանումը:

2011 թ. գարնանը Թունիսում և Եգիպտոսում համացանցի ու շարժական միջոցների օգնությամբ երիտասարդական խմբերը զանգվածային բողոքներ ձեռնարկեցին: Ներքին ընդդիմությունը սոցցանցերն օգտագործեց համախոհներ համախմբելու համար, թեև հայտնի է, որ twitter-ի հաղորդագրությունների 70 %-ը տեղադրվել էին IP հասցեներից, որոնք ստեղծվել էին արտասահմանյան սերվերների վրա: Սա վկայում է «արաբական գարնան» ժամանակ արտաքին տեղեկատվական միջամտության մասին, որի տեխնիկական հնարավորությունն ուներ միայն ԱՄՆ-ը:

Վերոհիշյալ իրադարձություններից հետո հրապարակվեցին գիտական բազմաթիվ հոդվածներ, որտեղ քննարկվեց սոցիալական ցանցերի ու նոր մեդիայի ազդեցությունը համաշխարհային քաղաքականության վրա: ԱՄՆ պետքարտուղարի՝ նորարարության հարցերով ա-

[1] Տե՛ս **Цветкова Н**. Программы Web 2.0 в публичной дипломатии США // "США и Канада: Экономика, политика, культура", 2011, № 3, էջ 109-122:

վագ խորհրդական Ալեքս Ռոսը Մերձավոր Արևելքի հեղափոխական իրադարձություններում սոցիալական ցանցերի դերը կարևոր, բայց ոչ առաջնային համարեց: Վերոհիշյալ իրադարձությունների խորքային պատճառները, ըստ նրա, պայմանավորված էին այդ երկրներում սոցիալ-տնտեսական, քաղաքական ու կրոնական որոշակի իրավիճակներով, իսկ սոցցանցերը ընդամենը զանգվածային բողոքների կատալիզատորներ էին:

Թվային դիվանագիտության փիլիսոփայական հիմքերը շարադրված են Ան-Մերի Սլոթերի աշխատանքներում, ով 2009-2011 թթ. զբաղեցրել է ԱՄՆ պետդեպարտամենտի քաղաքական պլանավորման տնօրենի պաշտոնը: Ըստ նրա՝ այն պետությունները, որոնք տիրապետում են տեղեկատվական ու հաղորդակցային զանազան միջոցների, հնարավորություն ունեն թելադրելու համաշխարհային քաղաքական օրակարգը[2]:

Մանուել Կաստելսի կարծիքով, թվային դիվանագիտությունը պետք է դիտարկել որպես նոր հնարավորությունների աղբյուր ժամանակակից գլոբալ խնդիրների լուծման համար, որի ծավալն անհամեմատելի է առանձին պետության հնարավորությունների ու ռեսուրսների հետ[3]: Հեղինակի կարծիքով, հենց տեղեկատվական ցանցերն ու սոցիալական լրատվամիջոցներն են համաշխարհային քաղաքացիական հասարակության ձևավորման և գլոբալ քննարկումների հնարավորություն ընձեռում: Այս համատեքստում թվային դիվանագիտության ծրագրերը, նպաստելով համաշխարհային միասնական տեղեկատվական տարածաշրջանի ձևավորմանը, նպաստում են նաև աշխարհի բոլոր երկրներին հատուկ խնդիրների ու ճգնաժամերի լուծմանը:

Փափուկ ուժի հայեցակարգի հեղինակ Ջոզեֆ Նայը գտնում է, որ տեղեկատվության համաշխարհայնացման դարաշրջանում միջազգային քաղաքականության մեջ փոխակերպվում է հենց իշխանության բովանդակությունը, որն արդեն հիմնվում է ոչ թե ռազմական, այլ տեղեկատվական ռեսուրսների վրա: Ըստ այդմ, տեղեկատվական դարաշրջանում կհաղթի նա, ով ի վիճակի կլինի իրեն դրականորեն ներկայացնել[4]: Այսօր հենց դրան են ուղղված Միացյալ Նահանգների թվային դիվանագիտության ծրագրերը:

Առաջին անգամ թվային դիվանագիտությունը կիրառվել է ԱՄՆ-ում՝ ի թիվս հրապարակային դիվանագիտության այլ ձևերի, ինչպիսիք են՝ տեղեկատվական ծրագրերը, կրթական փոխանակումները, մշակութային ու սպորտային նախագծերը:

---

[2] Տե՛ս **Slaughter A.-M.,** America's Edge. Power in the Networked Century // https://www.foreignaffairs.com/articles/united-states/2009-01-01/americas-edge (վերջին մուտքը՝ 10.06.2016թ.):

[3] Տե՛ս **Castells M.**, The New Public Sphere: Global Civil Society, Communication Networks, and Global Governance // The Annals of American Academy of Political and Social science, 2008, № 616, էջ 78-93 (http://prtheories.pbworks.com/w/file/fetch/45138545/Castells_2008_The_New_Public_Sphere.pdf) (վերջին մուտքը՝ 10.06.2016թ.):

[4] Տե՛ս **Nye, J. S.,** The Future of Power. NY, 2011, էջ 3-24:

Մինչ այդ ԱՄՆ-ի հրապարակային դիվանագիտությունը իրականացվել է «փափուկ» և «խելացի» ուժերի հայեցակարգերի հիման վրա, որոնց հիմքում եղել է ԱՄՆ կառավարության ձգտումը՝ մեծացնել արտասահմանում ամերիկյան արժեքներ կրող քաղաքացիների շրջանակը և նրանց ներգրավել Վաշինգտոնի կողմից առաջարկված համաշխարհային հասարակական ու քաղաքական գործընթացներում: Ավելի ուշ անհրաժեշտություն առաջացավ որոշակի թիրախային խմբերի հասցնել ԱՄՆ միջազգային դիրքորոշումը, ինչին օգնության եկան թվային դիվանագիտության ծրագրերը:

ԱՄՆ կառավարությունը «թվային դիվանագիտություն» հասկացությունը սահմանում է որպես ԱՄՆ կառավարության դիվանագիտական պրակտիկայում արտասահմանյան օգտատերերի հետ համացանցի միջոցով ամերիկյան դիվանագետների փոխգործունեություն ապահովելու միջոց[5]: ԱՄՆ-ում այն նախատեսված ոչ թե արտասահմանյան քաղաքական ու դիվանագիտական էլիտայի հետ փոխգործունեության համար է, այլ բնակչության մեծ հատվածներին գործնական դիվանագիտության մեջ ընդգրկելու նպատակ է հետապնդում:

Թվային դիվանագիտության ծրագրերը ԱՄՆ-ում զարգացման են հասել 2002-2003 թթ., երբ Ջորջ Բուշ Կրտսերի վարչակարգը միջազգային հեռարձակման ռադիո-հեռուստատեսային ավանդական մեթոդներից անցում կատարեց համացանց:

2010 թ. Հիլարի Քլինթոնը հանդես եկավ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության բնագավառում ծրագրային նոր՝ «Քսանմեկերորդ դարում պետական կառավարում» նախաձեռնությամբ, որի կարևոր ուղղություններից է թվային դիվանագիտությունը: Ծրագրի համաձայն՝ զարգացող երկրներում տեխնոլոգիաների որակական բարելավումը և համացանցի օգտատերերի զգալի աճը ԱՄՆ-ից պահանջում են արտաքին քաղաքականության մեթոդների փոփոխություն՝ օգտագործելով ժամանակակից տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների հնարավորությունները: Ընդհանուր առմամբ, ըստ նախագծի, թվային դիվանագիտությունը պետք է լուծի երկու կարևոր խնդիր՝ նպաստի Պետդեպարտամենտի աշխատանքների կատարելագործմանը և այլ երկրների սոցիալ-քաղաքական գործընթացների վրա ամերիկյան ազդեցության ուժեղացմանը՝ տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների ողջ հնարավորությունների օգտագործմամբ[6]:

2010-2011 թթ. Սպիտակ տունը հրապարակեց պաշտոնական մի քանի փաստաթղթեր, որոնք սահմանում էին թվային դիվանագիտութ-

---

[5] Տե՛ս U. S. State Department 2016. «21st Century Statecraft» // http://www.state.gov/statecraft (վերջին մուտքը՝ 10.06.2016թ.), U.S. State Department 2016. «IT Strategic Plan: Fiscal Years 2011-2013: Digital Diplomacy» // http://www.state.gov/m/irm/rls/148572.htm (վերջին մուտքը՝ 10.06.2016թ.):

[6] Տե՛ս նույն տեղը:

յան ուղղությունները: Դրանց թվում հատկանշական է «Հրապարակային դիվանագիտություն. աշխարհի հետ ԱՄՆ-ի փոխգործունեության ամրապնդում» փաստաթուղթը[7], որտեղ ներկայացվել են ԱՄՆ թվային դիվանագիտության խնդիրները, որոնցից են՝

- ԱՄՆ գաղափարական հակառակորդների վարկաբեկում,
- համացանցում Չինաստանի տեղեկատվական գործունեությանը հակազդում,
- նախկին ԽՍՀՄ տարածքում Ռուսաստանի մեդիա ներկայության սահմանափակում,
- սոցցանցերի միջոցով Իրանի արտաքին մշակութային քաղաքականությանը հակազդեցություն:

Թվային դիվանագիտությանը վերաբերող այլ փաստաթղթեր մշակվել են 2010 թ. սեպտեմբերին Հիլարի Քլինթոնի՝ նորարարության հարցերով ավագ խորհրդական Ալեքս Ռոսի կողմից. օրինակ՝ «2011-2013 թթ. տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ռազմավարական պլան. թվային դիվանագիտություն»[8], որտեղ հստակեցվել են թվային դիվանագիտության ուղղությունները Վաշինգտոնի արտաքին քաղաքական առաջնայնությունների համատեքստում: Այստեղ որպես գերակայություններ էին նշվում միջազգային անվտանգության ապահովումը և արտասահմանում ԱՄՆ-ի դրական կերպարի ձևավորումը: Մյուս ծրագիրը՝ «Քսանմեկերորդ դարում պետության կառավարման արվեստ»[9] վերնագրով, թվային դիվանագիտությունը դիտում է որպես քաղաքացիական ակտիվիստներ ներգրավելու և նրանց վրա ազդելու միջոց:

Ընդհանուր առմամբ, ԱՄՆ-ում թվային դիվանագիտության ծրագրերի վերաբերյալ բոլոր փաստաթղթերը կոչված են ապահովելու համաշխարհային տեղեկատվական տարածքում ԱՄՆ-ի առաջնայնությունը: Ենթադրվում է, որ այդ ծրագրերով Վաշինգտոնը պետք է գրանցի հետևյալ թիրախային նպատակները՝

- բարձրացնի պետդեպարտամենտի աշխատանքի արդյունավետությունը,
- բարձրացնի պետական քարոզչության արդյունավետությունը. ուղիղ մուտք ունենա փակ պետությունների լսարան, նվազագույնի հասցնի ծախսերը, ընդգրկի երիտասարդությանը և հասարակության ավելի զգայուն շերտերին,
- ընդլայնի արտասահմանյան երկրների ներքին գործերին միջամտելու հնարավորությունները,
- ստեղծի արտասահմանյան երկրների տնտեսական ու պետական կառավարման մասին լայնածավալ տեղեկատվություն ստանալու պայմաններ:

---

[7] Տե՛ս նույն տեղը:
[8] Տե՛ս նույն տեղը:
[9] Տե՛ս նույն տեղը:

Կարևորելով թվային դիվանագիտության դերն ու ազդեցությունը համաշխարհային քաղաքականության վրա՝ այսօր շատ պետություններ ևս լայնորեն օգտագործում են դրա հնարավորությունները: Օրինակ, Բրիտանիայի արտաքին գործերի և համագործակցության նախարարությունում ստեղծվել է թվային դիվանագիտության գրասենյակ[10], որն ակտիվորեն մասնակցում է արտաքին քաղաքական օրակարգի մշակմանը:

Հետխորհրդային տարածաշրջանի երկրներից թվային դիվանագիտության ծրագրերում առաջատարը Ռուսաստանն է: 2012 թ. հունիսին դիվանագետների հետ հանդիպման ժամանակ ՌԴ նախագահը նրանց կոչ է արել ՌԴ դիրքորոշումն արտահայտելու ժամանակ ավելի հաճախակի օգտվել տարբեր հարթակների նորագույն տեխնոլոգիաներից, այդ թվում՝ սոցիալական ցանցերից[11]: Այսօր արդեն ՌԴ արտաքին գործերի նախարարությունը բոլոր ցանկացողներին հնարավորություն է ընձեռում սոցցանցերում հետևելու արտաքին քաղաքականության իրադարձություններին՝ մասնավորապես օգտագործելով facebook-ի և twitter-ի հարթակները: Ավելին, ըստ թվային դիվանագիտության 2016 թվականի դասակարգման (Digital Diplomacy-2016)՝ Ռուսաստանը զբաղեցնում է չորրորդ հորիզոնականը ԱՄՆ-ից, Մեծ Բրիտանիայից ու Ֆրանսիայից հետո[12]:

Ռուսաստանյան թվային դիվանագիտության ավելի հեռանկարային ուղղություններից է հայրենական տեխնոլոգիական բիզնեսի ընդգրկումը հրապարակային դիվանագիտության ոլորտի նախագծերում: Այս ուղղությամբ առաջին քայլերն արդեն արվել են. ստեղծվել է «Яндекс» ռուսալեզու որոնողական կայքը, «Вконтакте» սոցիալական կայքը, որը հայտնի է ոչ միայն Ռուսաստանում, այլև արտասահմանյան շատ երկրներում, ներառյալ՝ ԱՊՀ երկրներ, Իսրայել, Գերմանիա, ԱՄՆ: Ռուսաստանում ստեղծվել են նաև պետական պաշտոնյաների ու դիվանագետների ռուսերեն և անգլերեն լեզուներով բլոգներ, պետական մարմինների պորտալներում պարբերաբար հրապարակվում է նրանց գործունեությունը լուսաբանող տեղեկատվություն:

Կարևորելով թվային դիվանագիտության ընձեռած հնարավորությունները և միջազգային քաղաքականության մեջ դրա դերը՝ 2015 թ. մայիսի 11-ին Երևանում մեկնարկել է ԱԳՆ դիվանագիտական դպրոցի կազմակերպած «Թվային դիվանագիտություն. հեռանկարներ և մարտահրավերներ» միջազգային գիտաժողովը, որի ժամանակ ՀՀ արտ-

---

[10] Տե՛ս Foreign & Commonwealth Office 2016. «Digital Diplomacy. The FCO's digital work» // http://blogs.fco.gov.uk/digitaldiplomacy (վերջին մուտքը՝ 10.06.2016թ.):

[11] Տե՛ս **Пермякова Л.** Цифровая дипломатия: направления работы, риски и инструменты (27.09.2012) // http://russiancouncil.ru/inner/?id_4=862#top-content (վերջին մուտքը՝ 10.06.2016թ.):

[12] Տե՛ս РосКомСвобода 2016. «Россия вошла в ТОП международного рейтинга Digital Diplomacy 2016» // https://rublacklist.net/17137 (վերջին մուտքը՝ 10.06.2016թ.):

գործնախարար Էդվարդ Նալբանդյանը մասնավորապես նշել է. «Թվային դիվանագիտությունը, օգտվելով տեխնոլոգիական նվաճումներից և ստեղծված հնարավորություններից, լրացուցիչ հարթակ է ստեղծում դիվանագետների համար՝ իրենց գործառույթները իրականացնելու նպատակով, ինչպես նաև՝ հասարակությունների առջև հաշվետու լինելու գործում: Հրատապ զարգացումներին արագ արձագանքելը և քաղաքացիների՝ գնալով աճող հարցումներին անմիջապես պատասխանելը ներկայումս դառնում են դիվանագիտական ծառայության առաջնային պարտականություններից»[13]: Ըստ նախարարի՝ դիվանագիտական ծառայության մարմինները կարող են ավելի հաջողակ լինել իրենց երկրների ազգային շահերին ծառայելու հարցում՝ տեխնոլոգիական առաջընթացից լավագույնս օգտվելու դեպքում: Այս համատեքստում արտաքին ծառայության կադրեր պատրաստող հաստատությունների կարևոր առաքելությունն է թվային դիվանագիտություն իրագործելու նպատակով կրթել և վերապատրաստել գործող դիվանագետներին:

Ըստ թվային դիվանագիտության 2016 թվականի դասակարգման (Digital Diplomacy-2016)՝ նախկին ԽՍՀՄ տարածաշրջանի երկրներում (չհաշված Մերձբալթյան երկրները) Հայաստանը զբաղեցնում է երրորդ հորիզոնականը՝ Ռուսաստանից և Ուկրաինայից հետո[14]: Համաշխարհային մասշտաբով Հայաստանը զբաղեցնում է 52-րդ հորիզոնականը[15]: Հայաստանի արտաքին գործերի նախարարությունը պետական գերատեսչություններից առաջինն էր, որ Youtube-ում բացեց իր պաշտոնական ալիքը և իր պաշտոնական էջերը facebook-ում և twitter-ում: Ի դեպ, չպետք է նույնացնել «թվային դիվանագիտություն» և «թվի դիվանագիտություն» (Twiplomacy) հասկացությունները, քանզի վերջինս թվային դիվանագիտության միայն մի բաղկացուցիչն է: Հենց twitter-ն է այն կարևոր գործիքներից մեկը, որով պետությունը կարող է համացանցում մեծացնել իր ներկայությունն ու ազդեցությունը, ճշմարիտ տեղեկատվություն տրամադրել արտասահմանյան լսարանին:

2016 թ. ապրիլի 2-5-ը հայ-ադրբեջանական քառօրյա պատերազմն ապացուցեց, որ ներկայիս տեղեկատվական դարաշրջանում իսկապես կարևոր են տեղեկատվական տեխնոլոգիաները: Պատերազմի առաջին օրերին հակառակորդ Ադրբեջանի բացած սոցիալական ցանցերի բազմաթիվ կեղծ պրոֆիլները միտված էին հայերից տեղեկատվություն ստանալուն և ապատեղեկատվություն տրամադրելուն: Հենց այդ օրերին ավելի ակնառու դարձավ տեղեկատվական տեխնոլոգիաներին տիրապետելու և դրանցով ճիշտ աշխատելու անհրաժեշտությունը:

---

[13] «Երևանում մեկնարկեց «Թվային դիվանագիտություն. հեռանկարներ և մարտահրավերներ» միջազգային համաժողովը» (11.05.2015) // http://www.mfa.am/hy/ press-releases/item/2015/05/11/min_edip_arm (վերջին մուտքը՝ 10.06.2016թ.):

[14] Տե՛ս РосКомСвобода 2016. «Россия вошла в ТОП международного рейтинга Digital Diplomacy 2016» // https://rublacklist.net/17137 (վերջին մուտքը՝ 10.06.2016թ.):

[15] Տե՛ս նույն տեղը:

Ճիշտ է, վերջին շրջանում իրականացվել են մի շարք միջոցառումներ Հայաստանի Հանրապետության տեղեկատվական քաղաքականության և տեղեկատվական անվտանգության ապահովման բարելավման ուղղությամբ, սկսվել է տեղեկատվական անվտանգության իրավական նորմատիվային դաշտի ձևավորումը, 2009 թ. ընդունվել է ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգը[16], որը տեղեկատվական անվտանգության ապահովման նպատակների, խնդիրների, սկզբունքների և հիմնական ուղղությունների նկատմամբ պաշտոնական մոտեցումների համակարգ է և հիմք է ՀՀ տեղեկատվական անվտանգության ապահովման բնագավառում պետական քաղաքականության հիմնական ուղղությունների և գերակայությունների մշակման և իրագործման համար, բխում է ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունից[17], սակայն ՀՀ տեղեկատվական անվտանգության իրավիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրա մակարդակը դեռևս չի համապատասխանում հասարակության և պետության ներկայիս պահանջներին:

Նոր մարտահրավերների պայմաններում Հայաստանի արդյունավետ զարգացման համար անհրաժեշտ են թվային բնագավառում նոր արտաքին քաղաքական նախագծեր՝ ուղղված «փափուկ» ուժի ամրապնդմանը և գիտության, տեխնոլոգիաների ու կրթության զարգացմանը: Թվային դիվանագիտությունը կարող է դառնալ համաշխարհային թատերաբեմում ազգային շահերը առաջ մղելու միջոց, եթե մտավոր, տեխնոլոգիական ու կազմակերպչական բավարար ռեսուրսներ ներդրվեն: Այդ իսկ պատճառով պետական մարմինների ջանքերի ակտիվացումն այդ բնագավառում պետք է ամենամոտ ապագայում դիտվի առաջնային:

Այսպիսով, թվային դիվանագիտության շնորհիվ է, որ հնարավորություն է ընձեռվում ուղիղ կապ հաստատել և հատուկ հաղորդագրություններ ուղարկել անմիջապես թիրախային լսարանին, ինչպես նաև համագործակցել կարծիք ձևավորողների հետ: Բացի այդ, թվային դիվանագիտությունը հատկապես արդյունավետ է արտասահմանյան լսարանի հետ աշխատելիս, երբ անհրաժեշտություն կա ձևավորելու պետության իմիջը կամ փոխանցելու պաշտոնական դիրքորոշումը: Թվային դիվանագիտությունը կոչված է արագորեն տրամադրելու համապատասխան տեղեկատվություն, հերքելու կեղծ տեղեկությունները, հաստատելու պաշտոնական աղբյուրների տեղեկատվությունը: Ընդ որում, թվային դիվանագիտությունը՝ որպես համացանցով այլ պետությունների բնակչության վրա ազդեցության միջոց, հիմնակա-

[16] Տե՛ս ՀՀ նախագահի կարգադրությունը «ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգը հաստատելու մասին» // http://www.arlis.am/documentview.aspx?docID=52559 (վերջին մուտքը՝ 10.06.2016թ.):

[17] Տե ս նույն տեղը:

նում ուղղված է թիրախային երկու խմբի՝ ակտիվ երիտասարդությանը և հասարակության ընդդիմադիր խավին՝ լրագրողներ, իրավապաշտպաններ և այլն:

Չնայած թվային դիվանագիտության ընձեռած օբյեկտիվ հնարավորություններին՝ գործնականում դրա զարգացման հարցերը հաճախ դիտարկվում են ռիսկերի ու սպառնալիքների համատեքստում: Ի հայտ են գալիս նոր, ոչ ռազմական սպառնալիքներ, ինչպիսիք են կիբեռհանցագործությունները և կիբեռահաբեկչությունները, որոնք պետք է լուծվեն ընդհանուր տեղեկատվական անվտանգության համատեքստում:

Համացանցը հաճախ դիտվում է որպես ուրիշի գաղափարախոսության և արտաքին քաղաքականության գովազդ, որպես տեղեկատվական պատերազմներ վարելու միջոց: Բացի այդ, հակերությունը ևս այն սպառնալիքներից է, որը ի հայտ է եկել համացանցի հետ միաժամանակ: Ուստի ժամանակակից պետությունների համար տեղեկատվական անվտանգությունը ապահովելը դառնում է ազգային անվտանգության կարևորագույն բաղկացուցիչը:

Բանալի բառեր – *թվային անվտանգություն, «փափուկ» ուժ, արտաքին քաղաքական նախագծեր, տեղեկատվական հասարակություն, տեղեկատվական անվտանգություն*

АЙКУИ МКРТЧЯН – *Цифровая дипломатия: возможности и перспективы.* – Стремительное развитие информационных и коммуникативных технологий в результате глобального формирования информационного общества неизбежно влияет на все сферы жизни, в том числе внешнюю политику. В настоящее время многие страны во внешнеполитических отношениях и дипломатии широко используют цифровые приложения. Новые вызовы открывают для Армении, как и для других стран, новые возможности.

Ключевые слова: *цифровая дипломатия, мягкая сила во внешней политике, информационное общество, информационная безопасность*

HAYKUHI MKRTCHYAN – *Digital Diplomacy: Opportunities and Perspectives.* – The rapid development of information and communication technologies as a result of the global development of the information society inevitably affects the state of society and in all areas, including foreign policy. Currently, many countries in the field of foreign policy and diplomacy are widely using digital applications. In the context of new challenges, new requirements aimed at strengthening the soft power in various fields of cooperation are needed in the field of the foreign policy of Armenia.

Key words: *digital diplomacy, soft power, foreign policy, information society, information security*

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ
INFORMATION ABOUT THE AUTHORS

1. **Գեղամ Պետրոսյան –** պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկան
   Гегам Петросян – доктор исторических наук, профессор, декан факультета международных отношений ЕГУ
   Gegham Petrosyan – Sc. D. in History, Professor, Dean of the faculty of International Relations, YSU
   էլ. փոստ՝ gegham.petrosyan@ysu.am
2. **Մարութ Վարդազարյան** – քաղաքագիտության թեկնածու, դոցենտ, ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի վարիչ
   Марут Вардазарян – кандидат политических наук, доцент, заведующий кафедрой международных отношений и дипломатии ЕГУ
   Marut Vardazaryan – PhD, Associate Professor, Head of the Chair of International Relations and Diplomacy, YSU
3. **Լուսինե Պետրոսյան** – ԵՊՀ դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի ասիստենտ,
   Лусине Петросян – ассистент кафедры дипломатической службы и специализированной коммуникации ЕГУ
   Lusine Petrosyan – Assistant Professor of the Chair of Diplomatic Service and Communication,YSU
   էլ. փոստ՝ petrosyanlusine.76@gmail.com
4. **Նաիրա Ղազարյան** – ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դասախոս
   Наира Казарян – преподаватель кафедры международных отношений и дипломатии ЕГУ
   Naira Ghazaryan – Lecturer of the Chair of International Relations and Diplomacy, YSU
5. **Աշոտ Ալեքսանյան –** քաղաքագիտության թեկնածու, ԵՊՀ քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի դոցենտ
   Ашот Алексанян – кандидат политических наук, доцент кафедры теории и истории политической науки ЕГУ
   Ashot Aleksanyan – PhD, Associate Professor of the Chair of Theory and History of Political Science, Faculty of International Relations, YSU
   էլ-փոստ՝ ashalex@ysu.am
6. **Էդգար Քալանթարյան** – քաղաքագիտության թեկնածու, հանրային կառավարման ամբիոնի դոցենտ, ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկանի տեղակալ
   Эдгар Калантарян – кандидат политических наук, доцент кафедры государственного управления, заместитель декана факультета международных отношений ЕГУ
   Edgar Kalantaryan – PhD, Associate Professor of the Chair of Public Administration, Deputy Dean of the Faculty of International Relations, YSU
   էլ-փոստ՝ edgar.kalantaryan@ysu.am
7. **Հայկուհի Մկրտչյան** - ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի դասախոս
   Айкуи Мкртчян – преподаватель кафедры политических институтов и процессов ЕГУ
   Haykuhi Mkrtchyan - Lecturer of the Chair of Political Institutes and Processes, YSU
   էլ. հասցե՝ h.mkrtchyan@ysu.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ✵ СОДЕРЖАНИЕ ✵ CONTENTS

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ
INTERNATIONAL RELATIONS

Գեղամ Պետրոսյան – Անդրկովկասի ներքին և արտաքին քաղաքական իրավիճակը (1917 թ. հոկտեմբեր - 1918 թ. փետրվար) 3
Гегам Петросян – Внутри- и внешнеполитическая ситуация на Южном Кавказе (октябрь 1917 – февраль 1918)
Gegham Petrosyan – Internal and External Political Situation in the South Caucasus (October 1917 - February 1918)

Մարուտ Վարդազարյան – ՌԴ քաղաքակրթական նույնականացման հիմնախնդիրն արտաքին քաղաքականությունում..... 15
Марут Вардазарян – Проблема цивилизационной идентификации РФ во внешней политике
Marut Vardazaryan – Civilization Identification Problem of the Russian Federation in the Foreign Policy

Լուսինե Պետրոսյան – Հայաստան-Իրան տնտեսական հարաբերությունները (1991-2008 թթ.)..... 36
Лусине Петросян – Армяно-иранские экономические отношения (1991-2008)
Lusine Petrosyan – Armenian-Iranian Economic Relations (1991-2008)

Նաիրա Ղազարյան – Հայաստանի Հանրապետության իշխանությունների դիրքորոշումը հայկական սփյուռքի և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության հանդեպ (1990-ական թվականների առաջին կես)..... 43
Наира Казарян – Позиция властей РА по отношению к армянской диаспоре и Киликийскому католикосату (1-я половина 1990-х гг.)
Naira Ghazaryan – Position of the Authorities of the Republic of Armenia in Relation to the Armenian Community and the Catholicosate of the Great House of Cilicia (the first half of the 1990s)

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ПОЛИТОЛОГИЯ
POLITICAL SCIENCE

Աշոտ Ալեքսանյան – Ցիվիլիարխիայի ինդեքսի մշակման փորձ 52
Ашот Алексанян – Попытка разработать индекс цивилиархии
Ashot Aleksanyan – An Attempt to Develop an Index of Civiliarchy

Էդգար Քալանթարյան – Մանիպուլյացիոն մեթոդները կառավարման համակարգում..... 68
Эдгар Калантарян – Манипулятивные методы в системе управления
Edgar Kalantaryan – Manipulation Methods in the Management System

Հայկուհի Մկրտչյան – Թվային դիվանագիտություն. հնարավորություններ և հեռանկարներ 78
Айкуи Мкртчян – Цифровая дипломатия: возможности и перспективы
Haykuhi Mkrtchyan – Digital Diplomacy: Opportunities and Perspectives

Տեղեկություններ հեղինակների մասին..... 86
Сведения об авторах
Information about the Authors

Հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից:
Իրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի:
Журнал выходит три раза в год. Издается с 2010 года. Правонаследник издававшегося
в 1967-2009 гг. журнала "Вестник Ереванского университета".
The Bulletin is published thrice a year. It has been published since 2010. It is the successor
of "Bulletin of Yerevani University" published in 1967-2009.

Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1, 107
Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1, 107
Address: 1, 107, Alek Manoukian str., Yerevan

Հեռ. 060 710 218, 060 710 219

Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am
Կայք՝ ysu.am

Վերստուգող սրբագրիչ՝ Գ. Գրիգորյան
Контрольный корректор Г. Григорян
Proofreader G. Grigoryan

Համակարգչային ձևավորում՝ Մ. Աբգարյան
Компьютерная верстка М. Абгарян
Computer designer M. Abgaryan

Ստորագրված է տպագրության 10. 09. 2016:
Տպաքանակ՝ 100: Չափսը՝ 70x108 1/16: Թուղթ՝ օֆսեթ:
Տպագրական 5,5 մամուլ: